ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ո Ւ Ղ Ե Ց Ո Ւ Յ Ց

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ

- *ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ*
- *ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ*
- *ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ*

ԳԻՐՔ Ա

ԵՐԵՎԱՆ
ԵՊՀ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2017

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.2Հ
Ու 439

Ուղեցույցը հրատարակության է պատրաստվել ՀՀ ԳՊԿ դրամաշնորհով (գիտական թեման՝ «Արդի հայերեն. զարգացման և կանոնարկման հիմնախնդիրներ»):

Հրատարակության են երաշխավորել ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի գիտական խորհուրդը և հայոց լեզվի ամբիոնը:

Հեղինակներ՝ *Յու. Ս. Ավետիսյան, Լ. Գ. Թելյան, Լ. Ս. Սարգսյան, Լ. Վ. Ավետիսյան*

Գիտական խորհրդատուներ՝
Յու. Մ. Սուվարյան (պ. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս), Հ. Ղ. Միրզոյան (փ. գ. դ., պրոֆ.), Ա. Հ. Գաբուզյան (ի. գ. դ., պրոֆ.)

Խմբագիրներ՝ *Յու. Ս. Ավետիսյան (բ. գ. դ., պրոֆ.), Մ. Հ. Ֆելեքյան (բ. գ. թ., դոց.)*

Ու 439 Ուղեցույց հայոց լեզվի: Հնչյունաբանություն, բառագիտություն և քերականություն: Գիրք Ա: -Եր.: ԵՊՀ հրատ., 2017, 222 էջ:

Ուղեցույցն ընդգրկում է արդի գրական հայերենի գրեթե բոլոր ոլորտներին վերաբերող գործնական նյութեր, բառացանկեր: Լեզվական իրողությունների ամփոփ բացատրությունները, որոշ նմուշներն ու օրինակները միտված են ուղեցույցից օգտվելը առավել դյուրին դարձնելուն:
Գիրքը նախատեսված է բոլոր նրանց համար, ովքեր գործածում են գրական հայերենը:

ՀՏԴ 811.19
ԳՄԴ 81.2Հ

ISBN 978-5-8084-2229-2

© ԵՊՀ հրատ., 2017
© Հեղ. խումբ, 2017

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Տեսական նյութի իմացությունը միակ անվերապահ պայմանը չէ տվյալ լեզվի նրբություններին տիրապետելու, ճիշտ ու գրագետ հաղորդակցվելու համար: Երբեմն լեզվական իրողությունների որոշակի նմուշներն ու օրինակները ավելի տեսանելի են դարձնում լեզվամիավորի գործածության յուրահատկությունները, իսկ հաճախ էլ լեզվակիրառողի համար գործնականում շատ հարմար է լինում պարզապես օգտվել ձեռքի տակ եղած ուղեցույցներից կամ բառացանկերից:

Այդպիսի ձեռնարկումներ եղել են մեզանում. լեզվակիրառողին առաջարկվել են հայոց լեզվի առանձին ոլորտների վերաբերյալ բառացանկեր, քերականական ուղեցույցներ, որոշումների ժողովածուներ ևն:

Մեր այս ուղեցույցը այդպիսի ձեռնարկումներից է, բայց նախորդներից առանձնանում է որոշ յուրահատկություններով:

1. Այստեղ ընտրողաբար զետեղված են հայերենի գրեթե բոլոր ոլորտներին վերաբերող գործնական նյութեր՝ ուղղախոսությունից մինչև շարահյուսական կառույցներ:

2. Ամփոփված է վերջին տասնամյակներին արդի գրական արևելահայերենում կատարված տեղաշարժերի գործնական նկարագրությունը՝ փոփոխություններ ար-

տասանական համակարգում, տեղաշարժեր բառապաշարում, օտար բառերի և հայերեն համարժեքների գործածության յուրահատկություններ, զարգացումներ քերականական համակարգում՝ ձևաբանական կարգերի արտահայտության մեջ, շարահյուսական կառույցներում և այլուր:

3. Մեր գործնական դիտարկումները և բառացանկերի կազմության սկզբունքները ոչ միայն հիմնված են հրապարակի վրա եղած քիչ թե շատ հայտնի մասնագիտական գրականության վրա (մենագրություններ, տեղեկատու ուղեցույցներ, բառարաններ ևն), այլև թելադրվում են կենդանի գրական լեզվի տվյալներով, գրականությունից քաղված համապատասխան նյութով և, իհարկե, **Արևակ** (Արևելահայերենի ազգային կորպուս) կայքէջի ընձեռած վիճակագրական առատ փաստերով: Վերջինը ոչ միայն վիճակագրության համար հարուստ և անփոխարինելի շտեմարան է (110 մլն բառամթերք), այլև իր տեսակով լինելով նոր ժամանակների ծնունդ (2008 թ.)՝ լեզվական շատ ու շատ իրողությունների վրա նոր լույս է սփռում և հնարավորություն է ընձեռում դրանց վերաբերմամբ նոր մոտեցումներ և գործնականում նոր լուծումներ առաջադրելու:

Ուղեցույցի հեղինակները բնավ հավակնություն չեն ունեցել հանդես գալու օրենսդիրի առաքելությամբ: Այդ դերը վերապահված է համապատասխան կառույցների: Այստեղ ներկայացված նյութը ունի առավելապես խորհրդատվական բնույթ և կոչված է լեզվակիրառողին ուղղորդելու լեզվական այնպիսի իրողությունների գործածություններում, որոնք՝

● տարակարծությունների առիթ են տալիս. տարբեր աղբյուրներում տարբեր կերպ են մեկնաբանվում և ներկայացվում,

● տեղաշարժերի ու զարգացումների արգասիք են և տակավին չեն արձանագրվել մասնագիտական գրականության մեջ, շեղվում են ավանդական քերականության մեջ ընդունված կանոններից,

● շփոթության և անճշտությունների պատճառ են դառնում՝ մասնագիտական գրականության մեջ կամ բառարաններում և դասագրքերում ըստ ամենայնի ներկայացված և բացատրված չլինելու պատճառով:

Այսպես, օրինակ՝ **-մատ** վերջնաբաղադրիչով կազմված միևնույն բառերի հոգնակիի ձևերի համար բառարանային աղբյուրները[1] տալիս են տարբեր կազմություններ[2]՝ **միջնամատ՝** ***-եր*** (Ա.), ***-ներ*** (Գ.), **ցուցամատ** ***-եր*** (Ս., Ա., Մ., Բ.), ***-եր//-ներ*** (Գ.), **մատանեմատ** ***-ներ*** (Ս., Ա., Մ.), ***-եր//-ներ*** (Գ.), **բթամատ** ***-եր*** (Ա.), ***-եր//-ներ*** (Գ.). ուղեցույցիս հեղինակները հանձնարարելի են համարում կանոնական՝ **-եր**-ով կազմությունները՝

---

[1] **Բարսեղյան Հ.**, Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան, Եր., 1973 (այսուհետև շարադրանքում՝ Բ.), **Աղայան Էդ.**, Արդի հայերենի բացատրական բառարան, Եր., 1976 (այսուհետև՝ Ա.), **Սուքիասյան Ա., Սուքիասյան Ք.**, Հայերենի ուղղագրական-ձևակազմական բառարան, Եր., 2002 (այսուհետև՝ Ս.), **Գյուրջինյան Դ.,** Անուն խոսքի մասերի թվի կարգը արդի հայերենում, Եր., 2005 (այսուհետև՝ Գ.), **Մեյթիխանյան Փ.**, Հայերենի ուղղագրական նոր բառարան, Եր., 2013 (այսուհետև՝ Մ.):

[2] Բերվում են միայն այն տվյալները, որոնց վերաբերյալ հիշատակված աղբյուրներում նշումներ կան:

սկզբունքորեն չմերժելով նաև դրանց **-ներ**-ով ձևերը:

Կամ՝ վերջին շրջանում հիմնականում անգլերենից փոխառված բառերում միտում կա **p, t, k**-ն և **k** արտասանվող **c**-ն տառադարձել **փ, թ, ք** նաև բառամիջում և բառավերջում, ինչպես՝ **Թրամ[փ], ս[թ]րես, վինչես[թ]եր, Դոն Քիշո[թ]** ևն (տե՛ս էջ 20). գործող կանոնով դա հանձնարարվում է միայն բառասկզբում: Այս ուղեցույցով առաջարկվում է նշված տառադարձությունը թույլատրելի համարել բոլոր դիրքերում՝ առաջնորդվելով կենդանի լեզվի զարգացումներով և բնագրի արտասանությանը առավել մոտ լինելու հանգամանքով:

Մասնագիտական գրականության մեջ ներկայացվող և կամ զանազան աղբյուրներում արձանագրված առանձին իրողությունների վերաբերյալ ուղեցույցիս հեղինակները բնականաբար ունեն անհամաձայնություններ: Դրանք ներկայացված են ուղեցույցի՝ բառացանկերին նախորդող մեկնաբանություններում: Բոլոր դեպքերում, շրջանառության մեջ եղած քիչ թե շատ համոզիչ լեզվական փաստերը ներառված են բառացանկերում: Առաջնորդվել ենք այն համոզմամբ, որ լեզվական կանոնը կայուն է որոշակի ժամանակահատվածի համար: Հաշվի առնելով լեզվական կանոնի ձևավորման հակասական գործընթացը (մի կողմից՝ ավանդապահությունը, մյուս կողմից՝ լեզվի բնականոն զարգացմամբ պայմանավորված տեղաշարժերն ու փոփոխությունները)՝ փորձել ենք քննարկությամբ ներկայացնել կենդանի լեզվում եղած հնարավոր տարբերակները նույնպես:

Ուղեցույցը չի որդեգրել կտրուկ և անվերապահ հանձնարարականներ տալու ուղին. զուգահեռ ձևերի գործածությունը թույլատրելի է համարվել հնարավոր բոլոր դեպքերում: Նպատակահարմար չէ այս կամ այն փոփոխությունը միանշանակ գնահատել **ճիշտ է, սխալ է, մերժելի է** և նման բնորոշումներով: Պետք է հաշվի նստել կատարված էական փոփոխությունների հետ և գնահատումներում գործածել ավելի ճկուն, ոչ «կատեգորիկ» բնորոշումներ, ինչպես՝ **թույլատրելի է, նախընտրելի է, հանձնարարելի է** և այլն: Դա չի խախտում կանոնը, այլ այն դարձնում է ավելի նուրբ գործիք լեզվական միջոցների ընտրության հարցում: Եվ միայն լեզվի հետագա զարգացումը կարձանագրի ձևերից մեկի նախընտրությունը կամ հաղթանակը:

Այստեղ զետեղված նյութը հետագայում կարող է օգտակար աղբյուր դառնալ ՀՀ վարչապետին առընթեր հայերենի բարձրագույն խորհրդի նախագծերը կազմելիս և ապա՝ նաև համապատասխան որոշումներ ընդունելիս:

Ուղեցույցը ունենալու է շարունակություն. այստեղ ամբողջապես ներառված չեն արդի հայերենի բոլոր վիճահարույց խնդիրները. անհրաժեշտությունը կա անդրադառնալու նաև լեզվի զարգացման հետագա ընթացքում ծագած նոր իրողություններին:

Սիրով կընդունենք օգտակար դիտողություններն ու առաջարկները:

1. ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1.1. *ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ, ՁԱՅՆԱՎՈՐԱԿԱՆ ԶՈՒԳՈՐԴՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՁԱՅՆԵՂ ԲԱՂԱՁԱՅՆՆԵՐԻ ԱՐՏԱՍԱՆՈՒԹՅՈՒՆԸ*

1. **Ա, ի, ու** ձայնավորները հայերենում ինչպես գրվում, այնպես էլ արտասանվում են՝ **արագ, գիրք, ուրախ:**

2. Հնչյունը և նրա գրային նշանը կարող են չհամապատասխանել իրար. գրում ենք մի տառ, արտասանում ենք մեկ այլ հնչյուն՝ **բարձր – բար[ց]ր, մարդ – մար[թ], բարձ – բար[ց]**:

3. Բառասկզբում **ե**-ն արտասանվում է **յէ՝ [յէ]րևալ, [յէ]կամուտ** (բացառություն է **եմ** օժանդակ բայը՝ **ես [է]մ, մենք [է]նք** ևն), բառամիջում արտասանվում է **է՝ աս[է]լ, գ[է]ղ[է]ցիկ**: Եթե բաղադրյալ բառերի բաղադրիչների կցույթում **ե**-ով սկսվող բաղադրիչին նախորդում է ձայնավոր, ապա **ե**-ն արտասանվում է **յէ**, որպեսզի ձայնավորների կուտակում չառաջանա՝ **ամենա[յէ]րկար, կիսա[յէ]զրափակիչ**, իսկ եթե նախորդում է բաղաձայն, ապա **ե**-ն արտասանվում է՝ **ան[է]րես, ինն[է]րորդ, արև[է]լք**:

4. Բառասկզբում **ո**-ն արտասանվում է **վո՝ [վո]ռոշ, [վո]ռակ** (բացառ.՝ **[օ]վ, [օ]վքեր**), իսկ բառամիջում արտասանվում է **օ՝ բ[օ]լ[օ]ր, հ[օ]սանք**: Եթե բաղադրյալ բա-

ռերի՝ **ռ**-ով սկսվող բաղադրիչին նախորդում է ձայնավոր, ապա **ռ**-ն արտասանվում է **վo**, որպեսզի ձայնավորների կուտակում չառաջանա՝ **ամենա[վo]րակյալ, բազմա[վo]ճ,** իսկ եթե նախորդում է բաղաձայն, ապա **ռ**-ն արտասանվում է **o՝ բարձր[o]րակ, բազմ[o]տանի**:

5. Ան- ժխտական նախածանց ունեցող բառերի մի որոշ մասում (հատկապես գրական-գրքային երանգ ունեցող բառերում) գործում է արտասանական զուգահեռ տարբերակ. **է**-ի փոխարեն արտասանվում է **յէ,** իսկ **o**-ի փոխարեն՝ **վo,** ինչպես՝ **ան[է]ռանդ//ան[յէ]ռանդ, ան[o]ղնաշարավոր//ան[վo]ղնաշարավոր, ան[o]ղջամիտ //ան[վo]ղջամիտ, ան[o]խակալ//ան[վo]խակալ, ան[o]րդի// ան[վo]րդի, ան[o]տնահարելի//ան[վo]տնահարելի** ևն (բայց՝ **ան[է]րես, ան[է]զական** ևն):

6. -երկու և **-երեք** բաղադրիչներով թվականներում **ե**-ն հնչում է նաև որպես **յէ** (**տասն** բաղադրիչով կազմություններում արտասանվում է **ը** հենարանով)՝ **տասն[ըյէ]րեք, տասն[ըյէ]րկու, քսան[յէ]րկու, հիսուն[յէ]րկու** (սրանք հանձնարարելի չեն), փոխ.՝ **տասն[է]րեք, տասն[է]րկու, քսան[է]րկու, հիսուն[է]րեք** ևն:

7. Գրական լեզվի կանոնով **կ** և **չ** քերականական մասնիկներին հաջորդող **ե**-ի **է** (**կ[է]րազեն, կ[է]ռապատկեն**) և **ռ**-ի **o** արտասանությունը (**կ[o]ռոշեն, չ[o]ռոնեն**) այսօր աստիճանաբար իր տեղը զիջում է այդ հնչյունների՝ **յէ** և **վo** արտասանությանը: Ըստ որում, այս դեպքում չի աղավաղվում սկզբնաձևի արտասանական պատկերը՝ **[յէ]րազեն – [կըյէ]րազեն, [յէ]ռապատկեն – [չըյէ]ռապատկեն, [վo]ռոնեն – [չըվo]ռոնեն,**

[վօ]ռոշեն – [կըվօ]ռոշեն: Բոլոր դեպքերում, ակնհայտ է, որ ունենք արտասանական զուգաձևեր, որոնցից արդի խոսակցական նորմի շրջանակներում գործող տարբերակը միտում է դառնալու գրական լեզվի ուղղախոսական կանոն: Այդպես նաև՝ **[չըվօ]ռոնեն / [կըվօ]ռոնեն, [չըվօ]ռակեն / [կըվօ]ռակեն, [չըվօ]ռսան / [կըվօ]ռսան, [չըվօ]ռոտան / [կըվօ]ռոտան, [չըյէն]թադրեն / [կըյէ]նթադրեն** են: Արտասանական այսպիսի հատկանիշով են օժտված գրական-գրքային բառերը:

8. Գրական լեզվի արտասանական կանոնով՝ ձայնավորական զուգորդումները (կից ձայնավորների միացությունը՝ **առ, ռա, առ, իու, իո** են) մի շարք բառերում արտասանվում են **յ** ձայնակապի հավելումով՝ **ան[Էյ]անալ, գրե[յ]ի, մի[յ]ավոր, էյ]ինք**, կամ վերածվում են **յ**-ի՝ **օվկ[յ]անոս, Անդր[յ]աս**: Սակայն լեզվի զարգացմամբ պայմանավորված՝ որոշակի տեղաշարժ է նկատվում ձայնական այդ զուգորդությունների արտասանության մեջ. դրանք արտաբերվում են կիսահունչ՝ կարճ **յ**-ով: Գրական լեզվի համար հանձնարարելի է արտասանական այդ տարբերակը՝ **անէ[ˈ]անալ, գրե[ˈ]ի, մի[ˈ]ավոր, օվկ[ˈ]անոս, է[ˈ]ինք,** ըստ որում, որոշ բառերում թույլ հնչում է նաև **յ**-ին նախորդող ձայնավորը՝ **Անդր[ᵉ]աս, հր[ᵉ]ա, Մար[ᵃ]ամ, քրիստոն[ᵉ]ական**:

9. Ը ձայնավորը չի գրվում, բայց թույլ արտասանվում է **սկ, զբ, ստ, զգ, սպ** և նման հնչյունակապակցություններից առաջ, ինչպես՝ **[ը]զբաղվել, [ը]զգուշանալ, [ը]սկսել, [ը]ստեղծել, [ը]ստանձնել** (Մ. Աբեղյանը **ը**-ի արտասանական այս տարբերակը անվանում է **կարճ ը):**

10. Ճիշտ չէ որոշ քանակական թվականների՝ ավելորդ **ը**-ով արտասանությունը, այսպես՝ ոչ թե **հինգ[ը], վեց[ը], յոթ[ը], ութ[ը],** կամ՝ **վաթսուն[ը]մեկ, քառասուն[ը]չորս,** այլ՝ **հինգ, վեց, յոթ, ութ**, կամ՝ **վաթսունմեկ, քառասունչորս** են:

11. Եթե բառի մեջ **և**-ին նախորդում է բաղաձայն, ապա **և**-ը արտասանվում է **էվ՝ առ[էվ]տուր, որ[էվ]ից:**

12. Գրական հայերենին բնորոշ չէ բաղաձայն հընչյունների փափուկ արտասանությունը՝ քմայնացումը, որը ռուսերենի ազդեցությամբ է մուտք գործել մեր բանավոր խոսք: Մի շարք բառերում **դ, տ, թ** գրային նշանները արտասանվում են **ձ, ծ, ց** հնչյունների քմայնացված տարբերակներով, ինչպես՝ **[ծյ]եխնիկա, մա[ծ]յան, ա[ծ]յան, Սմբա[ծ]յան, ար[ձ]յունք, ակա[ձյ]եմիա,** փոխանակ գրայինին հարազատ արտասանության՝ **տեխնիկա, մատյան, ատյան, Սմբատյան, արդյունք, ակադեմիա:**

13. Կրկնակ բաղաձայնները կա՛մ արտասանվում են որոշ տևականությամբ **(ուղղաձիգ, աբբա, գրավվել, տարրական)**, կա՛մ գաղտնավանկի հնչմամբ **(գ[ը]գվել, հույս[ը]ս, կ[ը]կառուցվի)**: Ճիշտ չէ կրկնակ բաղաձայնների միջև **ը** արտասանելը, երբ այն գրական լեզվի կանոնով բացակայում է, կամ առկա է արմատի ձայնավորի կամ երկհնչյունի սղում: Ոչ թե՝ **զ[ը]ն[ը]նել** (զնին), **ք[ը]ն[ը]նել** (քնին), **սովալ[ը]լուկ** (ղլուկ), **պ[ը]տ[ը]տահողմ** (պտույտ), **բ[ը]ջ[ը]ջային** (բջիջ), այլ՝ **զ[ը]ննել, ք[ը]ննել, սովա[ղ]ուկ, պ[ը]տտահողմ, բ[ը]ջջային:**

14. Առանձին բառերում որոշ բաղաձայնների համար մեր ընդհանուր խոսակցական լեզվում (բանավոր

խոսքում) գրային արտասանության հետևանքով առաջացել են արտասանական զուգաձևեր, այսինքն՝ գործ ունենք բառի մեջ այս կամ այն հնչյունի երկակի արտասանության հետ (դա արձանագրված է նաև նորմատիվ քերականության մեջ). ձայնեղ բաղաձայնները՝ **բ, գ, դ, ձ, ջ**, արտասանվում են մեկ որպես ձայնեղներ, մեկ որպես շնչեղ խուլեր՝ **փ, ք, թ, ց, չ**, ինչպես, օրինակ՝ **գոգավորություն//գո[ք]ավորություն, երիտասարդ//երիտասար[թ], թագավոր//թա[ք]ավոր, Թադևոս //Թա[թ]ևոս, կանխարգելել//կանխար[ք]ելել, միջանցք// մի[չ]անցք, միջնակարգ//մի[չ]նակարգ, միջազգային //մի[չ]ազգային, միջամտել//մի[չ]ամտել, միջոց//մի[չ]ոց**: Այս դեպքում նախապատվությունը պետք է տալ նշված հնչյունների գրային արտասանությանը՝ **միջնակարգ, միջոց, միջոցառում, նվագել** են:

15. Մի շարք բառերում ձայնեղների խուլ արտասանությունը արդի գրական լեզվի նորմով հանձնարարելի չէ, ինչպես՝ **ամ[փ]ողջ, ար[ց]ան, զար[ք]ացում, ըն[թ]որում, հաշման[թ]ամ, հա[չ]ողություն, հուշար[ց]ան, նվա[ք]ել, [քթ]նել.** Ճիշտ է՝ **ամբողջ, արձան, զարգացում, ընդ որում, հաջողություն, հաշմանդամ, հուշարձան, նվագել, գտնել** են:

16. Բանավոր խոսակցական լեզվում տարածված սխալ է **h**-ով վերջացող մի շարք բառերում այդ վերջնահնչյունի սղումը. ոմանց նույնիսկ թվում է, թե այդ բառերը ոչ միայն արտասանվում, այլև գրվում են առանց **h**-ի՝ **նախագան** (←**նախագահն**) ասաց, **հերթապան** (←**հերթապահն**) այստեղ է, **հաշվապան** (←**հաշվապահը**) տեղում չէ. առաջինները գրական լեզվում մերժելի ձևեր են:

17. Առանձին դեպքերում ազգանունները ճշգրիտ արտաբերելու համար պետք է գրության մեջ արտահայտել գաղտնավանկը՝ տարընթերցումից խուսափելու համար, օրինակ՝ **Չալըմյան** ազգանվան մեջ **ը**-ի չգրությունը կարող է դուռ բացել այլ արտասանության. չգրվող **ը**-ն ոչ ճիշտ տեղում է հնչում կամ սղվում է. ասենք՝ **Չալմ[ը]յան** կամ **Չալմյան**: Նմանապես՝ **Պ[ը]լըտյան,** ոչ թե՝ **Պ[ը]լտ[ը]յան**, կամ՝ **Չալըխյան** և ոչ թե՝ **Չալխ[ը]յան** կամ **Չալխյան**, **Այտընյան** և ոչ թե՝ **Այտն[ը]յան** ևն: Գաղտնավանկի՝ անճիշտ դիրքում արտասանությունը կարող է նաև իմաստային շփոթի պատճառ դառնալ: Օր.՝ **Գ[ը]րըգեան** ազգանվան մեջ **գ[ը]րըգ**-ը նշանակում է **ցախ (Գ[ը]րըգեան** – Ցախեան), իսկ **գ[ը]րգ**-ը՝ **քառասուն** (**Գ[ը]րգեան** – Քառասունեան): Հետևաբար ճիշտ կամ ճշգրիտ արտասանելու համար պիտի ընտրել անհրաժեշտ տարբերակը:

ԲԱՌԱՑԱՆԿ

(ձայնեղ բաղաձայնների արտասանությունը)

Բառացանկում տրվում են ձայնեղ բաղաձայն ունեցող այն բառերը, որոնցում արձանագրվում են արտասանական տեղաշարժեր: Դրանք ներկայացված են այսպես կոչված երկու խմբով՝ ***ա)*** *արտասանական մեկ տարբերակով,* ***բ)*** *արտասանական երկու տարբերակով՝ զուգաձևություններով:*

*Առաջինները՝ արտասանական մեկ տարբերակով ներկայացվածները (աճուր**[դ]**, Բա**[գ]**ռատ, բար**[գ]**ավաճել, Թա**[դ]**նոս, նվա**[գ]**ել են), գրական լեզվում արդեն հաստատված, կանոնական և ճիշտ ձևեր են: Բառացանկը չծանրաբեռնելու համար սրանց երկրորդ՝ անհանձնարարելի արտասանական տարբերակները (աճուր**[թ]**, Բա**[ք]**ռատ, բար**[ք]**ավաճել, Թա**[թ]**նոս, նվա**[ք]**ել են) ցանկում չեն տրվում:*

Երկրորդները՝ զուգաձև տարբերակները, ներկայացված են հետևյալ սկզբունքով. արտասանական տարբերակներ, որոնցում՝ ***ա)*** *հաղթում են, այսպես կոչված, գրային տարբերակները (ար**[բ]**ել//ար**[փ]**ել, ար**[գ]**ելք//ար**[ք]**ելք, ար**[գ]**ելակել//ար**[ք]**ելակել, բացար**[ձ]**ակ//բացար**[ց]**ակ են), և* ***բ)*** *պահպանվում է կամ տակավին գերակշռող է, այսպես կոչված, ավանդական արտասանությունը (առա**[չ]**ին//առա**[ջ]**ին, արնածա**[ք]**//արնածա**[գ]**, գրա**[փ]**ար//գրա**[բ]**ար, գու**[ք]**վել//գու**[գ]**վել, Մըր**[ք]**ական//Մր**[գ]**ական, քրո**[չ]** //քրո**[ջ]** են):*

Երկու դեպքում էլ առաջինները հանձնարարվող տարբերակներն են:

Բ — Փ

ամ**[բ]**ողջ
ար**[բ]**ել//ար**[փ]**ել
ար**[բ]**ենալ//ար**[փ]**ենալ
ար**[բ]**եցողություն//ար**[փ]**ե-
    ցողություն
ար**[բ]**ունք
ար**[բ]**շիռ
բամ**[բ]**
բամ**[բ]**ասել
գրա**[փ]**ար//գրա**[բ]**ար
համ**[բ]**արձում
ձեր**[բ]**ակալել//ձեր**[փ]**ակալել
ներ**[բ]**ողել
ջրար**[բ]**ի//ջրար**[փ]**ի

Գ — Ք

ավա**[ք]**անի//ավա**[գ]**անի
ար**[գ]**ելք//ար**[ք]**ելք
ար**[գ]**ելակել//ար**[ք]**ելակել
ար**[գ]**ելել//ար**[ք]**ելել
արե**[գ]** (արե**[գ]**ակ)
արևածա**[ք]**//արևածա**[գ]**
Բա**[գ]**արան
Բա**[գ]**րատ
բար**[գ]**ավաճել
գո**[գ]**ավոր
գո**[գ]**նոց//գո**[ք]**նոց
գովեր**[ք]**ել//գովեր**[գ]**ել
երկրպա**[գ]**ու
զույ**[գ]**//զույ**[ք]**
զու**[գ]**ադիպել
զու**[գ]**ակցել
զու**[գ]**ահեռ
զուգեր**[ք]**//զուգեր**[գ]**
զու**[գ]**ընթաց
զու**[գ]**որդել
զու**[ք]**վել//զու**[գ]**վել
թա**[գ]**ավոր//թա**[ք]**ավոր
թա**[գ]**ուհի
Թոր**[գ]**ոմ
ժամեր**[գ]**ություն
ծա**[ք]**ել//ծա**[գ]**ել
ծա**[ք]**ում//ծա**[գ]**ում
ծե**[գ]** (ծե**[գ]**ին)//ծե**[ք]**
կանխար**[գ]**ելել//կանխար-
    [ք]ելել
համեր**[գ]**
հե**[գ]**
ձա**[գ]**ար//ձա**[ք]**ար
մար**[գ]**ագետին

մար**[գ]**արիտ//մար**[ք]**արիտ
մե**[գ]**
մեներ**[ք]**//մեներ**[գ]**
մեներ**[ք]**իչ//մեներ**[գ]**իչ
միր**[ք]**//միր**[գ]**
մո**[գ]**պետ
Մր**[ք]**անուշ//Մր**[գ]**անուշ
մր**[ք]**աշատ//մր**[գ]**աշատ
Մր**[ք]**ավան//Մր**[գ]**ավան
նվա**[գ]**ել
ոռո**[ք]**ել//ոռո**[գ]**ել
պատարա**[գ]**//պատարա**[ք]**
վարա**[գ]**ույր//վարա**[ք]**ույր
փափա**[գ]**
փոքրո**[ք]**ի//փոքրո**[գ]**ի

Դ —Թ

աճուր**[դ]**
անջր**[դ]**ի
ապար**[դ]**յուն
ար**[դ]**ուկ
գեղար**[դ]**
գմբեթար**[դ]**
ըն**[դ]** որում
Թա**[դ]**նոս
թակար**[դ]**
խար**[դ]**ախ
խլուր**[դ]**
խորանար**[դ]**
խոր**[դ]**ենի
ծղրի**[դ]**
կախար**[դ]**
կորնթար**[դ]**
հագուր**[դ]**
հար**[դ]**
Հար**[դ]**ագողի ճանապարհ
հար**[դ]**աշաղախ
հար**[դ]**արանք
հոր**[դ]**
մակար**[դ]**ակ
մարինա**[դ]**
Նավասար**[դ]**
շոկոլա**[դ]**
Սե**[թ]**րակ//Սե**[դ]**րակ
վառո**[դ]**
վիմար**[դ]**
Տր**[դ]**ատ//Տր**[թ]**ատ

Ջ — Ճ — Չ

ա[ջ]ակցել
առա[յ]//առա[ջ]
առա[յ]ին//առա[ջ]ին
առա[յ]նագիծ//առա[ջ]նագիծ
առա[յ]նահերթ//առա[ջ]նա-
հերթ
առա[յ]նային//առա[ջ]նային
առա[յ]նորդ//առա[ջ]նորդ
ար[ջ]առ//ար[յ]առ
եր[ջ]անիկ//եր[յ]անիկ
զղ[յ]ալ//զղ[ջ]ալ
ընդմի[ջ]ում//ընդմի[յ]ում
ընկերո[յ]//ընկերո[ջ]
ի[յ]եցում//ի[ջ]եցում
ի[ջ]ան
ի[ջ]անատուն
կնո[յ]//կնո[ջ]
հաղար[ջ]
մի[յ]ակ//մի[ջ]ակ
մի[ջ]ազգային//մի[յ]ազգային
մի[ջ]անցք//մի[յ]անցք
մր[յ]յուն//մր[ջ]յուն
մր[յ]նաթթու//մր[ջ]նաթթու
մր[յ]նակեր//մր[ջ]նակեր
որ[յ]//որ[ջ]
քա[ջ]ք//քա[յ]ք
քրո[յ]//քրո[ջ]

Ձ — Ց

առան[ձ]ին
առան[ձ]նաբար
ատաղ[ձ]
ար[ձ]ան
ար[ձ]անագործ
ար[ձ]անագրություն
արվար[ձ]ան
բացար[ձ]ակ//բացար[ց]ակ
դեղ[ց]ենի
դեղ[ց]ան//դեղ[ձ]ան
հոր[ձ]անք
մեր[ձ]ավոր
շնչահեղ[ձ]
վր[ձ]ին//վր[ց]ին
ուղեր[ձ]
քուր[ձ]
օ[ձ]իք

1.2. *ՏԱՌԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆ*

1. Օտար բառական միավորների փոխառումը կատարվում է հնչադարձությամբ (արտասանությանը հետևելով) կամ գրադարձությամբ (գրությանը հետևելով):

2. Օտար **r**-ն (ռուսերենի **р**-ն) բառասկզբում և բառամիջի արմատական բաղադրիչում տառադարձվում է **ռ՝ [ռ]ադիո, [ռ]ուբլի**, բառամիջում՝ **ր՝ պ[ր]ոֆեսոր, Սանկտ Պետե[ր]բուրգ, լ, ն** ձայնորդներից առաջ՝ **ռ՝ Բե[ռ]նարդ, Կա[ռ]լեն, Առ[ն]ոլդ**, սակայն երբեմն խախտվում է այս կանոնը՝ **Նիդե[ր]լանդներ, Կա[ր]լ, ինտե[ր]նացիոնալ**: Այսպես **գործնականում անլուծելի է մնում մի քանի գործածական անունների հարցը.** հակում կա, ավանդույթին հետևելով, գործածության մեջ նախապատվություն տալու **Կալիֆո[ռ]նիա** անվան **ռ**-ով տառադարձությանը: Ենթադրվում էր, որ նույն հիմքով **Նիդե[ռ]լանդներ**-ը պիտի տառադարձվեր **ռ**-ով, սակայն պետությունների անվանումների վերաբերյալ Կառավարության հատուկ հանձնարարականով, առանց հիմնավոր պատճառաբանության, բառը տառադարձված է **ր**-ով՝ **Նիդե[ր]լանդներ:**

3. Սխալ է օտար բառերում **ր**-ի **ռ** արտասանությունը՝ **Գե[ռ]մանիա, Ա[ռ]թուր (Ա[ռ]տուր), ի[ռ]անյան–ի[ռ]աքյան, «Ա[ռ]մենիա», բ[ռ]ոնզ, գ[ռ]ոշ**:

4. Ր-ի **ռ** արտասանությունը ճիշտ չէ նաև հայերեն մի շարք բառերում՝ **Ա[ռ]մեն, ա[ռ]համարհել, ա[ռ]ծիվ, ե[ռ]եսուն, լ[ռ]իվ, խանգա[ռ]ել, վե[ռ]նագիր**:

5. Ռուսերեն կամ ռուսերենից փոխառված բառերում **o(n)**-ն արտասանվում է **o**, այսինքն՝ այնպես, ինչպես հայերենում գրվում է. չի դառնում **ա** (բառամիջում) կամ **ը** (**-տ[o]ր, -[o]ր, -[o]վ** հնչյունամիացությամբ վերջացող բառերի մեջ): Ճիշտ է՝ **Մ[o]սկվա, Դ[o]ստ[o]ևսկի**, կամ՝ **պրոֆես[o]ր, դոկտ[o]ր, ռեկտ[o]ր, տրանսպ[o]րտ, Փարաջան[o]վ**: Սխալ է՝ **Մ[ա]սկվա, Դ[ա]ստ[ա]ևսկի, պր[ա]ֆես[ը]ր** կամ՝ **պրոֆես[ը]ր, դոկտ[ը]ր, ռեկտ[ը]ր, տրանսպ[ը]րտ, Փարաջան[ը]վ**: (Չպետք է շփոթել **ա** հոդակապի հետ, որը հանդես է գալիս առանձին օտար և հայերեն բաղադրիչների միացման դերում՝ **электро→էլեկտր/ա–՝ էլեկտրաէներգիա, էլեկտրահաղորդիչ, евро→եվր/ա–՝ Եվրատեսիլ, Եվրախորհուրդ, Եվրամիություն**):

6. Հայերենում **Белорус** բառի ճիշտ արտասանությունն ու տառադարձումն է ոչ թե **Բել[o]ռուս**, այլ **Բել[ա]ռուս:**

7. Կրկնակ բաղաձայնները սովորաբար հայերենում արտասանվում են իբրև մենաբաղաձայն և այդպես էլ գրվում են, ինչպես՝ **congressman – կոնգրեսմեն, alligator – ալիգատոր, ammonium – ամոնիում, classicism – կլասիցիզմ, communist – կոմունիստ, collective – կոլեկտիվ**: Կրկնակ բաղաձայնները հայերենում երկար կամ ուժգին արտասանվելու դեպքում գրվում են կրկնակ բաղաձայնով՝ **վիլլա, Աննա, վատտ, բրուտտո**, կրկնակ **oo**–ն՝ **ոո՝ կոոպերատիվ**, կրկնակ **pp**–ն (ռուս.՝ **pp**) **ի** ձայնավորից առաջ՝ **ր՝ բարիկադ**, մնացած դեպքերում՝ **ռ՝ Մառ, Պյուռռոս, Կառլոս**:

8. Կանոնական է **Բելոոզերսկ, Բելոզերով, Ղասաբողլյան, Դավութողլու, Չարչողլյան** և նման բառերի **o**-ով

գրությունը: Դրանց երկրորդ բաղադրիչները (ozepo, oğul) ավանդաբար ստուգաբանորեն գիտակցվել են:

9. Անգլերեն **p, t, k**-ն և **k** արտասանվող **c**-ն, ըստ գործող կանոնի, տառադարձվում է բառասկզբում **փ, թ, ք,** մնացած դիրքերում՝ **պ, տ, կ**. վերջին դեպքում կրկնավորները ևս տառադարձվում են մեկ բաղաձայնով, ինչպես՝ **[Թ]աֆտ (Taft), [Թ]եյլոր (Taylor), [թ]ենիս (tennis), [Ք]արտեր (Carter), [Ք]ենեդի (Kennedy), [թ]եստ (test)**, բայց ավանդաբար՝ **Նյու Յոր[ք], Մարկ [Տ]վեն, [կ]ոնգրես** են:

Վերջին շրջանում անգլերենի ազդեցությամբ և հիմնականում անգլերենից փոխառված բառերում միտում կա **p, t, k**-ն և **k** արտասանվող **c**-ն տառադարձել **փ, թ, ք** նաև բառամիջում և բառավերջում, ինչպես՝ **Թրամ[փ], ս[թ]րես, վինչես[թ]եր, Դոն Քիշո[թ]** են:

10. Անգլերենի **w(h)**-ն տառադարձվում է **ու** (**wa**-ն՝ **ուո**), բացի այն դեպքերից, երբ հայերենում իրար կողքի կարող են հանդիպել երկու **ու** (**wu, wo, woo**). այս դեպքում գրել և արտասանել **ու**, օր.՝ **[Ու]այտ (White), [Ու]այլդ (Wilde), [Ու]ոլտոն (Walton), Դ[ու]այտ (Dwight)**, բայց ավանդաբար՝ **[Վ]աշինգտոն (Washington), [վ]ատտ (Watt), [Վ]իլյամ (William)** են:

ԲԱՌԱՑԱՆԿ[3]

Որպես զուգաձևություններ տրված են արդի հայերենի տառադարձության սահմանված նորմերով (տե՛ս 18-20 էջերը) տարբերակները (դրանք բառացանկում առաջիններն են) և կենդանի գրական լեզվում գործածական այն ձևերը (բառացանկում մյուս տարբերակները), որոնք արտասանությամբ (հնչադարձությամբ) ավելի հարազատ են փոխառությունների բնագրային արտասանությանը և միտում են գրական լեզվում գործածության ավելի մեծ հաճախականության:

Ալմաթի
Արգիշտի//Արգիշթի
բադմինտոն//բադմինթոն
Բաթում
Բելառուս
բիսկվիտ//բիսկվիթ
Բյուզանդիա//Բյուզանդիոն
Բորժոմ
բրոկեր//բրոքեր
բրոնզ
Գերմանիա
Դանթե
Դավութօղլու
դոլար
Դոն Կիխոտ//Դոն Քիշոտ//
Դոն Քիշոթ
Եվրախորհուրդ
Եվրամիություն
Եվրատեսիլ
Եվրիպիդես//Էվրիպիդես
Եվրոգոտի
Էյնշտեյն//Էյնշթեյն//
Այնշթայն
էֆտանազիա//էֆթանազիա
Թաֆտ//Թաֆթ
Թեյլոր
թեստ
Թետչեր//Թեթչեր

[3] Այս կարգի բառերը տե՛ս նաև «Օտար բառեր» բաժնում:

Թրամպ//Թրամփ
իմպիչմենտ//իմպիչմենթ//
    իմփիչմենթ
ինսերտ//ինսերթ
Լայպցիգ
Լենկթեմուր//Լանկթեմուր
Կալիֆոռնիա
Կապան
Կառլեն
Կառլոս
Կարլ
կլասիցիզմ
կոմունիստ
հետթրիկ
Հերակլես//Հերակլ
հիպոտեկ//հիպոտեք//հիպո-
    թեք//հիփոթեք
հոտդոգ//հոթդոգ
Մանչեստեր//Մանչեսթեր
Մարկ Տվեն
մարկետինգ//մարկեթինգ
    //մարքեթինգ
մենեջմենտ//մենեջմենթ
մենտալիտետ//մենթալի-
    տետ
մոնիտորինգ//մոնիթորինգ
Նիդերլանդներ//Նիդեռլանդ-
    ներ
Չարչոդլյան
չարտերային//չարթերային
պլանշետ//պլանշեթ
պրոտեզ//պրոթեզ
թյունինգ
պրոֆեսոր
ռեկտոր
ռետրո
սկետչ//սքեթչ
Սոկրատես//Սոկրատ
սպիկեր//սպիքեր//սփիքեր
ստրես//սթրես
Սուխում
Սուրամ
վայֆայ
Վաշինգտոն//Վաշինգթոն
Վերգիլիոս//Վիրգիլիոս
Վիլյամ
վինչեստեր//վինչեսթեր
տելեպատիա//տելեպաթիա
տրանսպորտ
Տրումեն//Թրումեն
Փարաջանով
փարկինգ//փարքինգ
փեյջ
Քամյու//Կամյու
Քարնեգի
Քարտեր//Քարթեր
Քեմբրիջ
Քենեդի
Քիշնև
Քլինտոն//Քլինթոն
Քութայիս
Օլիմպոս
Օռլեան
ֆիտնես//ֆիթնես

1.3. *ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ*

1. Գրական հայերենում մի շարք բառերի արտասանությանը բնորոշ է բաղաձայնների սղումը կամ, ավելի ստույգ, դրանց թույլ արտասանությունը՝ **աշխար*հ* – [աշխար], ապաշնոր*հ* – [ապաշնոր], արհամար*հ*անք – [արհամարանք], ընդ*հ*անրապես – [ընդանրապես], խոր*հ*ուրդ – [խորուրդ], շնոր*հ* – [շնոր], որպես*զ*ի – [որպեսի]** (բայց ոչ՝ **որպիսի**), **պաշ*տ*պան – [պաշպան], Մկր*տ*չյան – [Մկրչյան]**: Սա գործում է գրական լեզվի արտասանական նորմերի շրջանակներում:

2. Այս երևույթի հետ չպետք է շփոթել, սակայն, բարբառների կամ խոսակցական լեզվի ազդեցությամբ բառերի այլ խմբում արձանագրվող ձայնավոր կամ բաղաձայն հնչյունների անհարկի սղումները, որոնք աղավաղում են բառի հնչյունական ճիշտ պատկերը, ինչպես՝ **անդրադառնալ – անրադառնալ**, **գնահատական – գնհատական**, **դաստիարակել – դաստիրակել**, **երկրորդ – եկրորդ, համեմատություն – համմատություն, որովհետև – որտև, օրինակ – օրնակ:**

3. Բառի աճման (բառաբարդում, ածանցում) ժամանակ **ույ** երկհնչյունը փոխվում է **ու**-ի, արտասանվում է **ու՝ համբույր** (ոչ թե՝ **համբյուր**) – **համբուրել**, **զրույց – զրուցընկեր**, **ողջույն – ողջունել**: Սխալ է այս խմբի բառերի մեջ **ու**-ի փոխարեն **յու** կամ **ույ** արտասանելը՝ **համբյուրել**, **զրույցընկեր**, **ողջույնել** կամ **ողջյունել**, բայց ունենք նաև՝ **ընկուզկոտրիչ//ընկույզկոտրիչ**, **հնչութային//հնչույթային**, **սովորութային//սովորույթային,** որոնք զուգաձևեր են: Առանձին բառերի դեպքում (դրանք հիմ-

նականում նորակազմություններ են կամ տերմիններ) ավելի բարեհունչ են և հանձնարարելի անհնչյունափոխ հիմքով տարբերակները՝ **խոսույթային, հատույթային**, **հատույթավորել**, **կշռույթավոր**, **ձևույթային, տիրույթային** են:

4. Ճիշտ տարբերակներ են **ի+ա→ե** հնչյունափոխությամբ առաջացած հետևյալ ձևերը՝ **ընտանի+ական→ընտանեկան, հարսանի(ք)+ական→հարսանեկան, պատանի+ական→պատանեկան**:

5. Հնչյունափոխվող և անհնչյունափոխ բաղադրական հիմքերում կատարվող տեղաշարժերը և տարբերակային ձևերի առաջացումը պայմանավորված են հընչյունափոխական որոշակի օրինաչափություններով: Այսպես.

● Սովորաբար հնչյունափոխվում են այն բառերի բաղադրական հիմքերը, որոնք ունեն գործածության մեծ հաճախականություն՝ **այգի**–*այգու,* **ծաղիկ**–*ծաղկի,* **գրիչ**–*գրչի,* **նկարիչ**–*նկարչի,* ***սունկ***–*սնկի,* ***մութ***–*մթի,* ***պատիժ***–*պատժի,* բայց՝ **արփի**–*արփիի,* **վարիչ**–*վարիչի,* **վտարանդի**–*վտարանդիի,* **ամիճ**–*ամիճի,* ***նուշ***–*նուշի* (բայց՝ *նշիկ*), ***ստրուկ***–*ստրուկի*:

● Տարբերակների ընտրության և գործածականության մեջ էական դեր է կատարում արտասանական էներգիայի տնտեսումը՝ սահուն, հեշտ և գեղեցիկ արտասանելու հանգամանքը. բարեհունչ են՝ *անուրջի, խորտիկի, ժպտի, հարիչի,* և հակառակը. դժվար են արտասանվում և անբարեհունչ են՝ *անրջի, խորտկի, ժպտի, հարչի*:

● Հնչյունափոխության մեջ առավել մեծ ակտիվություն են դրսևորում և տարբերակային ձևեր են կազմում երկրորդները՝ բառակազմական հիմքերը՝ *մատյան-ի/-ներ,* բայց՝ *մատենագիր, նվեր-ի/-ներ,* բայց՝ *նվիրատու, նվիրական, գույժ-ի/-եր,* բայց՝ *գուժկան, մշակույթ-ի/-ներ,* բայց՝ *մշակութային*:

● Որպես կանոն՝ և՛ ձևակազմության, և՛ բառակազմության մեջ հնչյունափոխության չեն ենթարկվում օտար բառերը և տերմինները՝ *ասպիրինի, մանդարինի, տերմինային, դելֆինանման, մարքսիստական*:

● Բաղադրական հիմքերում ընդհանուր միտումը անհնչյունափոխ տարբերակների աստիճանական տարածումն է:

ԲԱՌԱՑԱՆԿ

Այստեղ տրված են հնչյունափոխված և/կամ անհնչյունափոխ բաղադրական հիմքերով կազմություններ, որոնք հիմնականում ունեն ձևակազմական կամ բառակազմական տարբերակներ: Դրանք համեմատաբար հաճախակի կիրառություն ունեցող բառեր ու բառաձևեր են: Բառաձևերից հիմնականում տրվում են հոլովական կազմությունները, ավելի հազվադեպ՝ հոգնակիի ձևերը, քանի որ վերջիններում տարբերակային կազմությունները հազվադեպ են և հանդիպում են առավելապես միավանկ գոյականների պարագային՝ ***խուց – խցեր//խուցեր, կուժ – կժեր//կուժեր, սունկ – սունկեր//սնկեր, քուրձ – քուրձեր//քրձեր, քուրմ – քուրմեր//քրմեր:*** *Հոլովաձևերից ներկայացվում են առավելապես սեռական-տրականի ձևերը. որպես կանոն, այս հոլովաձևի տարբերակներին հատուկ գծերը (գրական-գրքային կամ խոսակցական երանգավորումը են) բնորոշ են նաև նույն բառի մյուս թեքված հոլովաձևերին: Օր.՝* ***բլուր*** *բառի սեռական-տրականի զուգաձևերն են՝* ***բլուրի*** *և* ***բլրի****. բացառ., գործ. հոլովաձևերը կազմվում են այդ երկու տարբերակների հիմքերով ու նմանողությամբ (****բլուրից//բլրից, բլուրով//բլրով****) և ունեն գրական-գրքային կամ խոսակցական նույն որակներն ու գործածության նույն հաճախականությունը, ինչ սեռական-տրականների ձևերը:*

Բառացանկում ըստ անհրաժեշտության նշվում են զուգաձևերի իմաստային տարբերությունները, ինչպես՝ ***ուղիղ – ուղիղություն*** *(ուղիղ լինելը) և* ***ուղղություն*** *(այն կողմը, դեպի ուր ուղղվում է գործողությունը),* ***վարիչ – վարչություն*** *(հիմնարկի՝ տնտեսության ղեկավար մարմինը) և* ***վարիչու-***

թյուն *(վարիչ լինելը, վարիչի պաշտոնը), հայտնի –* ***հայտնիություն*** *(հայտնի լինելը) և* ***հայտնություն*** *(հայտնվելը):*

Բառացանկը չծանրաբեռնելու համար այստեղ չենք զետեղել այն կազմությունները, որոնք թեև երբեմն մասնագիտական գրականության մեջ և կամ առանձին բառացանկերում ու բառարաններում նշվում են որպես հայերենում գործածվող ձևեր, սակայն կենդանի գրական լեզվում՝ արդի գրական հայերենում, ըստ էության անգործածական են: Օրինակ՝ ***Հ. Բարսեղյանի*** *«Հայերեն ուղղագրական-ուղղախոսական-տերմինաբանական բառարան»-ում (Եր., 1973), կանոնական ձևերին զուգահեռ, երբեմն որպես գործածական քերականական կազմություններ են նշվում այնպիսիք, որոնք, ըստ մեր ուսումնասիրությունների (ժամանակակից գրականության և լրատվության միջոցների լեզվական նյութի քննություն, վիճակագրական հարցումներ, «Արևակ»-ից քաղված տեղեկություններ են), այսօր ակնհայտորեն դուրս են մղված գրական լեզվից: Ինչպես՝* ***դասատուի//դասատվի, թուխպի//թխպի – թխպեր, ժպիտի//ժպտի, կապալառուի// կապալառվի, կատարածուի//կատարածվի, ճիտքի//ճտքի, ճիտքեր//ճտքեր, ճութեր//ճթեր****: Ավելին, առանձին դեպքերում այսօր արդեն իսկ հնացած ձևերը տրվում են որպես նախընտրելի, իսկ երբեմն՝ միակ ճիշտ տարբերակներ, ինչպես՝* ***անրջի//անուրջի****,* ***լրի//լուրի****,* ***կապալատվի//կապալատուի****,* ***կղբի//կուղբի****,* ***հարկատվի//հարկատուի****,* ***տկի//տիկի, տկեր****: Որոշ բառերի քերականական ձևերի վերաբերյալ առհասարակ տեղեկություն չի տրվում, թեև դրանք այլ աղբյուրներում արձանագրվում են ձևակազմական զուգաձևություններով, ինչպես՝* ***անդունդ, արճիճ, բազին, թիզ, թմբուկ, ծիլ, հարբուխ, ճիչ, ստրուկ, ցուլ*** *են:*

Դրանց զգալի մասը արդի հայերենում՝

● *բարբառային կամ խոսակցական ձևեր են՝* ***բաժինի, բժիշկի, գարունի, գիշերասկիզբի, իշի//իշու, լուսինի**, *խեցգետինի, ծաղիկի, մարմինի, տարեթիվի*** *են,*

● *հնացած և գործածությունից դուրս եկած տարբերակներ՝* ***ամբարձի (ամբարձիչ), բազնի (բազին), գալստի (գալուստ), դահլճի (դահլիճ), զարթուցչի (զարթուցիչ), թզի – թզեր (թիզ), թմբկի (թմբուկ), թխպի – թխպեր (թուխպ), ժպտի (ժպիտ), խճեր (խիճ), խփի – խփեր (խուփ), խնկեր (խունկ), ծլի – ծլեր (ծիլ), կղբի (կուղբ), հարբխի (հարբուխ), ճթի – ճթեր (ճութ), ճչի – ճչեր (ճիչ), մրճի (մուրճ), շթի – շթեր (շիթ), շվի – շվեր (շիվ), ստրկի (ստրուկ), սրճի – սրճեր (սուրճ), տզի – տզեր (տիզ), քղի (քուղ)*** են:

Ցանկում տրված զուգաձևերից հանձնարարելի են առաջին տարբերակները:

---

* Ըստ վիճակագրության՝ **լուսին** բառի **լուսինի** անհնչյունափոխ ձևը գերազանցապես **Լուսին** հատուկ անվան սեռական–տրականի ձևն է:

➢ ***Հնակազմություն***

Աղասի–Աղասիի//Աղասու
ածուխ–ածխի//ածուխի
ամբարձիչ–ամբարձիչի
անդունդ–անդունդի//
անդնդի
անիվ–անիվի//անվի
անուրջ–անուրջի
առաձանի–առաձանիի//
առաձանու
ավիշ–ավիշի
արծիվ–արծվի//արծիվի
արճիճ–արճճի//արճիճի
բազին–բազինի
բաժին–բաժնի
բացահայտիչ–բացահայտ-
չի//բացահայտիչի
բժիշկ–բժշկի
բլուր–բլրի//բլուրի
բու-բվի//բուի, բվեր//բուեր
բութ (մատը)–բթի//բութի,
բութեր//բթեր
բութ (կետ. նշան)–բութի,
բութեր
բուրգ–բուրգի//բրգի,
բուրգեր//բրգեր
բջիջ–բջջի//բջիջի
բուռ–բռի//բուռի,
բուռեր//բռեր
բռունցք–բռունցքի//բռնցքի
բրիչ–բրիչի//բրչի
գալուստ–գալուստի//
գալստյան
գավիթ–գավթի//գավիթի
գիշերասկիզբ–գիշերասկզբի
գյուղամեջ–գյուղամիջի//
գյուղամեջի
գլխագին–գլխագնի
գրիչ–գրչի//գրիչի
դահլիճ–դահլիճի
դահիճ–դահճի//դահիճի
Դավիթ–Դավիթի//Դավթի
երաժիշտ–երաժշտի//
երաժիշտի
երգիչ–երգչի//երգիչի
զարթուցիչ–զարթուցիչի
զատիկ–զատկի//զատիկի
էշ–էշի
Էրեբունի–Էրեբունու//
Էրեբունիի
թախիծ–թախծի//թախիծի
թավիշ–թավշի//թավիշի
թարգմանիչ–թարգմանչի//
թարգմանիչի

թիզ–թիզի, թիզեր
թիմ–թիմի, թիմեր
թթվածին–թթվածնի//թթվածինի
թմբուկ–թմբուկի
թոնիր–թոնրի//թոնիրի
թուզ–թզի//թուզի, թզեր//թուզեր
թուր–թրի//թուրի
թուխպ–թուխպի, թուխպեր
թումբ–թմբի, թմբեր
թուք–թքի//թուքի
ժպիտ–ժպիտի
լինդ–լնդի//լինդի, լնդեր//լինդեր
լուսավորիչ–լուսավորչի//լուսավորիչի
լուսին–լուսնի
լուր–լուրի
խարիսխ–խարսխի//խարիսխի
խեցգետին–խեցգետնի
խիճ–խճի//խիճի, խիճեր
խնդիր–խնդրի
խունկ–խնկի//խունկի, խունկեր
խնձորաչիր–խնձորաչրի//խնձորաչիրի
խորհուրդ–խորհրդի//խորհուրդի
խուփ–խուփի, խուփեր
խուրձ–խրձի//խուրձի, խրձեր//խուրձեր
խուց–խցի//խուցի, խցեր//խուցեր
ծաղիկ–ծաղկի
ծիլ–ծիլի, ծիլեր
ծիտ–ծտի, ծտեր
ծուխ–ծխի
ծունկ–ծնկի//ծունկի, ծնկներ//ծունկեր
ծնունդ–ծննդի//ծնունդի
կաթնասուրճ–կաթնասուրճի
կաղապարիչ–կաղապարիչի//կաղապարչի
կամուրջ–կամրջի//կամուրջի
կապալառու–կապալառուի
կապալատու–կապալատուի
կապիկ–կապիկի//կապկի
կառանիվ–կառանիվի
կավիճ–կավճի//կավիճի
կարգավորիչ–կարգավորիչի//կարգավորչի
կարկուտ–կարկտի//կարկուտի
կարմիր–կարմրի//կարմիրի
կացին–կացնի//կացինի
կերակուր–կերակրի//կերակուրի

կիսաշապիկ–կիսաշապի-
կի// կիսաշապկի
կծիկ–կծիկի
կնճիռ–կնճիռի//կնճռի
կշիռ–կշիռի//կշռի
կոշիկ–կոշիկի//կոշկի
կուժ–կժի//կուժի, կժեր//
կուժեր
կուզ–կուզի
կուղբ–կուղբի
կուպր–կուպրի
կուտ–կուտի//կտի,
կուտեր//կտեր
կսկիծ–կսկիծի//կսկծի
կտուց–կտուցի//կտցի
կրունկ–կրնկի//կրունկի
համակարգիչ–համակարգ-
չի //համակարգիչի
հաշիվ–հաշվի
հատկացուցիչ–հատկա-
ցուցչի//հատկացուցիչի
հարբուխ–հարբուխի
հեծանիվ–հեծանիվի//
հեծանվի
հովիվ–հովվի//հովիվի
հովիտ–հովտի//հովիտի
ձայնանիշ–ձայնանիշի//
ձայնանշի
ձվաբջիջ–ձվաբջջի//ձվա-
բջիջի
ճիչ–ճիչի, ճիչեր
ճիտք-ճիտքի//ճտքի,
ճիտքեր//ճտքեր
ճութ-ճութի, ճութեր
մածուն–մածունի//մածնի
մահիճ–մահճի//մահիճի
մամուռ–մամուռի//մամռի
մանրանկարիչ–մանրա-
նկարչի
մարգագետին–մարգագետ-
նի//մարգագետինի
մարգարիտ–մարգարտի//
մարգարիտի
մարզիչ-մարզչի//մարզիչի
մարմին–մարմնի
մեջ–միջի//մեջի
մոխիր–մոխրի//մոխիրի
մրջյուն–մրջյունի//մրջնի
մութ–մթի//մութի
մուխ–մխի//մուխի
մուր–մրի//մուրի
մուրճ–մուրճի
նախիր–նախրի//նախիրի
նարինջ–նարնջի//նարինջի
ներքնաշապիկ–ներքնաշա-
պիկի//ներքնաշապկի
նկարիչ–նկարչի//նկարիչի
նուշ–նուշի//նշի, նուշեր
շամփուր–շամփուրի//
շամփրի

շապիկ–շապիկի//շապկի
շառավիղ–շառավղի//շառավիղի
շավիղ–շավղի//շավիղի
շիթ– շիթի, շիթեր
շիվ–շիվի, շիվեր
ոջիլ–ոջլի//ոջիլի
ոսկերիչ–ոսկերչի//ոսկերիչի
որոշիչ–որոշչի//որոշիչի
պահակագունդ–պահակագնդի
պանդուխտ–պանդուխտի//պանդխտի
պանիր–պանրի//պանիրի
պատիժ–պատժի//պատիժի
պատիվ–պատվի//պատիվի
պարիսպ–պարսպի//պարիսպի
պռունկ–պռնկի//պռունկի
ջեռուցիչ–ջեռուցիչի//ջեռուցչի
Սարգիս–Սարգսի//Սարգիսի
սուգ–սգի//սուգի
սերունդ–սերնդի//սերունդի
սունկ–սնկի//սունկի, սնկեր//սունկեր
սինձ–սնձի//սինձի
սնունդ–սննդի//սնունդի
սոսինձ–սոսնձի//սոսինձի
ստրուկ–ստրուկի
սուրճ–սուրճի, սուրճեր
սրինգ–սրնգի//սրինգի
վերնաշապիկ–վերնաշապիկի//վերնաշապկի
վճիռ–վճռի//վճիռի
վրձին–վրձնի//վրձինի
տաճիկ–տաճիկի//տաճկի
տառանիշ–տառանիշի//տառանշի
տավիղ–տավղի//տավիղի
տարեթիվ–տարեթվի
տեսուչ–տեսուչի
տիզ–տիզի, տիզեր
տիկ–տիկի, տիկեր
տիղմ–տիղմի
տիպ–տիպի
տորմիղ–տորմիղի
ցուլ–ցուլի//ցլի, ցուլեր//ցլեր
ցուցիչ–ցուցիչի//ցուցչի
փուռ–փռի//փուռի, փռեր//փուռեր
փրկագին–փրկագնի
փրկիչ–փրկչի//փրկիչի
փունջ–փնջի//փունջի, փնջեր//փունջեր
փոթորիկ–փոթորկի//փոթորիկի
քարաբլուր–քարաբլրի//քարաբլուրի

քարաձուխ–քարաձխի//
քարաձուխի
քննիչ–քննիչի
քուղ–քուղի
քուրձ–քրձի//քուրձի,
քրձեր//քուրձեր
քուրմ–քրմի//քուրմի,
քրմեր//քուրմեր
քրտինք–քրտինքի//քրտնքի
ֆինտեսուչ–ֆինտեսուչի

➢ ***Բառակազմություն***

ալյուր–ալրաղաց
ածուխ–ածխանման//ածու-
խանման
անուրջ–անրջածին//
անուրջածին
արժույթ–արժութային//
արժույթային
արճիճ–արճճանման//
արճիճանման
արյուն–արնաթոր//արյու-
նաթոր, արնաշա-
ղախ//արյունաշաղախ,
արնանման//արյու-
նանման, արնահամ//
արյունահամ
բարդույթ–բարդույթավոր-
ված//բարդութավոր-
ված
բարի–բարություն//բարիու-
թյուն
բիրտ–բրտորեն//բիրտորեն
բութ (երկրչփ.)–բութանկյուն
բութ (մարմնի մաս)–բթամատ
բուրգ–բրգաձև//բուրգաձև
գյուղացի–գյուղացիություն//
գյուղացություն
գործառույթ–գործառույթա-
յին//գործառութային
եղջյուր–եղջերավոր//եղջյու-
րավոր, եղջերանման//
եղջյուրանման
երևույթ–երևութական
երկճյուղ–երկճյուղանի//
երկճղանի

զրույց–զրուցընկեր, զրուցասեր, զրուցարան, զրուցաբանել, զրուցակից

էշ–իշուկ//էշուկ, իշատեր//էշատեր

ընկույզ–ընկույզկոտրիչ//ընկուզկոտրիչ

ժանյակ–ժանեկահյուս//ժանյակահյուս, ժանեկաձև// ժանյակաձև, ժանեկավոր//ժանյակավոր, ժանեկազարդ //ժանյակազարդ

խարիսխ–խարսխաձև//խարիսխաձև

խնամի–խնամիություն//խնամություն (խսկց.)

ծիլ–ծլարձակում//ծիլարձակում

կազմակերպիչ–կազմակերպչական (կազմակերպիչին հատուկ)

կացին–կացնահար//կացինահար

կղզի–կղզիաբնակ//կղզեբնակ

հայտնի –հայտնիություն (հայտնի լինելը)//հայտնություն (ի հայտ գալը)

հանգույց–հանգուցալուծում, հանգուցակետ, հանգուցաձև, հանգուցակայան, հանգուցաշատ, հանգուցային

հասույթ–հասույթային

հատույթ–հատույթավորված, հատույթային

հղի–հղանալ (որևէ միտք ծագել)//հղիանալ (հղի դառնալ)

ձևույթ–ձևույթային//ձևութային

ձյուն–ձյունակոլոլ//ձնակոլոլ, ձյունակույտ//ձնակույտ

մշակույթ–մշակութային, մշակութաբան, մշակութասեր

մորթի–մորթապաշտ//մորթիապաշտ

մրցույթ–մրցութային//մրցույթային

նուշ–նշաձև

շահույթ–շահութաբեր, շահութաբաժին, շահութահարկ

ողկույզ–ողկույզազարդ//ողկուզազարդ, ողկույզանման//ողկուզանման

ոսկի–ոսկեփայլ//ոսկիափայլ

սովորույթ–սովորույթային//սովորութային

վայրկյան–վայրկենական//վայրկյանական, վայրկենապես//վայրկյանապես (բայց՝ վայրկյանաչափ)

վանեցի–վանեցիություն//վանեցություն

վարիչ–վարչություն (հիմնարկի՝ տնտեսության ղեկավար մարմինը)//վարիչություն (վարիչ լինելը, վարիչի պաշտոնը)

տիրույթ–տիրույթային

ուղիղ–ուղիղություն (ուղիղ լինելը)//ուղղություն (այն կողմը, դեպի ուր ուղղվում է գործողությունը)

1.4. *ՇԵՇՏ*

1. Մի շարք բազմավանկ բառեր կրում են երկու շեշտ, որոնցից մեկը գլխավոր է (ավելի ուժեղ է), մյուսը՝ երկրորդական, ինչպես՝ **ե՛նթահամակարգայի՛ն**, **հա՛մապետակա՛ն**, **վե՛րագործարկո՛ւմ** են (առաջինը՝ թույլ, երկրորդը՝ ուժեղ):

2. Եթե բազմավանկ բառի վերջին ձայնավորը գրվող կամ չգրվող **ը**-ն է, ապա շեշտն ընկնում է նախորդ վանկի ձայնավորի վրա՝ **ա՛րկդ, բա՛ռձր, գի՛րքը**: Եթե **ը**-ն բառի միակ ձայնավորն է, ապա գրվում է և շեշտվում՝ **հը՛, չը՛խկ, շրը՛խկ,** բայց՝ **չրխկո՛ց, շրխկա՛լ** են:

3. Որոշ բառերում շեշտվում է նախավերջին կամ նրան նախորդող մեկ այլ վանկի ձայնավորը՝ **գրե՛թե, իհա՛րկե, մի՛միայն, նա՛մանավանդ, մի՛գուցե, մի՛թե, ո՛րերորդ, ո՛րևէ, որպե՛սզի** են:

4. Երկակի արտասանություն ունեն մի քանի այլ բառեր՝ **գո՛նե – գոնե՛, գու՛ցե – գուցե՛, նա՛[յէվ] – նաև՛, մա՛նավանդ – մանավա՛նդ, նո՛ւյնիսկ – նույնի՛սկ, նո՛ւյնպես – նույնպե՛ս, նո՛ւյնպիսի – նույնպիսի՛, նո՛ւյնքան – նույնքա՛ն** են:

5. Երկակի արտասանություն է վերագրվում նաև **-երորդ** մասնիկով կազմված թվականներին՝ **հի՛նգերորդ – հինգերո՛րդ, տա՛սներորդ – տասներո՛րդ, երեսուներե՛քերորդ – երեսուներեքերո՛րդ, քսա՛ներորդ – քսաներո՛րդ** են: Սովորական են դրանց առաջին տարբերակները:

6. Եթե բառը բարդ է, և բաղադրիչները կազմում են հարադրություն, ապա շեշտը հաճախ դրվում է առա-

ջին բաղադրիչի վրա՝ **ասե՛ս թե, դո՛ւրս գալ, զա՛րկ տալ, ի՛նչ-որ, խո՛սք տալ, հե՛նց որ, միա՛յն թե, մի՛տք անել, նե՛րս մտնել, վե՛ր կենալ, ո՛ւր որ է, օ՛ր օրի**: Այլ դեպքերում հիմնական շեշտը դրվում է հարադրության վերջին բաղադրիչի վրա՝ **ասել-խոսե՛լ, ի դե՛պ, առ ա՛յն** են:

7. Օտար հատուկ անունների ուղիղ ձևերում պահպանվում է բնագրի շեշտադրությունը, իսկ թեքված կամ ածանցված ձևերում գործում է հայերենի ընդհանուր կանոնը՝ **Բերեզո՛վսկի – Բերեզովսկիների՛, Դոստոև՛սկի – Դոստոևսկո՛ւ, Եսե՛նին – Եսենինո՛վ, Լե՛նին – լենինյա՛ն, Պո՛ւշկին – Պուշկինի՛, Ֆրա՛նսիա – Ֆրանսիայի՛ց:**

8. Վերջին շրջանում, սակայն, նկատվում է արտասանական տեղաշարժ. այս բառերի թեք ձևերում նույնպես պահպանվում է բնագրի շեշտադրությունը՝ **Եսե՛նինի, Ֆրա՛նսիայից, Դոստոև՛սկու,** կամ՝ **ֆի՛զիկայի, մաթեմա՛տիկայից** են: Թեև ՀՀ լեզվի պետական տեսչության տերմինաբանական կոմիտեի որոշումը վերապահում է անում միայն օտար հատուկ անունների համար, սակայն այս կանոնի շրջանակներն ընդլայնվում են՝ տարածվելով նաև օտարամուտ (փոխառյալ) հասարակ անունների վրա՝ **օ՛պերա, ֆի՛զիկա, բրա՛ուզեր, օ՛պտիկա, կոմե՛դիա, մաթեմա՛տիկա** են: Դրանք կարելի է համարել արտասանական զուգաձևեր՝ նախապատվությունը տալով հայերենի արտասանական կանոնով տարբերակներին:

Բ 2. ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

2.1. *ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ ԵՎ ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ*

1. Վանկի արժեք չունեցող տառային հապավումները կարդացվում են տառ առ տառ: Օր.՝ **ԱՊՀ [ապրիը], ԿԳՆ [կրզրնը], ԱԳՆ [ազրնը]:** Արևմտահայերենից անցած այդպիսի տառային հապավումները հաճախ կարդացվում են տառերի անվանումներով: Օր.՝ **ՀՅԴ [հոհիդա], ՀՄԸՄ [հոմենբրմեն]**:

2. Օտար լեզուներից վերցված տառային հապավումները (հայագիր փոխառյալ հապավումներ), եթե կարդացվում են տառերի անվանումներով, ինչադարձվում են և գրվում յուրահատուկ ձևով՝ որպես վանկային հապավումներ և մասամբ մեծատառով, օր.՝ **ՍԻԷՆԷՆ**, **ԲԻԲԻՍի**, **ԷյԲԻՍի**, իսկ եթե կարդացվում են որպես սովորական բառ, ապա գրադարձվում են և գրվում սովորական տառային հապավումների ձևով, օր.՝ **ՆԱՏՕ**, **ՅՈՒՆԵՍԿՕ**, **ԳՈՒԱՄ** են: Կարդացվում են և՛ թարգմանաբար, և՛ բնագրի լեզվով, ինչպես՝ **ՅՈՒՆԵՍԿՕ** – Կրթության, գիտության և մշակույթի հարցերով ՄԱԿ-ի կազմակերպություն / **UNESCO** – United Nations Educational, Scientific and Cultural Organization, **ՆԱՏՕ** – Հյուսիսատլանտյան դաշինքի կազմակերպություն / **NATO** – North Atlantic Treaty Organization, **զագս** – Քաղաքացիական կացության ակտերի գրանցում (ՔԿԱԳ):

3. Կանոնի համաձայն՝ ուղիղ ձևով (առանց **հոլովական** վերջավորության) գործածվում են միայն հատկացուցչի պաշտոնում կիրառվող այն տառային հապավումները, որոնց բաղադրիչ տառերն արտասանվում են առանձին-առանձին (բաղաձայններն ուղեկցվում են չգրվող **ը**-ով), օր.՝ **ՀՀ** *Ազգային ժողով,* **ԱԺ** *պատգամավոր,* **ՀՀ** *արտգործնախարարություն,* ***ՀՀԿ*** *խմբակցություն,* **ԱՊՀ** *երկրներ,* **ԱԺՄ** *նախագահ,* **ՀԲԸՄ** *վարժարաններ,* **ՀՀ ԿԳ** *նախարար,* ***ՊՆ*** *հայտարարությունը:* Մյուս բոլոր դեպքերում, ըստ նույն որոշման, տառային հապավումները պետք է գործածել հոլովումներին հատուկ վերջավորություններով (կամ հոդերով), օր.՝ **ՄԱԿ-ի** *անվտանգության խորհուրդ,* **ԱՄՆ-ի** *և* **ՌԴ-ի** *միջև,* **ՀՀ-ից** *արտաքսված,* **ՀԵԿ-ը** *ակտիվացրել է գործունեությունը,* **ՀՕՄ-ի** *ծրագիրը,* **ՕԵԿ-ի** *ներկայացուցիչը,* **ՀՀ ԿԲ-ն** *հանդես է եկել նախաձեռնությամբ, այդ գործով զբաղվեց* **ՊԱԿ-ը, ԱՄՆ-ում** *Հայաստանի դեսպան:*

4. Գրավոր խոսքում երբեմն չի պահպանվում ընդունված սկզբունքը. բաղադրիչ տառերն առանձին-առանձին (բաղաձայնները՝ **ը**-ով) հնչող հապավումը գործածվում է ոչ թե ուղիղ, այլ թեք ձևով (***ՀԺՀ-ի*** *կառավարությունը,* ***ՀԲԸՄ-ի*** *մասնաճյուղ,* ***ՔԴՄ-ի*** *հայտարարությունը,* ***ԱՄՆ-ի*** *Կոնգրեսը*), կամ միևնույն հապավումը, ըստ արտասանության, գրվում է մեկ ուղիղ, մեկ թեք ձևով, ինչպես՝ **ԱԺ** *խոսնակ,* **ԱԺ-ի** *կանոնակարգը,* **ԿԲ-ի** *աշխատակիցներ,* **ԿԲ** *գործունեությունը,* **ԱՄՆ** *դոլար,* **ԱՄՆ-ի** *Սենատը,* **ԱՄՆ-ի** *շահերը:*

5. Տերմինաբանական կոմիտեի հիշյալ որոշումից են-

թադրվում է, որ **ԱՄՆ** հապավումի արտասանության ճիշտ տարբերակը իբր բաղադրիչ տարրերի (բաղաձայնների) առանց **ը**-երի արտասանությունն է, մինչդեռ այդ հապավման ճիշտ և ընդունված արտասանության մեջ բաղաձայնները ուղեկցվում են չգրվող **ը**–երով՝ **ԱՄ[ը]Ն[ը]**, ինչպես՝ **Զ[ը]Լ[ը]Մ[ը]**, **Հ[ը]Գ[ը]Մ[ը]**, **ԱԳ[ը]Ն[ը]**, **ՀԱՊ[ը]Կ[ը]**:

Այն հապավումները, որոնք ունեն **ը** վերջնահանգ, որոշյալ առումով գործածվելիս պետք է արտասանվեն **ն**-ով: Սխալ են՝ **ԱՄՆ*[ը]*** կարևորում է հարցը, **ՉԺՀ*[ը]*** վճռական է տրամադրված, **ԿԳՆ*[ը]*** որոշում է ընդունել: Ճիշտ են՝ **ԱՄՆ*[ը]-ն*** կարևորում է հարցը, **ՉԺՀ*[ը]-ն*** վճռական է տրամադրված, **ԿԳՆ*[ը]-ն*** որոշում է ընդունել:

Համառոտագրություններ.

1. Գրվում է բառի սկզբնատառը, և կողքը կետ է դրվում, օր.՝ **Վ. Թալին** (Վերին Թալին), **մ. թ. ա.** (մեր թվարկությունից առաջ), **ն. Ք.** (նախքան Քրիստոսը) կամ **Ք. ա.** (Քրիստոսից առաջ), **ս. թ.** (սույն թվականի), **պ.** (պարոն):

2. Առանց կետի են գրվում չափի և կշռի որոշ միավորներ, օր.՝ **վ** (վոլտ), **մվ** (միլիվոլտ), **կվ** (կիլովոլտ), **ր** (րոպե), **լ** (լիտր), **գ** (գրամ), **մ^3** (մետր խորանարդ), **մմ^2** (միլիմետր քառակուսի), **մ/վ** (մետր-վայրկյան):

3. Ավելի հասկանալի լինելու համար երբեմն գրվում են բառի առաջին մի քանի տառերը՝ բաղաձայնից հետո ընկած մասի կրճատումով: Օր.՝ **Հովհ. Թումանյան** (Հովհաննես Թումանյան), **օր.** (օրինակ), **հազ.** (հա-

զար), **գնդ.** (գնդապետ):

4. Գրվում են բառի միայն բաղաձայնները կամ դրանց մեծ մասը, օր.՝ **հմմտ**. (համեմատի՛ր), **պրն** (պարոն), **արևմտ**. (արևմտյան), **թրգմ**. (թարգմանություն), **մանգ**. (մասնագիտական), **հմ**. (համար), **հզվդ**. (հազվադեպ), **օտրբ**. (օտարաբանություն), **դվնգ**. (դիվանագիտական), **փխբ**. (փոխաբերական), **բժշկ**. (բժշկագիտական), **տնտսգ**. (տնտեսագիտական), **ժող**. (ժողովրդական):

4. Եթե բառի վերջին բաղաձայնը գրվում է, ապա կետ չի դրվում, օր.՝ **մլն** (միլիոն), **մլրդ** (միլիարդ), **հվ** (հարավ), **պրն** (պարոն), **ևն** (և այլն):

5. Գրվում են բառի առաջին և վերջին տառերը կամ սկիզբն ու վերջը՝ միության գծիկով, օր.՝ **պ-ն** (պարոն), **դ-ր** (դոկտոր), **մ-ր** (մայոր), **գ-տ** (գնդապետ), **փ/գ-տ** (փոխգնդապետ), **գ-լ/գ-տ** (գեներալ–գնդապետ) ևն:

6. Չափ ու կշռի միավորների բաղադրյալ անվանումների համառոտագրությունները գրվում են երկու (երբեմն՝ երեք) տառով (բաղադրիչների սկզբնատառերով), միասին և առանց կետի՝ նմանվելով փոքրատառով գրվող տառային հապավումների: Օր.՝ **կգ** (կիլոգրամ), **սմ** (սանտիմետր), **քմ** (քառակուսի մետր), **ՄԲ**[*] (մեգաբայթ), **կԲ** (կիլոբայթ), **դԲ** (դեցիբել), **Վտ** (վատտ), **դցմ** (դեցիմետր), **հա** (հեկտար): Սրանք հա-

---

[*] Տե՛ս ՀՀ Կառավարության որոշումը «Մեծությունների միավորների, չափումների.... մասին», «ՀՀ ՊՏ», 2012, 10.03/48 (922): Չափման տարբեր միավորների գրությունը միօրինակացնելու համար թերևս անհրաժեշտություն կա որոշումը վերանայելու:
Հանձնարարելի կարելի է համարել համառոտագրությունների միայն փոքրատառով գրությունը:

պավում չեն (ինչպես **բուհ**-ը, **ջէկ**-ը), քանի որ նոր բառ չեն դարձել և կարդացվում են լրիվ ձևով:

7. Բառակապակցությունը կամ բարդությունը համառոտագրելիս երբեմն գրվում են բաղադրիչների սկզբնատառերը՝ թեք գծով և առանց կետերի, օր.՝ **ս/թ** (սույն թվի), **զ/ֆ** (գեղարվեստական ֆիլմ), **զ/ծ** (զինծառայող), **զ/մ** (զորամաս):

8. Եթե համառոտագրվող բառը հոգնակի թվով է, ապա համառոտագրությունը կրկնվում է (առանց բացատի), օր.՝ **պրոֆ.պրոֆ.** (պրոֆեսորներ), **ընկ.ընկ.** (ընկերներ): Մեկ տառով համառոտագրությունները կրկնվելիս գրվում են միասին՝ մեկ ընդհանուր կետով, օր.՝ **թթ**. (թվականներ), **դդ**. (դարեր), **հհ*.* (հատորներ), **պպ**. (պարոններ): Համառոտագրությունները փոքրատառով են գրվում, եթե հասարակ անուններ են (օր.՝ մ. թ. ա.), և մեծատառով, եթե հատուկ անուններ են (օր.՝ Ա. Ս. Պուշկին, Ք. ա., Ք. հ.):

9. Երբեմն առանձին համառոտագրությունների բաղադրիչներ արագագրությամբ միացնում են իրար՝ կազմելով յուրօրինակ հապավումներ, որոնք գրական լեզվում հանձնարարելի չեն, քանի որ մթագնում են հասկացության իմաստը. **ՀՀ քրօր,** փոխ.՝ **ՀՀ քր. օր.** (ՀՀ քրեական օրենսգիրք), **ՀՀ քրդատ.**, փոխ.՝ **ՀՀ քր. դատ.** (ՀՀ քրեական դատավարություն), **ՀՀ ջրօր.,** փոխ.՝ **ՀՀ ջր. օր.** (ՀՀ ջրային օրենսգիրք):

10. Շփոթության առիթ է ստեղծվում այն դեպքում, երբ համառոտագրությունը համընկնում է նույն կազմությամբ ամբողջական բառի հետ՝ **բանկ//բանկ.** = *բան-*

կային, **ֆինանս//ֆինանս.** = *ֆինանսական*, **իրավ//իրավ.** = *իրավաբանական* են: Կարելի է պահպանել տառերի առավելագույն քանակ, բայց ոչ ավելի, քան ընդունված է հասկանալի լինելու համար՝ **արտասահմ.** = արտասահմանյան, **ֆին.** = ֆինանսական, **իրավաբ.** //**իրավբ.** (նախընտրելի) = իրավաբանական, բայց նաև՝ **ս. թ.** = սույն թվականի:

2.2. *ՕՏԱՐ ԲԱՌԵՐ*

Հայտնի է, որ լեզվի բառապաշարը համեմատաբար արագ փոփոխվող բաց համակարգ է: Մեր օրերում գիտության բոլոր ոլորտների աննախընթաց զարգացումը, մշակութային փոփոխությունները, տեղեկատվական և նորարարական (ինովացիոն) տեխնոլոգիաների նորագույն ձեռքբերումներն իրենց անմիջական արտահայտությունն են գտնում լեզվի բառապաշարում: Պայմանավորված այս զարգացումներով՝ բառամթերքը մշտապես համալրվում է տարբեր լեզուներից փոխառված օտար բառերով: Լեզվի բառապաշարի այսպիսի համալրումը չդադարող, բնականոն, ինչ-որ առումներով նաև անհրաժեշտ ու պարտադիր գործընթաց է: Այն նաև լեզվի բառային կազմը հարստացնելու հիմնական միջոցներից է: Օտար բառերի մուտքը հայերենի բառապաշար տևական, նույնիսկ ամենօրյա գործընթաց է: Մեր տպավորությամբ, սակայն, այդ բառերի քանակը չի ստվերում հայերենի բառամթերքը երկու պատճառով:

Առաջին. արդի հայերենում գիտակցվող[4] օտար բառերի քանակը, այսպես ասած, չի հատում վտանգավորության սահմանը. ըստ նորագույն տվյալների՝ արդի հայերենի բառերի թիվը անցնում է 300.000-ից, մինչդեռ ըստ Ա. Հայրապետյանի «Օտար բառերի բառարան»-ի (Եր., 2011)՝ օտար բառերի թիվը արդի արևելահայերե-

[4] **Գիտակցվող օտար բառ** ասելով՝ նկատի ունենք այն փոխառությունները, որոնք առանց մասնագիտական միջամտության հանրորեն գիտակցվում են որպես օտարամուտ բառեր: Դրա պատճառը տվյալ բառի գործածությունն է հանրությանը ծանոթ որևէ այլ լեզվում:

նում հասնում է շուրջ 10.000-ի: Ենթադրենք, որ մի քանի տարվա ընթացքում մեր լեզու են թափանցել մոտ 2000-3000 օտար բառեր, որոնք դեռևս բառարանային գրանցում չունեն: Ըստ մոտավոր հաշվումների՝ գիտակցվող օտար բառերը կազմում են մեր լեզվի բառապաշարի մոտ 4-7%-ը: Հետևաբար ընդունելի պիտի համարել, որ օտար բառերի այս չափը վտանգավոր չի կարող լինել լեզվի բառապաշարի համար, առավել ևս չի կարող «սպառնալ» դրա որակական հատկանիշներին: (Ընդ որում, այսպիսի տոկոսային հարաբերությունը բնորոշ է կենդանի ու զարգացող լեզուների զգալի մասին):

Երկրորդ. հայոց լեզուն անցնում է ինքնամաքրման համեմատաբար կայուն ճանապարհ՝ շնորհիվ իր բառակազմական և իմաստափոխական ճկուն հնարավորությունների: Հայերենը հետևողական պայքար է մղում՝ փորձելով յուրաքանչյուր օտար բառի դիմաց ստեղծել դրա համարժեքը՝ ի տարբերություն, օրինակ, ռուսերենի կամ անգլերենի, որոնք, օտար բառերը արագ յուրացնելով, ձուլում են իրենց բառապաշարին՝ դրանք հարմարեցնելով նաև իրենց բառակազմական ու ձևակազմական ներքին հնարավորություններին: Եվ շատ դեպքերում այդ պայքարը ավարտվում է հօգուտ և ի շահ հայոց լեզվի անաղարտության (երբ համարժեքը ներլեզվական անխախտ օրինաչափություններով է ստեղծված (կարճ է, բարեհունչ է, ունի իմաստային ճշգրիտ կամ մոտ համապատասխանություն ևն)):

Ըստ էության, մի կողմից՝ օտար բառերի փոխառումը, մյուս կողմից՝ հայերեն համարժեքների հաստատումն

ու գործառումը փոխադարձաբար նպաստում են պահպանելու օտարալեզու փոխառությունների հաշվեկշիռը բառապաշարում: Եվ այսպիսի զարգացումներում ժամանակ առ ժամանակ անհրաժեշտություն է առաջանում մասնագիտական որոշակի միջամտության: **Նախ՝** հարկ է լինում ճշգրտումներ կատարելու օտար բառի և դրա հայերեն համարժեքի համապատասխանության միջև: **Ապա՝** ներլեզվական ընդունված սկզբունքների հիման վրա խնդիր է դրվում մերժելու կամ թույլատրելի (հանձնարարելի) համարելու այս կամ այն օտար բառի գործածությունը: **Եվ հետո՝** որոշակի լեզվաքաղաքականության միջոցով անհրաժեշտ է լինում կյանքի կոչել նորաստեղծ հայերեն համարժեքը, տարածել և ամրագրել այն գործածության բոլոր հնարավոր ոլորտներում: Միաժամանակ կարևորվում է փոխառված բառի տառադարձության ճշգրտումը:

ԲԱՌԱՑԱՆԿ

Վերը նշված առումներով օտար բառերի և դրանց հայերեն համարժեքների քիչ թե շատ ամբողջական բառացանկի կազմումը, կարծում ենք, անհրաժեշտ է և ունի գործնական կարևոր նշանակություն: Այն նպատակ ունի՝ ***1.*** *ամրագրելու և տարածելու օտար բառերի հայերեն հաջողված համարժեքները,* ***2.*** *արձանագրելու անհրաժեշտ փոխառությունների կիրառության թույլատրելիությունը արդի հայերենում:*

Բառացանկը շարքային լեզվակիրառողի համար կլինի յուրօրինակ ***բառգիրք****՝ ամենօրյա գործածության համար: Այն նաև փորձ է արձանագրելու վերջին 1-2 տասնամյակում գրական հայերենի բառային կազմում կատարված տեղաշարժերը և ամրագրելու բառային տարբերակների որոշակի անցումները:*

Բառացանկը կազմված է հենց այս տրամաբանությամբ: Ընդգրկում է գիտության տարբեր ոլորտների վերաբերող բառեր, տերմինային համակարգերին կամ զբաղմունքային բառապաշարին պատկանող այնպիսի բառամիավորներ, որոնք հանրածանոթ են և գործածության համեմատաբար մեծ հաճախականություն[5] *ունեն նաև ոչ մասնագիտական միջավայրում: Հանրության լայն շրջաններում այս կամ այն առիթով հաճախ են հնչում, օրինակ, բժշկագիտական, տնտեսագիտական, իրավաբանական, քաղաքագիտական տերմիններ՝* ***ամնեզիա, ինֆլյացիա, հոլդինգ, ալիմենտ, ամնիստիա, կոմպլեմենտար, քասթինգ****, և այլ օտար բառեր, որոնց իմաստները հաճախ հասկանալի չեն: Դրանից էապես տուժում է տեղեկույթը: Հետևաբար ներկայացվող բառացանկի համապատասխան բաժիններում ներառվել*

---

[5] Ինչ խոսք, բառի կիրառության հաճախականության հարցը փոքր-ինչ վիճահարույց է և կարող է տարակարծությունների տեղիք տալ: Այսուհանդերձ, բառի գործածության հաճախականությունը որոշելու համար փորձել ենք առաջնորդվել բառարանային նշումներով (եթե դրանք կան), «Արևակ»-ով, դպրոցական դասագրքերի տեղեկություններով, ԶԼՄ-ներում, ինչպես նաև առօրյա-խոսակցական լեզվում դրանց գործածականությամբ: Անշուշտ, բառացանկի ոչ բոլոր բառերն են բնորոշվում նույն հաճախականությամբ, բայց և այնպես փորձել ենք առաջնորդվել գոնե մոտավոր վիճակագրությամբ:

են նաև այս կարգի բառեր: Բայց, օրինակ, նշված ոլորտներից ***ացիդոզ, ակրեդիտիվ, կրիպտոսպորիդոզ, հեմիպլեգիա, բայբեք, ռոլովեր, սենյորաժ*** *և բազմաթիվ այսպիսի բառեր, որոնք խիստ նեղ մասնագիտական կիրառելիություն ունեն և հանրային երկխոսության հարթակներում հազվադեպ են հանդիպում, բառացանկում չեն ընդգրկվել երկու պատճառով:* ***Նախ՝*** *նեղ մասնագիտական բառապաշարի ներմուծումը, կարծում ենք, արհեստականորեն ուռճացնելու էր ոչ միայն բառացանկը, այլև արդի հայերենում օտար բառերի «գոյության» իրական ծավալները:* ***Ապա՝*** *այս բառացանկը, մեկ տեղում ամբարելով արդի արևելահայերենում ամենագործածական օտար բառերը և դրանց հայերեն համարժեքները, նպատակ ունի հայախոս հանրությանը հնարավորինս ծանոթացնելու դրանց, ճանաչել տալու համարժեք փոփոխակները, օտար բառերով ծանրաբեռնված հայերեն խոսքը փոքր-ինչ «բեռնաթափելու» և ըստ անհրաժեշտության կողմնորոշելու հենց օտար բառի ընտրության հարցում: Եվ եթե որևէ բառախմբում հանդիպում են տերմիններ, որոնք առաջարկվում է փոխարինել ոչ այնքան դիպուկ, բայց հասկանալի մեկ այլ տարբերակով, ապա նպատակը մեկն է՝ ոչ մասնագիտական լսարանին տեղեկությունը մատուցել պարզ, հասկանալի միջոցներով:*

Բառացանկում ներառված բառապաշարը ունի որոշակի շերտեր, որոնք արտահայտել ենք պայմանական նշաններով՝ ***աջ սլաք*** (⇒), ***երկկողմ սլաք*** (⇔), ***ձախ սլաք*** (⇐):

1. Աջ սլաքով (⇒) *տրվում են այն օտար բառերը, որոնք ունեն հայերեն համարժեքներ: Հայերեն տարբերակները հաղթել են և գործածվում են գրական լեզվում: Այդ բառերը մեծ մասամբ կա՛մ նորակազմ բառեր ու բառակապակցու-*

թյուններ են, կա՛մ իմաստային նորաբանություններ: Դրանց զգալի մասը տարածված է, հանրորեն գիտակցված, սակայն այլևայլ պատճառներով (հանձնարարող նորմերի բացակայություն, լեզվակիրառողի անտեղյակություն, օտարալեզու կրթության ազդեցություն, անհատական ճաշակ են) չի գործածվում: Հայերեն համարժեքները հիմնականում համապատասխանում են մեր լեզվի բառակազմական և իմաստաբանական նորմերին. մեծ մասամբ հստակ արտահայտում են հասկացության բովանդակությունը, բառակազմական տեսակետից ճկուն են, բարեհունչ, դյուրընկալ և հանրահասկանալի: Մի կարևոր հանգամանք ևս. դրանք հաճախ լրիվ կամ մասնակի պատճենումով կազմված բառեր են. ասել է թե՝ հայերեն համարժեքը շատ դեպքերում ճշգրտորեն փոխանցում է փոխատու լեզվում օտար բառի ունեցած նշանակությունը: Կարծում ենք՝ սա նույնպես կարևոր հանգամանք է հայերեն փոփոխակը ճանաչելի և կիրառելի դարձնելու համար: Ցանկալի է, որ դրանք գրական հայերենում ամրագրվեն որպես միակ հանձնարարելի տարբերակներ: Այսպիսով՝ աջ սլաքով (⇒) տրված օտար բառերը օտարաբանություններ են:

2. Երկկողմ սլաքով *(⇔) ներկայացվածները օտար բառեր և դրանց հայերեն համարժեքներ են. գրական լեզվում երկուսն էլ գործածվում են, կարելի է ասել՝ մրցակցում են: Դրանք հիմնականում տերմիններ են: Հայերեն տարբերակները կա՛մ համեմատաբար նոր են ստեղծվել, կա՛մ տարբեր պատճառներով չեն շրջանառվել, չունեն լայն տարածում, գուցե անսովոր են իրենց ձևավորումով կամ հնչումով, մասամբ ունեն իմաստային մասնակի անհամապատասխանություն և կամ իրենց նոր իմաստով դեռևս չեն*

գիտակցվում: Բայց դրանք ունեն մի կարևոր առավելություն. հասկանալի են նաև ոչ մասնագիտական լսարանին: Օր.՝ ***դեկլինացիա*** *(ֆիզ.)* – մագնիսական շեղում, ***ֆլեբիտ*** *(բժշկ.)* – երակաբորբ, ***կինոլոգ*** – շնաբան, ***լիզինգային*** – վարձակալական *բառագույգերում ակնհայտորեն հայերեն համարժեքները առավելություն ունեն. հանրահասկանալի են նաև ոչ մասնագետի համար: Օտար բառերը առավելապես գործածվում են մասնագիտական ոլորտում: Կարծում ենք՝ օտար բառի և հայերեն համարժեքի զուգահեռ գործածությունը կարելի է թույլատրելի համարել՝ նախապատվությունը տալով հայերեն տարբերակին:*

Հայերեն համարժեքի գործածականությունը մեծ չափով պայմանավորված է նաև լեզվակիրառողի նախասիրություններով և նախընտրությամբ: Երբեմն արհեստականորեն և չհիմնավորված խոչընդոտվում է նորակազմ բառի հնարավոր մուտքը բառապաշար: Այս մոտեցումը հաճախ պատճառաբանված չէ, բայց տարածվելով երբեմն հանրության մեջ ձևավորում է կանխակալ կարծիք և մերժողական վերաբերմունք:

Ժամանակի ընթացքում թերևս կհաղթահարվեն հոգեբանական կամ լեզվամտածողական բարդույթները, և հայերեն հաջող համարժեքները ձեռք կբերեն քաղաքացիության իրավունք:

Այսպիսով՝ երկկողմ սլաքով (⇔) *ներկայացվածները մրցորդ փոխառություններն են և դրանց հայերեն համարժեքները (ժամանակը կհաստատի դրանցից մեկի կամ մյուսի գոյության իրավունքը):*

3. Ձախ սլաքով (⇐) *տրվում են այն օտար բառերը, որոնք կա՛մ դեռևս չունեն համարժեքներ, կա՛մ էլ ինչ-ինչ հատկանիշներով հայերեն տարբերակները նախընտրելի չեն: Դժվար է միանշանակ բացատրություն տալը: Բառային յուրաքանչյուր միավոր կարիք ունի առանձին քննարկման: Այսուհանդերձ, որոշ ընդհանուր գործոններ կարելի է առանձնացնել, ինչպես՝ հայերեն համարժեքի նշանակության մասնակի, երբեմն նաև լրիվ անհամապատասխանությունը, անբարեհնչությունը, դժվարարտասանելիությունը, անարտադրողականությունը (նոր բառեր բաղադրելու դժվարությունը): Այսպես՝ բառարաններից մեկում* ***էստակադա*** (ձողերի վրա կառուցված հարթակ, որը ծառայում է ճանապարհները բարձրացնելուն) *բառի հայերեն համարժեք է առաջարկվում* ***ցցաթումբ*** *նորակազմությունը: Զգալի է հայերեն տարբերակի իմաստային անհամապատասխանությունը: Նույնիսկ եթե փորձենք* ***ցցերի վրա կառուցված թումբ*** *իմաստով առաջնորդվել, միևնույնն է, իմաստային անհամարժեքությունը շատ հստակ է: Կամ՝* ***ռելե*** (ավտոմատ անջատող և միացնող սարք) *բառի համարժեքն է* ***ինքնանջատիչ****-ը: Ե՛վ կարճության, և՛ իմաստային առումներով նախընտրելին օտար բառն է:* ***Ռելիեֆ*** *բառի համար առաջարկվող* ***ուռուցկանկար*** *(նաև՝* ***ելէջք****) համարժեքը ոչ միայն չի փոխանցում օտար բառի նշանակությունը, այլև դժվարարտասանելի, չտպավորվող, նաև անարտադրողական միավոր է: Այլ օրինակներ.* ***շամպուն*** – օճառահեղուկ, ***էքսկուրս*** – արտաճառ, արտաբանություն, շեղադիտարկում, ***ցունամի*** – ցնցալիք, ***սմարթֆոն*** – խելախոս *ևն:*

Այսուհանդերձ, առաջնորդվելով այն ճշմարտությամբ, որ օտար բառերի ընտրության հարցում անվերապահ կանոն-

ներ սահմանելը դժվարին և երբեմն անլուծելի խնդիր է, մենք զուգահեռ ներկայացրել ենք նաև դրանց հայերեն համարժեքները: Դրանք բերվում են ոչ թե մասնագիտական լսարանին պարտադրելու և կամ հայերենի բառամթերքը հարստացնելու և օտար բառը արագորեն դուրս մղելու նպատակով, այլ թերևս հանրության հետ «երկխոսելու» համար:

Այսպիսով՝ ձախ սլաքով (⇐) ներկայացվածները նոր և նորագույն փոխառություններ են: Դրանք կա՛մ կմերվեն հայոց լեզվի բառապաշարին, կա՛մ աստիճանաբար կփոխարինվեն հայերեն համարժեքներով:

Այսուհանդերձ, տրվում են բառերի հնարավոր ընդհանրական իմաստները, որոնք, սակայն, տարբեր գիտաճյուղերի տերմինային համակարգերում հնարավոր է՝ կիրառելի չլինեն: Ինչպես՝ ***ստանդարտ*** *բառը ունի* ***չափորոշիչ, համօրինակ*** *իմաստները, բայց թարգմանելի չէ* ***ստանդարտ լուծույթ*** *կապակցության մեջ: Կամ՝* ***նորմատիվ*** *ունի* ***չափորոշիչ, չափանշային*** *իմաստները, բայց* ***նորմատիվ ակտ*** *կապակցության մեջ փոխարինելի չէ:*

Բառացանկը կազմելիս խնդրահարույց են եղել՝ ***1)*** *որոշ օտար հապավումների գրությունը,* ***2)*** *գծիկով կամ անջատ գրվող օտար բառերի գրությունը,* ***3)*** *տառադարձությունը: Իհարկե, մեծ մասամբ առաջնորդվել ենք արդի հայերենի ուղղագրության և տառադարձության նորմերով: Այսուհանդերձ, հատկապես նորագույն փոխառությունների դեպքում փոքր-ինչ այլ սկզբունքներ ենք որդեգրել: Այսպես.*

1. *Մի շարք օտար հապավումներ (****PR/P.R., CD, Wi-Fi, D.J.*** *և այլն), վերջին տասնամյակներին շարունակ գործած-*

*վելով, ձուլվել են մեր լեզվի բառապաշարի գործուն շերտին, սակայն հայերեն տեքստերում առավելապես գրվում են լատինատառ: Սրանց գրությունը հստակեցնելու և միանշանակ դարձնելու միտումով առաջնորդվել ենք երկու հանգամանքով: **Նախ**՝ վերը նշված բառամիավորները արդի հայերենում ընկալվում և գործածվում են ոչ թե որպես հապավական բարդություններ, այլ որպես պարզ բառեր: **Ապա**՝ ակնհայտ է, որ **PR, CD, Wi-Fi, D.J.** և նման միավորներն ունեն բառային ինքնուրույն գործածություն: Ուստի հենց գործող կանոնի շրջանակում առաջարկել ենք այս բառամիավորների միայն փոքրատառերով*[6] *և միասին գրության տարբերակ՝ **փիառ, սիդի, վայֆայ, դիջեյ:** Այս դեպքերում բառին կից՝ փակագծերում, տրվում են համապատասխան լատինատառ հապավումները:*

*2. Մի շարք օտար բառեր փոխատու լեզվում կազմությամբ բարդ են և ունեն բաղադրիչների՝ գծիկով կամ անջատ գրություն, ինչպես՝ **hot dog, talk show, make up/Make-Up, Carte blanche, hat-trick, Second hand** և այլն: Անկախ փոխատու լեզվում դրանց բաղադրիչների հարաբերությունից և կամ նշանակությունից*[7]*՝ այդ բառերը՝ որպես պարզ բա-*

---

[6] Բառացանկի բոլոր գլխաբառերը տրվում են մեծատառերով. խոսքը վերաբերում է այդ բառերի ընդհանուր գրությանը:

[7] Երբեմն առաջնային են համարում օտար բառի բաղադրիչները **գիտակցել-չգիտակցելու** խնդիրը: Այս չափանիշը հարաբերական է ու անհըստակ: Նույնիսկ եթե գիտակցել-չգիտակցելու հարցում անտեսենք լեզվակիրառողի անհատական գործոնը, ապա հասարակական և մշակութային տեղաշարժերի ազդեցությունը չնկատելը անհնար է: Եթե խորհրդային տարիներին մեծ էր ռուսերենի ազդեցությունը, և հարյուրավոր օտար բառերի բաղադրիչների գրությունը բացատրվում ու գիտակցվում էր հենց ռուսերենի միջոցով, ապա այսօր պատկերը որոշակիորեն փոխվել է: Ռուսերենին զուգահեռ զգալիորեն գործուն է դարձել նաև անգ-

ռեր, ներկայացրել ենք բաղադրիչների միասին գրությամբ, ինչպես՝ ***hot dog – հոթդոգ, make up//Make-Up – մեյքապ, Carte blanche – քարտբլանշ, hat-trick – հետթրիկ, Second hand – սեքոնդհենդ:***

3. Օտար բառերի տառադարձության դեպքում, անշուշտ, մեծ մասամբ պահպանել ենք գործող սկզբունքները: Սակայն մոտ 4-5 տասնյակ նորագույն փոխառությունների (հատկապես անգլերենից կամ անգլերենի միջնորդությամբ փոխառված բառերի) դեպքում առավելաբար առաջնորդվել ենք հնչադարձությամբ (տե՛ս էջ 20), ինչպես՝ ***մոնիթորինգ, էֆթանազիա, մեյքապ, քասթինգ, քոթեջ*** *են: Մեր տպավորությամբ՝ այս ձևերը կենդանի խոսքում առավել տարածված են և, ինչպես նշվել է, ավելի հարազատ են օտար բառերի բնագրային արտասանությանը:*

Բառացանկի կազմության սկզբունքները:

● *Մի շարք օտար բառերի դիմաց ներկայացվում են հայերեն համարժեքի հոմանշային տարբերակներ: Դրանք տրվում են առանց թվային նշագրման. այս դեպքերում լեզվակիրառողն ունի ազատ ընտրության հնարավորություն: Օր.՝* ***անեքսիա*** – բռնազավթում, բռնագրավում, ***ադապտացիա*** – հարմարեցում, հարմարարկում, ընտելացում, ***դեզինֆեկցիա*** – ախտահանում, ախտազերծում, վարակազերծում: *Իհարկե,*

լերենը, որից անմիջաբար արդի հայերենին են անցել բազմաթիվ բառեր: Ընդ որում, հանրության մի ստվար հատվածի համար այդ բառերը կամ դրանց բաղադրիչները նույնքան հասկանալի են ու գիտակցվող: Անգլերենի տարրական իմացություն ունեցողը հասկանում է, որ **hot dog**-ը բառացի նշանակում է *տաք շուն*, **hat-trick**-ը՝ *գլխարկով հնար*, **second hand**-ը՝ *երկրորդ ձեռք* են: Ակնհայտ է, որ սա այնքան էլ հարմար չափանիշ չէ այսօրինակ բառերի ուղղագրությունը կանոնարկելու համար:

նկատի պիտի առնել, որ ազատ ընտրության դեպքում հաճախ պետք է առաջնորդվել խոսքաշարով:

● *Որոշ օտար բառերի հայերեն համարժեքներ տրվում են թվային նշագրումներով՝* ***1...., 2...., 3....:*** *Ըստ անհրաժեշտության նշվում է (են) նաև գործածության ոլորտ(ներ)ը: Դրանք փոխարինելի տարբերակներ չեն. պայմանավորված գործածության ոլորտով՝ դրսևորում են իմաստային տարբերություններ (կամ նրբիմաստներ): Այս դեպքում ընտրությունը թելադրվում է միայն խոսքաշարով: Օր.՝* ***լիկվիդացիա*** **–** **1.** լուծարում, կազմալուծում, **2.** ոչնչացում, վերացում, **3.** իրացում (ապրանքի արագ իրացում ցածր գնով), ***դիսլոկացիա*** **–** **1.** (ռազմ.) տեղաբաշխում, **2.** տեղավորում, **3.** բաշխում, **4.** (երկրբ.) տեղախախտում, **5.** (բժշկ.) հոդախախտություն, տեղաշարժ, ***մեմորիալ*** **–** **1.** հուշատետր, **2.** հուշամատյան, **3.** հուշարձանախումբ, **4.** հուշամրցում:

● *Կան գլխաբառեր, որոնց մեկ կամ մի քանի իմաստների համար առաջարկվում են հայերեն փոփոխակներ, իսկ մեկ այլ (հիմնականում տերմինային) նշանակության համար տրվում է հենց բնագրային՝ օտար տարբերակը: Օր.՝* ***ակցիա*** *բառի* բաժնետոմս, բաժնեթուղթ, արժեթուղթ *համարժեքները վաղուց հաստատվել են և գուցե ինչ-որ ժամանակ հետո դուրս մղեն օտար տարբերակը: Սակայն* ***ակցիա****-ն դեռևս միակ բառն է, որը գործածվում է* տնտեսական կամ քաղաքական նպատակներ իրականացնելու համար՝ գործողություն, միջոցառում *նշանակությամբ: Կամ՝* ***պրոֆիլ*** – 1. կիսադեմ, 2. մասնագիտական ուղղվածություն, *բայց՝* ***պրոֆիլ*** **–** անհատական էջ սոցցանցերում, ***ասիստենտ*** **–** ընթերակա, օգնական, ***ասիստենտ*** – պաշտոն գիտակրթական հաստատություններում *են: Այսպիսի դեպքերում անկա-*

ևնոր ենք համարել նշելը՝ սրանք համանունն՞ր են, թե՞ բազմիմաստության դրսևորումներ: Պարզապես այդ բառերը տրվել են տարբեր սլաքներով:

● Որոշ դեպքերում հայերենին է անցել օտար բառի իմաստներից միայն մեկը, կամ էլ այն հայերենում ձեռք է բերել մի նոր նշանակություն: Այդպիսի դեպքերում բառի դիմաց նշել ենք միայն արդի հայերենին բնորոշ իմաստային տարբերակը, իսկ փակագծերում երկրորդաբար տրվել է փոխատու լեզվում եղած իմաստը: Օր.՝ ***նավիգատոր*** *բառի համար բառարանները նշում են* ***նավագնացություն*** *բառը: Մինչդեռ արդի արևելահայերենում* ***նավիգատոր*** *օտար բառը գործածվում է այլ՝* ***ճանապարհացույց//ուղեցույց, կողմնորոշիչ*** *նշանակությամբ: Ուստի առաջնային ենք համարել* ***ճանապարհացույց//կողմնորոշիչ*** *տարբերակները:*

● Հախ սլաքով տրված բառերի համար նպատակահարմար ենք գտել ներկայացնել դրանց նկարագրական բացատրությունները:

Արդեն նշել ենք, թե ինչ սկզբունքով և ինչ նպատակով են ընտրվել օտար բառերը: Այսուհանդերձ, ավելորդ չենք համարում որոշակի բաժանումով ներկայացնել այն բառախմբերը, որոնք չեն ընդգրկվել բառացանկում: Այսպես.

1. *Բառեր, որոնք թեև ծագումով օտար են (և գիտակցվում են նաև այդպիսին), սակայն վաղուց ձուլվել են արդի արևելահայերենի բառապաշարին: Այդ բառամիավորները դիտարկել ենք որպես փոխառություններ, որոնք մեր լեզվում չունեն իրենց համարժեք(ներ)ը*[8]*, և թերևս դրա անհրաժեշտու-*

[8] Այս դեպքերում պարզապես շրջանցել ենք նմանատիպ բառերի համար հայերեն փոխարինիչներ ստեղծելու այն փորձերը, որոնք մեզ խիստ

թյունը չկա էլ: Դրանք գերազանցապես հանրահասկանալի են և վաղուց համալրել են մեր լեզվի գործուն բառաշերտը: Օր.՝ ***բալետ, բալլադ, լեգենդ, լեգեոն, կոկորդիլոս, կարտոֆիլ, օպերա, ֆուտբոլ*** *են:*

2. Օտարաբանություններ, որոնք տասնամյակներ շարունակ անհարկի գործածվում են մեր լեզվում, և դրանց համարժեքները արդի հայերենում լայն գործածություն ունեն՝ ***ժուռնալ*** – լրագիր, ամսագիր, գրանցամատյան, ***ինցիդենտ*** – միջադեպ, պատահար, դիպված, ***լյուստրա*** – ջահ, ***մոմենտ*** – պահ, ակնթարթ *են:*

3. Բառեր, որոնք տարատեսակ մեծությունների չափման միջազգային միավորների, կենսաքիմիական նյութերի, դեղամիջոցների և նման այլ առարկաների ու երևույթների անվանումներ են՝ ***կիլովատտ, մեգաբայթ, սանտիմետր, հերց, նուկլեինաթթու, լեպիդ, նավթալին, նեյտրոն, պոլիամիդ*** *են:*

4. Բառեր, որոնք անվանում են հնացած, պատմական և կամ հազվադեպ գործածվող առարկաներ, հասկացություններ կամ երևույթներ՝ ***ադապտեր, ժիրոնդիստ, ժակերիա, ֆլոպի*** *են: Այս բառերը, պայմանավորված իրենց, այսպես ասած, «կարճ կենսագրությամբ», արագ դուրս են մղվել գործուն բառաշերտից: Դրանց մեծ մասը չունի նաև հայերեն համարժեք: Դրանք ընտրելիս հաշվի ենք առել բառարանների* ***հնց., հզվդ., պատմ.*** *նշագրումները:*

չստացված ու անհաջող են թվացել: Օր.՝ **հեմոգլոբին, մետաստազ, ֆուտբոլ** օտար բառ-փոխառությունների համար առաջարկվել են *արնագնդակիտ, ախտափոխանցում, ոտնագնդակ* արհեստածին կազմությունները:

5. Տերմիններ, որոնք ընդհանուր ճանաչում չունեն, չեն հանդիպում դպրոցական դասագրքերում, գիտահանրամատչելի ձեռնարկներում. գործածվում են միայն այս կամ այն գիտության շրջանակում և հասկանալի են միայն մասնագետների որոշակի խմբի, ինչպես՝ ***հեմիպլեգիա, բայբեք, ռոլովեր*** *են:*

6. Օտար բառեր, որոնք համաշխարհային և տեղական կազմակերպությունների, ընկերությունների, ապրանքանիշերի, լրատվամիջոցների և այլնի անվանումներ են՝ ***Ադիդաս, ԲիԲիՍի, Դիադորա, ՍիԷնԷն, ԷյչԷսԲիՍի, Ամերիա*** *են:*

7. Տարաշխարհիկ բառեր՝ էկզոտիզմներ՝ ***ազավա, գեյշա, սարի, բալալայկա, չաստուշկա, ուխա*** *են:*

Փորձել ենք յուրաքանչյուր օրինակ ներկայացնել ընտրողաբար՝ կուրորեն չհետևելով որևէ որոշակի աղբյուրի: Մեր մոտեցումները առանձին դեպքերում չեն համընկնում «Տերմինաբանական և ուղղագրական տեղեկատու»-ում զետեղված որոշումներին, որոնց մի մասը իրապես վերանայման կարիք ունի:

Օտար բառերի հանդեպ վերաբերմունքն ու մոտեցումները միշտ էլ միանշանակ չեն, շատ դեպքերում՝ իրարամերժ: Չենք բացառում, որ ներկայացվող բառացանկի վերաբերյալ նույնպես կարող են լինել տարակարծություններ: Միրով կընդունենք բոլոր այն առաջարկություններն ու դիտողությունները, որոնք կնպաստեն այս բառացանկի մշակմանն ու գործնական իրացմանը:

ԱԲՈՆԵՄԵՆՏ ⇒ Բաժանորդագիր:

ԱԲՍՈՒՐԴ *1.* ⇒ Անհեթեթ, անհեթեթություն: ***2.*** *(արվ.)* ⇐ 20-րդ դ. 50-60-ական թթ. արևմտաեվրոպական թատրոնի և դրամատուրգիայի ուղղություն:

ԱԲՍՏՐԱԿՏ ⇔ Վերացական:

ԱԲՍՏՐԱԿՑԻՈՆԻԶՄ ⇔ Վերացապաշտություն:

ԱԳԵՆՏ ⇒ Գործակալ, լրտես:

ԱԳԻՏԱՑԻԱ ⇒ Քարոզչություն, իրազեկում:

ԱԳՐԱՐԱՅԻՆ ⇔ ***1.*** Գյուղատնտեսական: ***2.*** Հողագործական, երկրագործական:

ԱԳՐԵՄԱՆ ⇔ Համաձայնություն:

ԱԳՐԵՍԻԱ ⇔ (Նախա)հարձակում:

ԱԳՐԵՍԻՎ ⇔ Հարձակողական:

ԱԳՐԵՍՈՐ ⇔ Նախահարձակ, հարձակվող:

ԱԳՐՈՆՈՄ ⇒ Գյուղատնտես:

ԱԴԱՊՏԱՑԻԱ ⇒ Հարմարեցում, հարմարարկում, ընտելացում:

ԱԴԵԿՎԱՏ ⇒ Համարժեք, համապատասխան:

ԱԴՄԻՆԻՍՏՐԱՏՈՐ ⇒ Կառավարիչ, վարչատար:

ԱԴՄԻՆԻՍՏՐԱՑԻԱ ⇒ Վարչակազմ:

ԱԴՄԻՐԱԼ ⇒ Ծովակալ:

ԱԴՈՊՏԱՑԻԱ *(իրավ.)* ⇒ Որդեգրում:

ԱԴՐԵՍ ⇒ Շնորհավորական ուղերձ:

ԱԵՐՈՊՈՐՏ ⇒ Օդանավակայան / օդակայան:

ԱԺԻՈՏԱԺ ⇒ Իրարանցում, խառնաշփոթ:

ԱԼԲԻՆՈՍ *(կենսբ.)* ⇐ Ի ծնե մաշկի պիգմենտների բացակայություն (լսնամաշկ, գունագար):

ԱԼԵԳՈՐԻԱ ⇒ Այլաբանություն:

ԱԼԵՐԳԻԱ ⇐ Կենդանի օրգանիզմի զգայնությունը ալերգենների նկատմամբ:

ԱԼԻԲԻ ⇔ Այլուրեքություն:

ԱԼԻՄԵՆՏ ⇐ Ապրուստավճար, սննդավճար:

ԱԼԿՈՀՈԼ ⇔ Ոգելից (խմիչք):

ԱԼՅԱՆՍ ⇒ Դաշինք, միություն:

ԱԼՊԻՆԻԶՄ ⇒ Լեռնագնացություն:

ԱԼՊԻՆԻՍՏ ⇒ Լեռնագնաց:

ԱԼՏԵՐՆԱՏԻՎ ⇒ Այլընտրանքային:

ԱԿԱԴԵՄԻԱ ⇐ Կաճառ:

ԱԿԱԴԵՄԻԿՈՍ ⇐ Կաճառորդ / կաճառական:

ԱԿՈՒՄՈՒԼՅԱՏՈՐ ⇒ Կուտակիչ:

ԱԿՈՒՍՏԻԿԱ ⇔ *1.* Ձայնաբանություն: *2.* Լսելիություն, հնչողություն:

ԱԿՏ *1.* ⇒ Արարք, գործողություն: *2.* ⇔ Փաստաթուղթ:

ԱԿՏԻՎ ⇔ *1.* Գործունյա, գործուն: *2.* Եռանդուն, ներգործուն: *3.* *(տնտսգ.)* ⇒Հիմնարկության ունեցվածք:

ԱԿՏՈՒԱԼ ⇒ *1.* Արդիական, հրատապ: *2.* *(լզվբ.)* Առկայական:

ԱԿՐՈԲԱՏ ⇐ Կրկեսային մարմնամարզության վարպետ:

ԱԿՑԵՆՏ ⇒ *1.* Առոգանություն: *2.* Շեշտադրություն:

ԱԿՑԵՊՏ *(իրավբ.)* ⇒ Հոժարագիր:

ԱԿՑԻԱ[1] ⇐ Գործողություն՝ միջոցառում տնտեսական կամ քաղաքական նպատակներ իրականացնելու համար:

ԱԿՑԻԱ[2] ⇒ Բաժնետոմս, բաժնեթուղթ, արժեթուղթ:

ԱԿՑԻԶ ⇐ *1.* Բաժ՝ անուղղակի հարկի տեսակ: *2.* Ակցիզի վճարումը հաստատող փոքր պիտակ:

ԱԿՑԻՈՆԵՐ ⇒ Բաժնետեր:

ԱՄԲԻՑԻԱ ⇒ Հավակնություն, նկրտում, փառասիրություն:

ԱՄԲԻՑԻՈԶ ⇒ Հավակնոտ, փառասեր:

ԱՄՆԵԶԻԱ *(բժշկ., հոգբ.)* ⇔ Անհիշություն:

ԱՄՆԻՍՏԻԱ *(իրավբ.)* ⇒ Համաներում:

ԱՄՈՐԱԼ ⇒ Անբարո:

ԱՄՈՐՏԻԶԱՏՈՐ *(տեխ.)* ⇔ Մեղմիչ:

ԱՄՈՐՏԻԶԱՑԻԱ ⇔ ***1.*** *(տեխ.)* Մեղմում: ***2.*** *(իրավք.)* Պարտագրի անվավեր համարում: ***3.*** *(տնտսգ.)* Մաշվածք, պարտքի մարում:

ԱՄՈՐՖ ⇒ ***1.*** Անձև, տձև: ***2.*** Անկերպարանք:

ԱՄՊԼԻՏՈՒԴ ⇔ Լայնույթ:

ԱՄՊՈՒԼԱ ⇒ Սրվակ:

ԱՅՍԲԵՐԳ ⇒ Սառցալեռ:

ԱՅՓԱԴ ⇐ Համացանց-պլանշետ:

ԱՆԱԼԻԶ ***1.*** *(բժշկ.)* ⇐ Բուժզննման տեսակ, վերլուծություն: ***2.*** ⇒ Ուսումնասիրություն, հետազոտություն:

ԱՆԱԼԻՏԻԿ ⇒ Վերլուծական:

ԱՆԱԼՈԳԻԱ ⇒ ***1.*** *(փիլ.)* Համանմանություն: ***2.*** *(լզվք.)* Համաբանություն: ***3.*** Համապատասխանություն, նմանություն:

ԱՆԱԽՐՈՆԻԶՄ ⇒ Ժամանակավրիպություն:

ԱՆԱՏՈՄԻԱ ⇔ Կազմախոսություն / կազմաբանություն:

ԱՆԱՏՈՄԻԿ(ՈՒՄ) ⇒ Դիահերձարան:

ԱՆԱՐԽԻԱ ⇒ ***1.*** Անիշխանություն: ***2.*** Խառնաշփոթություն, անկարգություն:

ԱՆԱՐԽԻՍՏ ⇒ ***1.*** Անիշխանական: ***2.*** Ինքնագլուխ:

ԱՆԳԻՆԱ ⇐ Բկաբորբ:

ԱՆԴՈՒ *(իմկրգչ.)* ⇒ Հետքայլ, հետարկ(ում):

ԱՆԴՈՒ ԱՆԵԼ ⇒ Հետ գնալ, հետարկել:

ԱՆԵԿԴՈՏ ⇐ Խնդուկ:

ԱՆԵՄԻԱ *(բժշկ.)* ⇔ Սակավարյունություն:

ԱՆԵՔՍԻԱ *(իրավք.)* ⇒ Բռնազավթում, բռնակցում:

ԱՆԹՈԼՈԳԻԱ ⇒ Հատընտիր, ժողովածու, ծաղկաքաղ:

ԱՆԹՐՈՊՈԼՈԳԻԱ ⇒ Մարդաբանություն:

ԱՆԻՄԱՑԻԱ ⇔ Շարժապատկեր (շարժունացում):

ԱՆԼԵԳԱԼ ⇒ Ապօրինի, անօրինական:

ԱՆԿԵՏԱ ⇔ Հարցաթերթ(իկ):

ԱՆՇԼԱԳ ⇐ Մշակութային միջոցառման բոլոր տոմսերը վաճառված լինելու փաստը:

ԱՆՈՄԱԼ ⇒ Շեղված, անկանոն:

ԱՆՈՄԱԼԻԱ ⇒ Շեղում, անկանոնություն (մագնիսական շեղում):

ԱՆՈՆՍ ⇒ Ազդ, ծանուցում, հայտարարություն:

ԱՆՈՏԱՑԻԱ ⇒ Ծանուցում:

ԱՆՏԵՆԱ ⇔ Ալեհավաք, ալեցիր:

ԱՆՏԻԹԵՋ ⇒ Հակադրույթ, հակադրություն:

ԱՆՏԻԿ ⇐ *1.* Հին Հունաստանի և Հռոմի մշակույթին վերաբերող: *2.* Հին, արժեքավոր:

ԱՆՏԻՊԱՏԻԱ ⇒ Հակակրանք:

ԱՆՏԻՊԵՐՍՊԻՐԱՆՏ ⇒ Քրտնազերծիչ:

ԱՆՏԻՍԵՄԻՏԻԶՄ ⇔ Հակասեմիտականություն՝ հրեատյացություն:

ԱՆՏԻՎԻՐՈՒՍ *(հմկրգչ.)* ⇔ Հակավարակ:

ԱՆՏԻՑԻԿԼՈՆ *(օդերևութ.)* ⇐ Մթնոլորտի բարձր ճընշման մարզ, ուր կա օդի շրջանաձև շարժում:

ԱՆՏԻՖՐԻԶ ⇔ Հակասառուցիչ:

ԱՊԱՏԻԱ ⇔ Հուլություն (հոգեկան անտարբերության հիվանդագին վիճակ):

ԱՊԱՐԱՏ ⇔ *1.* Սարք, գործիք: *2.* Վարչանի / աշխատակազմ:

ԱՊԱՐԱՏՈՒՐԱ ⇒ Սարքավորում:

ԱՊԵԼՅԱՑԻԱ ⇒ Բողոքարկում, գանգատարկում:

ԱՊԼԻԿԱՑԻԱ *(արվ.)* ⇒ Դրվագում, սոսնձանկար (գունավոր թղթի և այլնի կտորներով ստացված պատկեր):

ԱՊՐԻՈՐԻ ⇔ *1.* Ապափորձնական: *2.* Փորձից անկախ, կանխակալ:

ԱՊՐՈԲԱՑԻԱ ⇒ Հավանություն, հաստատում, փորձորոշում:

ԱՍԱՄԲԼԵԱ *(քղքգ.)* ⇔ Լիաժողով (միջազգային որևէ կազմակերպության անդամների ընդհանուր ժողով):

ԱՍԹՄԱ *(բժշկ.)* ⇔ Շնչարգելություն:

ԱՍԻՄԵՏՐԻԱ ⇒ Անհամաչափություն:

ԱՍԻՄԻԼՅԱՑԻԱ ⇒ ***1.*** *(քղքզ.)* Զուլում: ***2.*** *(լզվբ.)* Առնմանում: ***3.*** *(կենսբ.)* Փոխակերպում:

ԱՍԻՍՏԵՆՏ ***1.*** ⇐ Պաշտոն գիտակրթական հաստատություններում: ***2.*** ⇒ Ընթերակա, օգնական:

ԱՍԿԵՏ ⇒ Ճգնակյաց, մենակյաց, անապատական:

ԱՍՈՐՏԻ ⇒ Հավաքածու, ընտրանի:

ԱՍՊԵԿՏ ⇒ Տեսակետ, տեսանկյուն, հայեցակետ, առում:

ԱՍՏԻԳՄԱՏԻԶՄ *(օպտ.)* ⇔ Տարաբեկություն:

ԱՎԱՆԳԱՐԴ ⇔ Առաջապահ:

ԱՎԱՆՍ ⇒ Կանխավճար:

ԱՎԱՆՏՅՈՒՐԱ ⇒ Արկածախնդրություն, բախտախնդրություն:

ԱՎԱՆՏՅՈՒՐԻՍՏ ⇒ Արկածախնդիր, բախտախնդիր:

ԱՎՏՈԴԵՏԱԼ ⇒ Ավտոմաս, ավտոմանրակ:

ԱՎՏՈՄԱՏ ⇔ ***1.*** Ինքնաձիգ: ***2.*** Ինքնաշխատ: ***3.*** Մեքենայորեն / մեքենաբար:

ԱՎՏՈՆՈՄ ⇒ Ինքնավար:

ԱՎՏՈՆՈՄԻԱ ⇒ Ինքնավարություն:

ԱՎՏՈՌԱԼԼԻ ⇒ Ավտոմըրցարշավ, ավտոարշավ:

ԱՎՏՈՌԵՖԵՐԱՏ ⇒ Մեղմազիր:

ԱՎՏՈՍՏՐԱԴԱ ⇒ Մայրուղի:

ԱՎՏՈՐԻՏԱՐ ⇔ Միահեծան, բռնապետական, իշխանատենչ:

ԱՏԱՇԵ *(դվնգ.)* ⇒ Կցորդ:

ԱՏԵԼՅԵ ⇒ Նորաձևության սրահ:

ԱՏԵՍՏԱՏ ***1.*** ⇐ Ավարտական վկայական, որը տրվում է դպրոցն ավարտելիս: ***2.*** ⇒ Վկայագիր:

ԱՏԵՍՏԱՑԻԱ ⇒ (Վերա)որակավորում:

ԱՏԼԵՏ ⇒ Մարմնամարզիկ:

ԱՏԼԵՏԻԿԱ ⇒ Մարմնամարզություն:

ԱՏԿԱՏ ⇐ Դրամական օրինավոր հատկացումներից ապօրինի պայմանավորվածությամբ դրամի յուրացում:

ԱՏՐԱԿՑԻՈՆ ⇐ Ժամանցային սարքավորումներ զբոսայգում:

ԱՏՐԻԲՈՒՏ ⇔ Անբաժանելի հատկանիշ:

ԱՏՐՈՖԻԱ *(բժշկ.)* ⇒Հյուծում, ծյուրանք:

ԱՐԲԻՏՐ ⇔ ***1.*** Միջնորդ դատավոր (ոչ դատական վեճերում): ***2.*** Իրավարար: ***3.*** ⇒ Մրցավար:

ԱՐԲԻՏՐԱԺ ⇐ ***1.*** Վեճերի լուծման եղանակ, որի դեպքում կողմերը դիմում են օրենքով սահմանված կարգով կամ իրենց իսկ համաձայնությամբ ընտրված միջնորդ դատավորներին, իրավարարություն: ***2.*** Պետությունների միջև վեճերի խաղաղ լուծման միջազգային մարմին:

ԱՐԳՈՒՄԵՆՏ ⇒ Փաստարկ, դատողություն:

ԱՐԳՈՒՄԵՆՏԱՑԻԱ ⇒ Փաստարկում:

ԱՐԵՆԴԱ ⇒ Վարձակալություն:

ԱՐԹՐԻՏ *(բժշկ.)* ⇒ Հոդաբորբ:

ԱՐԻԱ ⇒ Մեներգ:

ԱՐԻՍՏՈԿՐԱՏ ⇒ Ազնվական:

ԱՐԻՍՏՈԿՐԱՏԻԱ ⇒ ***1.*** Ազնվականություն, բարձրաշխարհիկ խավ: ***2.*** *(քղքգ.)* ⇔ Ազնվապետություն:

ԱՐԽԻՎ ⇔ Պահոց:

ԱՐՄԱՏՈՒՐԱ ⇒ Ամրան, ամրաձող:

ԱՈՒԴԻՈ-ՎԻԴԵՈ ⇒ Լսատեսողական:

ԱՈՒԴԻՈՓԼԵՅԵՐ ⇒ Ձայնարկիչ:

ԱՈՒԴԻՏ ⇔ Հաշվեստուգում:

ԱՈՒԿՑԻՈՆ ⇒ Աճուրդ:

ԱՈՒՏԻԶՄ ⇐ Ուղեղի կանոնավոր զարգացման խանգարում՝ ուղեկցված շըփման, խոսողության և կրկնվող վարքագծի ախտանիշներով:

ԱՈՒՐԱ ⇔ ***1.*** *(կրոն.)* Լուսապսակ (ըստ կրոնական ուսմունքի՝ լույս, որ ճառագում է աստվածային էակներից): ***2.*** Մթնոլորտ, միջավայր:

ԱՓԴԵՅԹ *(հմկրգչ.)* ⇒ Նորացում / թարմացում:

ԱՔՍԵՍՈՒԱՐ ⇐ Լրամաս:

ԱՖԻՇ*(Ա)* ⇒ Ազդագիր:

ԱՖՈՐԻԶՄ ⇔ Ասացվածք, իմաստախոսություն:

— Բ —

ԲԱԳԱԺ ⇒ Ուղեբեռ:

ԲԱԴՄԻՆԹՈՆ ⇔ Փետրագնդակ:

ԲԱԶԱ ⇒ ***1.*** Պահեստ: ***2.*** Հիմք / հենք: ***3.*** Հանգրվան: ***4.*** Շտեմարան:

ԲԱԼԱՆՍ ⇒ Հաշվեկշիռ:

ԲԱԼԵՏՄԱՅՍՏԵՐ ⇔ Պարուսույց:

ԲԱԼԶԱՄ ⇐ ***1.*** Դեղաբույսերից պատրաստված դեղամիջոց: ***2.*** Անուշահոտ օծանելիք: ***3.*** Ըմպելիք:

ԲԱԼԻՍՏԻԿ ⇒ Զգաբանական (բայց՝ բալիստիկ հրթիռ):

ԲԱԼԻՍՏԻԿԱ ⇒ Զգաբանություն:

ԲԱԿՏԵՐԻԱ ⇒ Մանրէ:

ԲԱԿՏԵՐԻՈԼՈԳ ⇒ Մանրէաբան:

ԲԱԿՏԵՐԻՈԼՈԳԻԱ ⇒ Մանրէաբանություն:

ԲԱԿՏԵՐԻՈԼՈԳԻԱԿԱՆ ⇒ Մանրէաբանական:

ԲԱՆԴԱ ⇒ Ավազակախումբ, հրոսակախումբ:

ԲԱՆԴԱՆԱ ⇔ Գլխաշոր:

ԲԱՆԿԵՏ ⇒ Ճաշկերույթ:

ԲԱՆԿՆՈՏ *(ֆին.)* ⇒ Դրամանիշ, դրամատոմս:

ԲԱՆԿՐՈՏ ⇒ Սնանկ:

ԲԱՆՆԵՐ ⇒ Ազդերիզ:

ԲԱՏՈՆ ⇐ ***1.*** Հացի տեսակ: ***2.*** Շոկոլադե սալիկ:

ԲԱՏՈՒՏ ⇐ Զգված ցանցատիպ կտոր:

ԲԱՐԹԵՐ *(տնտսգ.)* ⇒ Ապրանքափոխանակություն:

ԲԱՐԺԱ ⇒ Բեռնանավ:

ԲԱՐԻԿԱԴ ⇐ Արգելափակոց:

ԲԱՐԻԵՐ → ***1.*** Արգելապատ: ***2.*** Արգելք, խոչընդոտ:

ԲԵՆԵՖԻՍ ⇐ Հայտնի արտիստի նվիրված տոնա-

հանդես, ներկայացում (նվիրահանդես):

ԲԵՄԹՍԵԼ(Լ)ԵՐ ⇐ Հանրահայտ դարձած և մեծ պահանջարկ ունեցող գիրք, ֆիլմ, սկավառակ ևն:

ԲԵՔՎՈԿԱԼ ⇒ Ձայնակցում:

ԲԵՔՎՈԿԱԼԻՍՏ ⇒ Ձայնակցող:

ԲԻԲԼԻՈԳՐԱՖԻԱ ⇒ Մատենագիտություն, գրականության ցանկ:

ԲԻԳՈՒԴԻ ⇐ Վարսափաթթուկ:

ԲԻԶՆԵՍ ⇔ Գործարարություն, գործ:

ԲԻԶՆԵՍՄԵՆ ⇔ Գործարար, ձեռներեց:

ԲԻԺՈՒՏԵՐԻԱ ⇐ Ոչ թանկարժեք զարդեր:

ԲԻԼԻԱՐԴ ⇐ Գնդախաղ:

ԲԻՆՈՄ ⇒ Երկանդամ:

ԲԻՈԼՈԳԻԱ ⇒ Կենսաբանություն:

ԲԻՈԿՐԻՄԻՆԱԼՈԳԻԱ ⇒ Կենսաքրեաբանություն:

ԲԻՈՄԵՏՐԻԱ ⇒ Կենսաչափություն:

ԲԻՈՄԵՏՐԻԿ ⇒ Կենսաչափական:

ԲԻՍԿՎԻՏ ⇐ Կրկնեփուկ:

ԲԻՍՏՐՈ ⇐ Խորտկարան:

ԲԼԱՆԿ *1.* ⇒ Ձևաթուղթ: *2.* ⇐ Ձևաթուղթ-փաստաթուղթ պաշտոնական գործառությունների համար (պաշտոնաթուղթ):

ԲԼԵՆԴԵՐ ⇐ Խոհանոցային էլեկտրական սարք, որով մանրացվում են մրգեր, բանջարեղեն ևն (խառնիչ):

ԲԼԻՑ ⇔ *1. (շխմտ.)* Կայծակնային: *2.* Արագ:

ԲԼԻՑՏՈՒՐՆԻՐ *(մարզ.)* ⇔ Կայծակնային/արագ մրցաշար:

ԲԼՈԳ ⇔ Ցանցային օրագիր՝ անհատական էջ համացանցում:

ԲԼՈԳԵՐ ⇔ Կայքավար, օրագրող:

ԲԼՈԿԱԴԱ ⇒ Շրջափակում, պաշարում:

ԲԼՈԿԲԱՍՏԵՐ ⇒ Մարտաֆիլմ:

ԲԼՈԿՆՈՏ ⇒ Նոթատետր:

ԲՅՈՒԼԵՏԵՆ ⇒ *1.* Տեղեկաթերթ: *2.* Տեղեկագիր: *3.* ⇐ Հիվանդության թերթիկ:

ԲՅՈՒՐՈ ⇔ Գրասենյակ, ատյան:

ԲՅՈՒՐՈԿՐԱՏ ⇔ Վարչարար:

ԲՅՈՒՐՈԿՐԱՏԻԱ ⇔ Վարչարարություն:

ԲՈԲՍԼԵՅ ⇒ Ղեկասահնակ:

ԲՈԴԻԲԻԼԴԻՆԳ ⇔ Մարմնակերտություն:

ԲՈՅԿՈՏ ⇔ Ընդվզում:

ԲՈՆԲՈՆԵՐԿԱ ⇐ Կոնֆետոնեռով տուփ:

ԲՈՆՈՒՍ *1.* ⇒ Պարգևավճար, *2.* ⇐ Գնի իջեցում: *3.* Միավորների որոշակի քանակ:

ԲՈՐԴՅՈՒՐ ⇒ Եզրաքար, մայթեզր:

ԲՈՐՍԱ / ԲԻՐԺԱ ⇔ Սակարան:

ԲՈՔՍ[1] ⇒ Բոնցքամարտ:

ԲՈՔՍ[2] ⇒ Վերակենդանացման բաժանմունք:

ԲՈՔՍ[3] ⇐ *1.* Ավտոմեքենաների տեխսպասարկման կետ (նաև՝ փակ տարածք):

ԲՐԱ/ԲՌԱ ⇒ Լուսամփոփ, որմնալամպ:

ԲՐԱԿՈՆՅԵՐ ⇒ *1*. Որսագող: *2.* Ձկնագող:

ԲՐԱՌԻՋ *(հմկրգչ.)* ⇒ Վերբեռնում:

ԲՐԱՌԻՋԵՐ *(հմկրգչ.)*⇒ Ջնում:

ԲՐԱՍԼԵՏ ⇒ Ապարանջան:

ԲՐԵԼՈԿ ⇔ Զարդօղակ բանալի(ներ) ամրացնելու համար (բանալեկալ):

ԲՐԵՆԴ ⇔ Հայտնի ապրանքանիշ:

ԲՐԻԿԵՏ ⇐ Սննդամթերքի և այլնի աղյուսաձև կտոր:

ԲՐԻՖԻՆԳ ⇒ Ճեպազրույց:

ԲՐՈՆԽԻՏ ⇐ Բրոնխների բորբոքում (ցնցղաբորբ):

ԲՐՈՇԿԱ ⇒ Զարդասեղ:

ԲՐՈՇՅՈՒՐ ⇒ Գրքույկ:

ԲՐՈՒՏՏՈ ⇒ Համաքաշ:

ԲՐՈՔԵՐ ⇔ Վաճառամիջնորդ՝ միջնորդ գործակալ:

ԲՈՒԼԱՎԿԱ ⇐ Կեռմայր:

ԲՈՒԼՅՈՆ ⇒ Արգանակ:

ԲՈՒԿԻՆԻՍՏ ⇔ Հնագրավաճառ, գրավաճառ:

ԲՈՒՆԿԵՐ ⇔ Պահասենյակ, ապաստարան:

ԲՈՒՆՏ ⇒ Խռովություն, ապստամբություն:

ԲՈՒՏԵՐԲՐՈԴ ⇒ Բրդուճ:

ԲՈՒՏԻԿ ⇒ Կրպակ:

ԲՈՒՔՄԵՅՔԵՐ ⇐ Խաղաղրույք ընդունող անձ:

ԲՈՒՖԵՏ ⇐ Վճարովի սնվելու վայր կազմակերպություններում:

ԲՈՒՖԵՐ ***1.*** *(տեխ.)* ⇔ Թափարգել, բախարգել: ***2.*** *(հմկրգչ.)* ⇐ Տեղեկությունների պահեստ:

— Գ —

ԳԱԶՈՆ ⇔ Սիզամարգ:

ԳԱԼԱՆՏԵՐԵԱ ⇒ Արդուզարդ:

ԳԱՅԿԱ ⇒ Պնդօղակ, մանեկ:

ԳԱՆԳՐԵՆԱ *(բժշկ.)* ⇒ Փըտախտ:

ԳԱՆՏԵԼ ⇔ Մարզագունդ:

ԳԱՍՏԱՐԲԱՅԹԵՐ ⇔ Գաղթյալ բանվոր:

ԳԱՍՏՐԻՏ ⇐ Ստամոքսաբորբ:

ԳԱՍՏՐՈԼ ⇒ Հյուրախաղ:

ԳԱՍՏՐՈՆՈՄ ⇒ ***1.*** Նպարախանութ: ***2.*** Համադամագետ:

ԳԱՐԱՆՏ ⇒ Երաշխավոր:

ԳԱՐԱՆՏԻԱ ⇒ Երաշխավորություն, երաշխիք:

ԳԱՐՆԻԶՈՆ ⇒ Կայազոր:

ԳԱՐՆԻՏՈՒՐ ⇒ Լիակազմ, լրակազմ:

ԳԱՐՆԻՐ ⇒ Խավարտ:

ԳԱՐՉԻՅԱ ⇒ Մանանեխ:

ԳԵԼ ⇐ ***1.*** Մարմնի հեղուկ օճառ: ***2.*** Բժշկական կոսմետիկ միջոց դեմքի, մազերի, մաշկի խնամքի համար:

ԳԵՅՄ ⇒ ***1.*** Խաղամաս: ***2.*** Խաղ:

ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ⇒ Սեռային:

ԳԵՆԵԱԼՈԳԻԱ ⇒ Տոհմաբանություն:

ԳԵՆԵԶԻՍ ⇒ Ծագում, ծագման պատմություն:

ԳԵՆԵՏԻԿԱ ⇔ ***1.*** Ծագումնաբանություն, ժառանգականություն: ***2.*** Ծագումնագիտություն:

ԳԵՆԵՐԱԼԻՏԵՏ ⇐ Զինուժի գեներալների ողջ կազմը:

ԳԵՆԵՐԱՑԻԱ ⇒ *(կենսբ.)* ***1.*** Սերունդ: ***2.*** Սերում, վերարտադրում: ***3.*** *(ֆիզ.)* Էլեկտրական տատանումներ:

ԳԵՇԵՖԹ *(տնտսգ.)* ⇔ Ապօրինի գործարք / բիզնես:

ԳԵՈԴԵԶԻԱ *(երկրբ.)* ⇔ Երկրաբաշխություն, հողաչափություն:

ԳԵՈԴԵԶԻՍՏ *(երկրբ.)* ⇔ Երկրաբաշխ:

ԳԵՈՊՈԼԻՏԻԿԱ ⇒ Աշխարհաքաղաքականություն:

ԳԵՐԲ ⇒ Զինանշան:

ԳԻԴ ⇔ ***1.*** Զբոսավար: ***2.*** Ուղեցույց-տեղեկատու:

ԳԻԼԻՈՏԻՆ ⇔ Կառափնատ (ֆրանս. բժիշկ Գիլիոտենի անունից):

ԳԻՆԳԻՎԻՏ *(բժշկ.)* ⇒ Լնդախտ:

ԳԻՆԵԿՈԼՈԳ ⇐ Կնախտաբան:

ԳԻՆԵԿՈԼՈԳԻԱ ⇐ Կնախտաբանություն:

ԳԻՐԼՅԱՆԴԱ ⇒ ***1.*** Դրասանգ: ***2.*** Զարդաշղթա:

ԳԻՓՅՈՒՐ ⇐ Պատկերազարդ ժանյակ:

ԳԼԱԴԻՈԼՈՒՍ ⇒ Թրաշուշան:

ԳԼԱՋՈՒՐ ⇒ Ջնարակ:

ԳԼԱՄՈՒՐ ⇔ Գրավչություն, սնդուսափայլ, պճնազարդ:

ԳԼՈԲԱԼ ⇒ Համընդհանուր:

ԳԼՈԲԱԼԻԶԱՑԻԱ ⇔ Համընդհանրացում:

ԳՈԼՖ ⇐ ***1.*** Գնդախաղի տեսակ: ***2.*** ⇔ (Ծնկա)գուլպա:

ԳՈՆԿԱ ⇒ ***1.*** Մրցարշավ: ***2.*** Հետապնդում:

ԳՈՒԲԵՐՆԱՏՈՐ ⇒ Նահանգապետ:

ԳՐԱԴԱՑԻԱ ⇒ Աստիճանավորում:

ԳՐԱՆՊՐԻ ← Բարձրագույն պարգև, մեծ մրցանակ (արվեստում, սպորտում):

ԳՐԱՆՏ ⇒ Դրամաշնորհ:

ԳՐԱՎԻՏԱՑԻԱ ⇒ Ձգողականություն / ձգողություն:

ԳՐԱՎՅՈՒՐԱ ⇒ Փորագրանկար:

ԳՐԱՖԻԿ ⇔ ***1.*** Ժամանակացույց: ***2.*** Սանդղակ:

ԳՐԱՖԻԿԱ ⇒ Գծանկարչություն:

ԳՐԱՖՖԻՏՈ ⇒ Որմնազարդում:

ԳՐԵՅՊՖՐՈՒՏ ⇒ Թուրինջ:

ԳՐԻԼ ⇐ ***1.*** Խորովելու սարք (խորովոց): ***2.*** Այդ սարքում խորոված թռչնամիս:

ԳՐԻԼՅԱԺ ⇐ ***1.*** Շաքարահյութով բռված ընկույզ: *2.* Այդ միջուկով պատրաստված շոկոլադ:

ԳՐԻՄ *(թտրգ.)* ⇒ Շպար, դիմահարդարում, դիմաներկ:

ԳՐԻՄՅՈՐ ⇒ Դիմահարդար:

ԳՐԻՆՔԱՐՏ ⇐ ԱՄՆ-ում բնակության թույլտվության համար տրվող քարտ:

ԳՐԻՖ ⇔ *1.* Գրանիշ: *2.* Որևէ մակագրությամբ կնիք:

ԳՐՈՍՄԱՅՍՏԵՐ ⇔ Մեծավարպետ:

ԳՐՈՏԵՍԿ *(գրկգ.)* ⇐ Արտառոց չափազանցություն (սահմանազանցում):

ԳՐՈՒՆՏ ⇔ *1.* Բնահող, գետին: *2.* Հիմնաներկ:

ԳՈՒՐՄԱՆ ⇔ Համադամասեր:

— Դ —

ԴԱԼՏՈՆԻԶՄ ⇐ Հիվանդություն, որի դեպքում անձը որոշ գույներ չի տարբերում (գունակուրություն, գունաշփոթություն):

ԴԱՅՎԵՐ *(մարգ.)* ⇒ Սուզալողորդ:

ԴԱՅՎԻՆԳ ⇒ Սուզալող:

ԴԱՈՒՆ ⇐ Հիվանդություն (անգլ. բժիշկ Լ. Դաունի անունից):

ԴԱՈՒՆԼՈԴ *(հմկրգչ.)* ⇒ Ներբեռնել, քաշել (*խսկգ.*):

ԴԵԲԱՏ ⇒ Բանավեճ, քննարկում:

ԴԵԲՅՈՒՏ ⇒ *1.* Բեմել, նորամուտ: *2.* Սկզբնախաղ:

ԴԵԳԵՆԵՐԱՏ ⇒ *1.* Այլասերունդ: *2.* Տհաս, տկարամիտ:

ԴԵԳԵՆԵՐԱՑԻԱ ⇒ *1.* *(կենսբ.)* Այլասերում: *2.* Բարքերի փչացում, աղավաղում:

ԴԵԳՈՒՍՏԱՏՈՐ ⇒ Համտեսող:

ԴԵԳՈՒՍՏԱՑԻԱ ⇒ Համտես(ում):

ԴԵԳՐԱԴԱՑԻԱ ⇒ *1.* Անկում, քայքայում: *2.* Վատթարացում, հետաճ: *3.* Կազմալուծում:

ԴԵԴՈՒԿՏԻՎ ⇔ Արտածական:

ԴԵԴՈՒԿՑԻԱ ⇔ Արտածում:

ԴԵՋԻՆՖԵԿՑԻԱ ⇒ Ախտահանում, ախտազերծում, վարակազերծում:

ԴԵՋԻՆՖՈՐՄԱՑԻԱ ⇒ Ապատեղեկություն, ապատեղեկատվություն:

ԴԵԺԱՎՅՈՒ *(հոգբ.)* ⇐ Վիճակ, որի դեպքում մարդուն թվում է, թե ինչ-որ մի ժամանակ ինքը եղել է այդպիսի իրավիճակում:

ԴԵԼԻԿԱՏԵՍ ⇒ Նրբախորտիկ, նրբահամ ուտեստ:

ԴԵԼՏԱ ⇐ Գետաբերանում գետի ճյուղավորումից գոյացած հարթություն:

ԴԵԼՖԻՆԱՐԻՈՒՄ ⇔ Դելֆինանոց:

ԴԵԿԱԴԱՆՍ ⇒ Տնտեսության, մշակույթի վատթարացում, անկում:

ԴԵԿԼԱՐԱՏԻՎ ⇔ Հռչակագրային:

ԴԵԿԼԱՐԱՑԻԱ ⇔ Հռչակագիր, հայտարարություն:

ԴԵԿԼԻՆԱՏՈՐ *(ֆիզ.)* ⇔ Շեղումնացույց:

ԴԵԿԼԻՆԱՑԻԱ ⇔ Մագնիսական շեղում:

ԴԵԿՈԼՏԵ ⇒ Լանջաբացվածք:

ԴԵԿՈՐ ⇔ Բեմազարդ:

ԴԵԿՈՐԱՏԻՎ ⇔ Զարդարարական:

ԴԵԿՎԱԼԻՖԻԿԱՑԻԱ *(մարզ.)* ⇒ Ապառրակավորում:

ԴԵԿՐԵՏ ⇒ ***1.*** Հրամանագիր, որոշում: ***2.*** Նախա- և ետծննդյան արձակուրդ *(խսկց.)*:

ԴԵՄԱԳՈԳ ⇒ Ամբոխավար, *փխբ.* ՝ դատարկախոս:

ԴԵՄԱԳՈԳԻԱ ⇒ Ամբոխավարություն:

ԴԵՄԱՐԿԱՑԻԱ *(դվնգ.)* ⇒ Սահմանագծում:

ԴԵՄԱՐՇ *(դվնգ.)* ⇐ Դիվանագիտական հայտարարություն՝ միջոցառում՝ որևէ պետության վրա ներգործելու նպատակով՝ բողոք, ընդվզում:

ԴԵՄՈԲԻԼԻԶԱՑԻԱ ⇒ Զորացրում:

ԴԵՄՈԿՐԱՏԻԱ ⇒ Ժողովրդավարություն:

ԴԵՄՈՆՍՏՐԱՏԻՎ ⇒ Ցուցադրական:

ԴԵՄՈՆՍՏՐԱՑԻԱ ⇒ ***1.*** Ցույց, բողոքի արարք: ***2.*** Շքերթ: ***3.*** Ցուցադրում:

ԴԵՄՈՆՏԱԺ ⇒ Կազմաքանդում, քանդում:

ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ ⇒ Բաժին (կառավարական), վարչություն, բաժանմունք:

ԴԵՊՈՋԻՏ *(ֆին.)* ⇒ Ավանդ:

ԴԵՊՈՋԻՏԱՐ *(ֆին.)* ⇔ Պայմանագրապահ, պահառու:

ԴԵՊՈՐՏ *(տնտսգ.)* ⇒ Հետադարձում (ապրանքի):

ԴԵՊՈՐՏԱՑԻԱ *(քղքգ.)* ⇒ Արտաքսում, վտարում:

ԴԵՊՐԵՍԻԱ ***1.*** ⇒ Ընկճվածություն, ընկճախտ, ճնշվածություն: ***2.*** ⇐ *(տնտսգ.)* Տնտեսական կամ արդյունաբերական ճգնաժամին հաջորդող փուլ՝ վիճակ:

ԴԵՌԵԳՈՒԼՅԱՑԻԱ ⇒ Ապակարգավորում:

ԴԵՍԱՆՏ ⇔ Զորէջք, իջազոր:

ԴԵՍԵՐՏ ⇒ Աղանդեր:

ԴԵՍՔԹՈՓ *(հմկրգչ.)* ⇒ Սեղան:

ԴԵՍՊՈՏ ⇒ Բռնակալ:

ԴԵՍՏՐՈՒԿՑԻԱ ⇒ Կազմալուծում, ապակայունացում:

ԴԵՎԱԼՎԱՑԻԱ *(տնտսգ.)* ⇒ Արժեզրկում, արժենվազում:

ԴԵՎԻԶ ⇒ Նշանաբան:

ԴԵՏԱԼ ⇔ Մանրակ:

ԴԵՏԵԿՏՈՐ ⇐ Կիսահաղորդչային սարք, որը բարձրհաճախային տատանումները փոխակերպում է ցածր հաճախականության լսելի կամ տեսանելի ազդանշանի (հայտնաբերիչ):

ԴԵՐՄԱՏԻՏ *(բժշկ.)* ⇔ Մաշկաբորբ:

ԴԵՐՄԱՏՈԼՈԳ ⇔ Մաշկաբան:

ԴԵՖԵԿՏ ⇒ Թերություն, արատ, պակասություն:

ԴԵՖԵԿՏՈԼՈԳԻԱ ⇒ Արատաբանություն:

ԴԵՖԻՑԻՏ ⇒ Պակասուրդ:

ԴԵՖԼՅԱՑԻԱ *(ֆին.)* ⇒ Գնանկում:

ԴԵՖՈՐՄԱՑԻԱ ⇒ Կերպափոխություն, ձևախեղում:

ԴԻԱԲԵՏ *(բժշկ.)* ⇒ Շաքարախտ:

ԴԻԱԳՆՈԶ *(բժշկ.)* ⇒ Ախտորոշում:

ԴԻԱԳՆՈՍՏԻԿԱ ⇔ ***1.*** *(բժշկ.)* Ախտորոշաբանություն: ***2.*** *(տեխ.)* Հայտորոշում՝ սարքերի, ավտոմեքենաների տեխնիկական վիճակի գնահատում:

ԴԻԱԳՐԱՄ ⇔ Տրամագիր:

ԴԻԱԼԵԿՏԻԿԱ *(փիլ.)* ⇐ Փիլիսոփայական ուսմունք բնության, հասարակության և մտածողության զար-

գացման ընդհանուր օրինաչափությունների մասին:

ԴԻԱՄԵՏՐ ⇒ Տրամագիծ:

ԴԻԴԱԿՏԻԿ ⇔ Ուսուցաբանական:

ԴԻԴԱԿՏԻԿԱ ⇔ Ուսուցաբանություն:

ԴԻԵՏԱ ⇔ Սննդակարգ:

ԴԻԵՏՈԼՈԳ ⇔ Սննդաբան:

ԴԻԶԱՅՆ ⇔ Գեղարարություն, ձևարարություն:

ԴԻԶԱՅՆԵՐ ⇔ Գեղարար, ձևարար՝ հագուստ, սրահ, ճարտարապետական շինություններ նն ձևավորող անձ:

ԴԻԶԵԼ ⇐ ***1.*** Վառելանյութ: ***2.*** Ներքին այրման շարժիչ (գերմ. ինժեներ Ռ. Դիզելի անունով):

ԴԻԶԵՆՏԵՐԻԱ *(բժշկ.)* ⇐ Թանչ:

ԴԻԼԵՄԱ ⇒ Երկընտրանք:

ԴԻԼԵՏԱՆՏ ⇔ Ոչ հմուտ, կիսագիտակ, թերիմաց (սիրողական մակարդակի իմացություն ունեցող անձ):

ԴԻԼԵՐ ***1.*** ⇔ Խաղարկու: ***2.*** ⇔ Գործարքառու:

ԴԻԿՏԱՏՈՐ ⇒ Բռնակալ, բռնապետ:

ԴԻԿՏԱՏՈՒՐԱ ⇒ Բռնակալություն, բռնատիրություն:

ԴԻԿՏՈՖՈՆ ⇒ Ձայնագրիչ:

ԴԻԿՑԻԱ ⇒ Առոգանություն, արտասանություն:

ԴԻՆԱՄԻԶՄ ***1.*** ⇔ Շարժունություն, գործունություն: ***2.*** *(փիլ.)* ⇐ Իդեալիստական պատկերացում, որի համաձայն՝ ուժը դիտվում է որպես ինքնուրույն՝ մատերիայից անկախ և նրան նախորդող ինքնակա սկզբունք: ***3.*** *(գրկգ., արվ.)* Պատկերների՝ գործողությունների արագ զարգացում:

ԴԻՆԱՄԻԿԱ ***1.*** ⇔ Շարժ: ***2.*** ⇐ *(ֆիզ.)* Մեխանիկայի բաժին՝ մարմինների շարժման օրենքներն ուսումնասիրող գիտություն:

ԴԻՆԱՄԻՏ ⇔ Ուժանակ:

ԴԻՆԱՄՈՄԵՏՐ ⇔ Ուժաչափ:

ԴԻՆԱՍՏԻԱ ⇒ ***1.*** Արքայատոհմ: ***2.*** Հարստություն:

ԴԻՈԴ *(տեխ.)* ⇐ Էլեկտրոնային կիսահաղորդչային մանրակ:

ԴԻՊԼՈՄ ⇔ Վկայագիր:

ԴԻՊԼՈՄԱՏ ***1.*** ⇒ Դիվանագետ: ***2.*** ⇐ Պայուսակի տեսակ: ***3.*** *փխբ.* ՝ ⇒ Խորամանկ, զգուշավոր, ճարպիկ:

ԴԻՊԼՈՄՆԻԿ ⇐ Դիպլոմային աշխատանք գրող ուսանող:

ԴԻՋԵՅ (D.J.) ⇐ Երաժշտական հաղորդավար, ով ունկնդիրներին մատուցում է երաժշտական փոփոխված կամ անփոփոխ կատարումներ:

ԴԻՍԲԱԼԱՆՍ ⇒ Անհավասարակշռություն:

ԴԻՍԵՐՏԱՆՏ ⇒ Ատենախոս:

ԴԻՍԵՐՏԱՑԻԱ ⇒ Ատենախոսություն:

ԴԻՍԻԴԵՆՏ ⇒ Այլախոհ:

ԴԻՍԻՄԻԼՅԱՑԻԱ ⇒ ***1.*** Տարնմանում: ***2.*** *(կենսբ.)* Տարրալուծում:

ԴԻՍԼՈԿԱՑԻԱ ⇒ ***1.*** *(ռազմ.)* Տեղաբաշխում: ***2.*** Տեղավորում: ***3.*** Բաշխում: ***4.*** *(երկրբ.)* Տեղախախտում: **5.** *(բժշկ.)* Հոդախախտություն, տեղաշարժ:

ԴԻՍԿ ⇒ Սկավառակ:

ԴԻՍԿԵՏ ⇒ Պնակիտ:

ԴԻՍԿՈԲՈԼ *(մարզ.)* ⇒ Սկավառակաձիգ:

ԴԻՍԿՈՏԵԿ ⇔ Պարային ակումբ:

ԴԻՍԿՐԵՑԻԱ *(իրավբ.)* ⇔ Հայեցողություն:

ԴԻՍԿՈՒՍԻԱ ⇒ Բանավեճ:

ԴԻՍԿՈՒՐՍ ⇔ Խոսույթ:

ԴԻՍԿՎԱԼԻՖԻԿԱՑԻԱ ⇒ Որակազրկում:

ԴԻՍԿՐԻՄԻՆԱՑԻԱ ⇒ Խտրականություն:

ԴԻՍՈՆԱՆՍ ⇒ ***1.*** Աններդաշնակություն: ***2.*** Անհամերաշխություն:

ԴԻՍՊԱՆՍԵՐ ⇔ Բուժարան:

ԴԻՍՊԵՏՉԵՐ ⇒ Կարգավար:

ԴԻՍՊՈՋԻՑԻԱ *(իրավբ.)* ⇐ Որոշակի կարգադրություն պարունակող իրավական նորմի մաս (կարգադրույթ):

ԴԻՍՏԱՆՑԻԱ ⇒ Միջտարածություն:

ԴԻՍՏՐԻԲՅՈՒՏՈՐ ⇒ ***1.*** Մատակարար: ***2.*** Բաշխիչ:

ԴԻՍՑԻՊԼԻՆ(Ա) ⇒ ***1.*** Գիտակարգ, գիտաճյուղ: ***2.*** Կարգապահություն:

ԴԻՍՓԼԵՑ ⇔ Ցուցադրիչ:

ԴԻՎԵՐՍԱՆՏ ⇔ Խափանարար, վնասագործ:

ԴԻՎԵՐՍԻԱ ⇔ Խափանարարություն:

ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑԻԱ ⇒ Բազմազանեցում:

ԴԻՎԻԴԵՆՏ ⇒ Շահաբաժին:

ԴԻՐԵԿՏԻՎ ⇒ Հրահանգ:

ԴԻՐԵԿՑԻԱ ⇒ Տնօրենություն:

ԴԻՐԻԺՈՐ ⇔ Նվագավար, խմբավար:

ԴԻՖԵՐԱՄԲ ⇒ Ներբող, գովերգ:

ԴԻՖՈՒԶԻԱ *(քիմ.)* ⇔ Փոխներթափանցում:

ԴԻՖՈՒԶՈՐ ***1.*** ⇐ Մազերը գանգրացնող սարք: ***2.*** *(քիմ.)* Խողովակի հատվածամաս, որում հոսքը դանդաղեցվում է, և ճնշումը մեծանում է: ***3.*** *(ֆիզ.)* Մեխանիկական տատանողական համակարգի մաս:

ԴԻՖՏԵՐԻԱ ⇐ Բկացավ:

ԴՅՈՒԲԵԼ ⇐ Առարկա, որը սուր մասով դրվում է պատի մեջ, բաց կողմից պտուտակը ձգվում է դրա մեջ:

ԴՈԳՄԱ ⇔ Անառարկելի պնդում, ճշմարտություն, դրույթ:

ԴՈԶԱ ⇔ Դեղաչափ:

ԴՈԿՈՒՄԵՆՏԱԼ ⇒ Վավերագրական, փաստագրական:

ԴՈԿՏՐԻՆ ⇒ Ուսմունք, վարդապետություն:

ԴՈՄԻՆԱՆՏ ⇒ Գերիշխող, հիմնական:

ԴՈՆՈՐ ⇐ ***1.*** Անձ, որը հիվանդին ինքնակամ տալիս է արյուն կամ որևէ օրգան (նվիրատու): ***2.*** *փխբ.՝* Վարկատու:

ԴՈՊԻՆԳ *(մարզ.)* ⇒ Խթանիչ:

ԴՈՍԻԵ ⇒ Թղթածրար, անձնական գործ:

ԴՈՏԱՑԻԱ *(տնտսգ.)* ⇒ Լրավճար, լրահատկացում

ԴՌԵԼ ⇒ Շաղափ(իչ):

ԴՐԱՄԱՏՈՒՐԳ ⇔ Թատերգու:

ԴՐԱՄԱՏՈՒՐԳԻԱ ⇔ Թատերգություն:

ԴՐԱՑՎ ⇒ Եռանդ:

ԴՐԵՆԱԺ *(գիտ.)* ⇒ Ջրաքաշում, ցամաքուրդ:

ԴՐՈԺ ⇒ Խմորիչ:

ԴՈՒԲԻՆԿԱ ⇒ Մահակ, ռետինե մահակ:

ԴՈՒԲԼ ⇐ ***1.*** *(կինո)* Միևնույն տեսարանի մեկից ավելի նկարահանում: ***2.*** Նկարահանված տարբերակներից յուրաքանչյուրը: ***3.*** *(մարզ.)* ⇔ Կրկնագոլ:

ԴՈՒԲԼԻԿԱՏ / ԴՈՒԲԼԵՏ ⇒ Կրկնօրինակ, պատճեն:

ԴՈՒԲԼՅԱԺ *(կինո)* ⇒ Կրկնօրինակում:

ԴՈՒԲԼՅՈՆԿԱ ⇐ Տաք վերնազգեստի՝ վերարկուի տեսակ:

ԴՈՒԲԼՅՈՐ *(կինո)* ⇒ Փոխարինող:

— Զ —

ԶԱԲԵԳ ⇒ Մրցահերթ:

ԶԱՄԱՍԿԱ ⇒ Ծեփամածիկ:

ԶԱՄԾ ⇔ Թավշակաշի:

ԶԱՉՈՏՆԻԿ ⇒ Ստուգման գրքույկ՝ ստուգագրքույկ:

ԶԱՊՈՆԿԱ ⇒ Թևքաճարմանդ:

ԶԻԳԶԱԳ ⇔ Կեռման, ոլորագիծ, կեռագիծ:

ԶՈԲ ⇔ Խպիպ:

ԶՈԴԻԱԿ ⇔ Կենդանակերպ, կենդանաշրջան:

ԶՈՄԲԻ ⇐ «Կենդանի էակ», որն ամբողջությամբ կորցրել է ինքնատիրապետումը կամ լիովին ղեկավարվում է այլ անձանց թելադրանքով:

ԶՈՄԲԻԱՑՆԵԼ ⇐ Կամազրկել և կառավարել մարդուն որևէ ներգործուն միջոցով:

ԶՈՆԱ ⇒ Գոտի, տարածք, տարածություն:

ԶՈՆԴ ⇔ ***1.*** Զննաձող: ***2.*** Հորատիչ: ***3.*** Մխան:

ԷԳԱԼԻՏԱՐԻԶՄ ⇔ Հավասարապաշտություն:

ԷԳՈԻԶՄ ⇒ Եսապաշտություն, եսամոլություն, եսասիրություն:

ԷԳՈՑԵՆՏՐԻԶՄ ⇒ Եսակենտրոնություն:

ԷԶՈԹԵՐԻԿ *(փիլ.)* ⇔ Գաղտնի, թաքցրած (թաքնագիտական):

ԷԹԻԿԱ ⇒ Բարոյագիտություն:

ԷԹԻԿԵՏ ⇔ Վարվեցողություն, վարվելակարգ:

ԷԹՆԻԿ ⇔ Ազգային:

ԷԹՆՈԳՐԱՖԻԱ ⇒ Ազգագրություն:

ԷԹՆՈՍ ⇔ Ազգ:

ԷԼԱՍՏԻԿ ⇒ Առաձգական:

ԷԼԵԳԱՆՏ ⇒ Նրբագեղ, նրբաճաշակ:

ԷԼԵԿՏՈՐԱՏ ⇒ Ընտրազանգված:

ԷԼԵՄԵՆՏ ⇔ Տարր, բաղադրիչ:

ԷԼԵՄԵՆՏԱՐ ⇒ *1.* Տարրական: *2.* Պարզ, հասարակ: *3.* Մակերեսային, սահմանափակ:

ԷԼԻՏԱ ⇔ Ընտրանի, վերնախավ:

ԷԼԻՏԱՐ ⇔ Վերնախավային:

ԷԿԶԻՍՏԵՆՑԻԱԼԻԶՄ ⇔ Գոյապաշտություն (20-րդ դ. գրական և փիլիսոփայական ուղղություն):

ԷԿԶԵՄԱ ⇐ Մաշկի բշտիկային ախտահարում (թրմաքոս):

ԷԿԶԵՄՊԼՅԱՐ ⇒ Նմուշ, օրինակ:

ԷԿԶՈԳԵՆ *(երկրբ.)* ⇔ Արտածին:

ԷԿԶՈԹԵՐԻԿ ⇒ Հանրամատչելի, բաց, հրապարակային:

ԷԿԶՈԹԵՐԻԿԱ ⇐ Կրոնական կամ փիլիսոփայական ուսմունք:

ԷԿԶՈԹԵՐՄԻԿ ⇒ Ջերմատու, ջերմարտադրական:

ԷԿԶՈՏԻԿ ⇒ Տարաշխարհիկ:

ԷԿԻՊԱԺ ⇒ Անձնակազմ:

ԷԿԼԵԿՏԻԶՄ (*փիլ.*) ⇐ Ուսմունք տարբեր սկզբունքների, տեսակետների մեխանիկական միացման, համադրման մասին:

ԷԿԼԵԿՏԻԿ ⇐ ***1.*** Էկլեկտիզմին հատուկ: ***2.*** Էկլեկտիզմի հետևող:

ԷԿՈԼՈԳ ⇒ Բնապահպան / գոյապահպան:

ԷԿՈԼՈԳԻԱ ⇒ Բնապահպանություն / գոյապահպանություն:

ԷԿՈՆՈՄԻԱ ⇒ Խնայողություն:

ԷԿՈՆՈՄԻԿԱ ⇔ ***1.*** Տնտեսություն: ***2.*** Տնտեսագիտություն:

ԷԿՎԱԼԱՅԶԵՐ *(տեխ.)* ⇐ Մանրակ ձայնարկիչ սարքերում, որն ապահովում է մաքուր, հնչեղ ձայն:

ԷԿՎԻՎԱԼԵՆՏ ⇒ ***1.*** Համարժեք, հավասարարժեք: ***2.*** Համազոր, համապատասխան:

ԷՄԱՆՍԻՊԱՑԻԱ *(քղթգ.)* ⇒ Ազատագրություն, ազատագրում:

ԷՄԲԱՐԳՈ *(տնտսգ., իրավք.)* ⇒ ***1.*** Արգելք: ***2.*** Բեռնարգելք:

ԷՄԲԼԵՄ ⇔ Խորհրդապատկեր:

ԷՄԷՄԷՍ (MMS) ⇐ Հաղորդագրության տեսակ:

ԷՄԻԳՐԱՆՏ ⇒ Արտագաղթող:

ԷՄԻԳՐԱՑԻԱ ⇒ Արտագաղթ:

ԷՄԻՍԱՐ ⇒ Հանձնակատար:

ԷՄԻՍԻԱ *(տնտսգ.)* ⇔ Դրամաթողարկում (արժույթի նոր թողարկում):

ԷՄԻՍԻՈՆ ⇔ Թողարկային:

ԷՄՈՑԻԱ ⇒ Հույզ, զգացմունք:

ԷՄՈՑԻՈՆԱԼ ⇒ Հուզական, զգացմունքային, դյուրազգաց:

ԷՄՊԻՐԻԶՄ *(փիլ.)* ⇔ Փորձապաշտություն (փիլիսոփայական ուղղություն, որը փորձը համարում է իմացության հիմնական աղբյուրը):

ԷՄՊԻՐԻԿ ⇔ Փորձառական:

ԷՄՊԻՐԻՈԿՐԻՏԻՑԻԶՄ ⇔ Փորձաքննադատություն:

ԷՅՖՈՐԻԱ ⇐ Չափից ավելի ուրախ տրամադրություն՝ բերկրաթմբիր:

ԷՆԴԵՄԻԿ ⇔ Տեղաբնիկ, բնաշխարհիկ:

ԷՆԴՈԹԵՐՄԻԿ ⇔ Ներջերմային:

ԷՆԴՈԿՐԻՆ ⇔ Ներզատիչ:

ԷՆԴՈԿՐԻՆՈԼՈԳ ⇐ Էնդոկրինոլոգիայի մասնագետ (ներզատաբան):

ԷՆԴՈԿՐԻՆՈԼՈԳԻԱ ⇐ Ուսմունք ներզատիչ գեղձերի մասին (ներզատաբանություն):

ԷՆՏՈՒԶԻԱԶՄ ⇒ Խանդավառություն, ոգևորություն:

ԷՆՑԵՖԱԼԻՏ *(բժշկ.)* ⇔ Գլխուղեղի բորբոքում՝ ուղեղաբորբ:

ԷՆՑԻԿԼՈՊԵԴԻՍՏ ⇒ Հանրագիտակ:

ԷՇԵԼՈՆ ⇔ Ավտոշարասյուն, գնացքաշար, զորաշարք:

ԷՊԻԳՐԱՖ ⇒ *1.* Բնաբան: *2.* Տապանագիր:

ԷՊԻԳՐԱՖԻԿԱ ⇒ Տապանագրագիտություն, արձանագրագիտություն:

ԷՊԻԴԵՄԻԱ ⇒ Համաճարակ:

ԷՊԻԴԵՄԻՈԼՈԳ ⇒ Համաճարակաբան:

ԷՊԻԴԵՄԻՈԼՈԳԻԱ ⇒ Համաճարակաբանություն:

ԷՊԻԶՈԴ ⇒ Միջադեպ, դիպված, դրվագ:

ԷՊԻԶՈԴԻԿ ⇔ Դրվագային, դիպվածային:

ԷՊԻԼՅԱՏՈՐ ⇐ Մազահեռացնող սարք:

ԷՊԻԼՅԱՑԻԱ ⇒ Մազահեռացում:

ԷՊԻԼՈԳ ⇒ Վերջաբան (եզրափակիչ մաս):

ԷՊԻԿՐԻԶ ⇐ Հիվանդության պատմության վերջում զետեղված եզրակացություն:

ԷՊՈՊԵԱ ⇒ Հերոսապատում:

ԷՍԷՄԷՍ *(SMS)* ⇔ Հաղորդագրություն:

ԷՍԹԵՏ ⇒ Գեղագետ:

ԷՍԹԵՏԻԿ ⇒ Գեղագիտական:

ԷՍԹԵՏԻԿԱ ⇒ Գեղագիտություն:

ԷՍԿԱԴՐԱ ⇒ Տորմիդ:

ԷՍԿԱԼԱՏՈՐ ⇒ Շարժասանդուղք:

ԷՍԿԱԼԱՑԻԱ ⇔ Ընդլայնում, ավելացում, սաստկացում, ուժգնացում:

ԷՍՏԱԿԱԴԱ ⇐ Ձողերի վրա կառուցված հարթակ, որ ծառայում է ճանապարհները բարձրացնելուն (ցցաթումբ):

ԷՍՔԻԶ ⇔ Ուրվանկար, նախանկար:

ԷՎԱԼՎԱՑԻԱ *(տնտսգ.)* ⇒ Գնահատում, հաշվարկում:

ԷՎԱԿՈՒԱՑԻԱ ⇒ Տարհանում, տեղափոխում:

ԷՎԱԿՈՒԱՏՈՐ ⇒ Ավտոքարշակ:

ԷՎՈԼՅՈՒՑԻԱ ⇐ Բնաշրջում, զարգացում, մի որակական վիճակից անցում մի նոր որակական վիճակի (տնափոխություն):

ԷՏԱԼՈՆ ⇔ Չափանմուշ, ստուգանմուշ:

ԷՐԻՍՏԻԿԱ ⇒ Բանավեճի արվեստ:

ԷՐՈՒԴԻՏ ⇒ Խորագետ, խորիմաց, բազմագիտակ, խորահմուտ, բազմահմուտ:

ԷՐՈՒԴԻՑԻԱ ⇒ Խորագիտություն, խորիմացություն, բազմակողմանի զարգացածություն:

ԷՔՍԿԼՅՈՒԶԻՎ ⇒ Բացառիկ, յուրահատուկ, եզակի:

ԷՔՍԿՈՒՐՍ ⇐ Գլխավոր նյութից շեղվելը՝ բուն նյութին առնչվող հարցեր լուսաբանելու նպատակով (արտաճառ, արտաբանություն, շեղադիտարկում):

ԷՔՍԿՈՒՐՍԻԱ ⇔ Շրջագայություն, զբոսարշավ:

ԷՔՍՀՈՒՄԱՑԻԱ ⇒ Արտաշիրմում:

ԷՔՍՊԱՆՍԻԱ *(քղքգ.)* ⇒ Զավթում, ընդարձակում, ծավալում:

ԷՔՍՊԱՆՍԻՈՆԻԶՄ *(քղքգ.)* ⇒ Զավթողականություն, ծավալապաշտություն:

ԷՔՍՊԱՏՐԻԱՑԻԱ *(քղքգ., իրավք.)* ⇒ Արտաքսում, տարագրում, վտարում (հայրենավտարում):

ԷՔՍՊԵՐԻՄԵՆՏ ⇒ Գիտափորձ:

ԷՔՍՊԵՐԻՄԵՆՏԱԼ ⇒ Փորձաբարական, փորձագիտական:

ԷՔՍՊԵՐՏ ⇒ Փորձագետ:

ԷՔՍՊԵՐՏԻԶԱ ⇒ Փորձաքննություն:

ԷՔՍՊԼԱՆՏԱՑԻԱ *(բժշկ.)* ⇒ Փոխպատվաստում:

ԷՔՍՊԼՈՒԱՏԱՑԻԱ *(քղքգ.)* ⇒ Շահագործում:

ԷՔՍՊՈԶԻՑԻԱ *(արվ.)* ⇒
1. Նախադրություն:
2. Ցուցադրություն:

ԷՔՍՊՈՆԱՏ ⇒ Ցուցանմուշ:

ԷՔՍՊՈՐՏ *(տնտսգ.)* ⇒ Արտահանում:

ԷՔՍՊՐԵՍ ⇒ Ճեպընթաց (գնացք, ավտոբուս ևն):

ԷՔՍՊՐԵՍԻԱ ⇒ Զգացմունք, արտահայտչականություն:

ԷՔՍՊՐԵՍԻՈՆԻԶՄ *(արվ., գրկգ.)* ⇐ Ստեղծագործական ուղղություն (արտահայտչապաշտություն):

ԷՔՍՊՐԵՍԻՈՆԻՍՏ ⇐ Էքսպրեսիոնիզմի հետևորդ (արտահայտչապաշտ):

ԷՔՍՊՐՈՄՏ ⇐ Արագագիր, հանկարծաստեղծություն, հեղաստեղծում:

ԷՔՍՊՐՈՊՐԻԱՑԻԱ *(իրավք.)* ⇒ Ունեզրկում, սեփականազրկում:

ԷՔՍՏԱՋ ⇔ Զմայլանք, ինքնամոռացություն:

ԷՔՍՏԵՌՆ ⇐ Դրսեկ(ություն):

ԷՔՍՏԵՐԻԵՐ ⇐ Ճարտարապետական շինությունների, ավտոմեքենայի արտաքին տեսքը (դրսույթ):

ԷՔՍՏՐԱԴԻՑԻԱ *(իրավք., դվնգ.)* ⇒ (Արտա)հանձնում:

ԷՔՍՏՐԱԿՏ ⇐ *1.* Մրգերից կամ բանջարեղենից քամելով ստացվող հյութ (մուզ, հանուկ): *2.* Բուժական պատրաստուկ (նրբաթուրմ):

ԷՔՍՏՐԱՍԵՆՍ ⇒ Պայծառատես:

ԷՔՍՏՐԱՎԱԳԱՆՏ ⇒ Արտասովոր, տարօրինակ:

ԷՔՍՏՐԵՄԱԼ ⇔ Ծայրահեղ:

ԷՔՍՏՐԵՄԻԶՄ *(քղքգ.)* ⇔ Ծայրահեղականություն:

ԷՔՍՏՐԵՄԻՍՏ ⇔ Ծայրահեղական:

ԷՔՍՏՐԻՄ ⇐ Վտանգներով լի մարզաձև / զբաղմունք ևն, որի նպատակը սուր զգացողություններ ունենալն է:

ԷՔՍՑԵՆՏՐԻԿ ⇒ *1.* Անհավասարակշիռ, հախուռն: *2.* Ապակենտրոն, կենտրոնաշեղ:

ԷՖԵԿՏ ⇒ *1.* Արդյունք, արգասիք: *2.* Տպավորություն: *3.* Հնարք:

ԷՎՖԵՄԻԶՄ *(լզվք.)* ⇒ Մեղմասություն:

ԷՖԹԱՆԱԶԻԱ *(բժշկ., իրավք.)* ⇔ Բարեսպանություն:

ԹԱՅՄԱՌԻՏ *(մարզ.)* ⇒ Ընդմիջում, կարճատև դադար:

ԹԱՅՄԵՐ ⇒ Ժամաչափ:

ԹԱՅՖՈՒՆ ⇔ Մրրկահողմ:

ԹԵԶ ***1.*** ⇔ Դրույթ, հիմնադրույթ: ***2.*** ⇐ Գիտական աշխատանք: ***3.*** ⇒ Ատենախոսություն:

ԹԵԻՍՏ ⇒ Աստվածապաշտ:

ԹԵՈԼՈԳԻԱ ⇒ Աստվածաբանություն:

ԹԵՈԿՐԱՏԻԱ *(քղքզ.)* ⇒ Կրոնապետություն:

ԹԵՐԱՊԵՎՏ ⇐ Ներքին հիվանդություններ բուժող մասնագետ (բուժագետ):

ԹԵՐԱՊԻԱ *(բժշկ.)* ⇐ ***1.*** Ներքին հիվանդությունների բուժումն ուսումնասիրող գիտություն: ***2.*** Ներքին հիվանդությունների բուժում (բուժագիտություն):

ԹԵՐՄՈԴԻՆԱՄԻԿԱ ⇐ Ֆիզիկայի բաժին, որն ուսումնասիրում է ջերմային շարժումը և դրա ազդեցությունը այլ մարմինների վրա (ջերմուժականություն):

ԹԵՐՄՈՍ ⇔ Ջերմապահ:

ԹԻՆԵՅՋԵՐ ⇒ Պատանի, պարմանի:

ԹՅՈՒՆԵՐ *(տեխ.)* ⇔ Ռադիոընդունիչ:

ԹՅՈՒՆԻՆԳ ⇐ Որևէ առարկայի (ավտոմեքենայի, կահույքի, հեռախոսի և այլնի) արտաքին տեսքի լրացուցիչ հարդարում:

ԹՈՍՏԵՐ *(տեխ.)* ⇐ Հացի բրակ շերտերը չորացնող և կարմրացնող սարք:

ԹՈՔՇՈՈՒ ⇐ Հեռուստատեսային հարցազրույց ճանաչված որևէ գործչի հետ (զրուցահանդես):

ԹՐԱՖԻՔԻՆԳ *(քղքզ., իրավք.)* ⇐ Մարդկանց՝ ստրկական, սեռական (կամ չնչին վարձատրությամբ) ապօրինի շահագործում (մարդավաճառք):

ԹՐԵՅԼԵՐ *(կինո)* ⇐ Ֆիլմի կամ համակարգչային ծրագրի / խաղի կարճ

հոլովակ՝ այն գովազդելու համար:

ԹՐԵՆԴ ⇒ Միտում, ուղղություն:

ԹՐԵԿ *(մարզ.)* ⇒ Մրցուղի:

ԹՐԵՅՆԻՆԳ ⇔ Վարժանք, մարզում:

ԹՐԻԼԵՐ ⇐ Կլանող հետաքրքրաշարժ ֆիլմ կամ գրական երկ (կինոպատում):

ԹՐՈՄԲ *(բժշկ.)* ⇐ Անոթներում առաջացող արյան մակարդուկ:

ԹՐՈՄԲՈԶ *(բժշկ.)* ⇐ Արյան մակարդում անոթում կամ սրտի խոռոչում (մակարդուկ):

— Ժ —

ԺԱԼՅՈՒԶԻ ⇒ Շերտավարագույր:

ԺԱԿԵՏ ⇐ Երկարաթև տաք վերնազգեստ:

ԺԵԼԱՏԻՆ / ԺԵԼԵ ⇒ Դոնդող:

ԺԵՍՏ ⇒ *1.* Շարժում: *2. փիր.* ՝ Արարք, վարմունք, վարքագիծ:

ԺԵՍՏԻԿՈՒԼՅԱՑԻԱ ⇒ Շարժուձև, շարժմունք:

ԺԵՏՈՆ ⇐ Մետաղանիշ, մետաղյա խաղանիշ:

ԺԻԼԵՏ ⇐ Անթև վերնազգեստ (բաճկոնակ):

ԺՅՈՒՐԻ ⇔ Մրցատյան:

ԺՈՆԳԼՅՈՐ ⇒ Ձեռնաձու:

— Ի —

ԻԴԵԱ ⇒ Գաղափար:

ԻԴԵԱԼ ⇔ Կատարելություն, կատարելատիպ:

ԻԴԵԱԼԻԶՄ ⇔ Գաղափարապաշտություն, գաղափարականություն (փիլիսոփայական ուղղություն, որը ամեն ինչի գոյության հիմքը համարում է գիտակցությունը՝ գաղափարը):

ԻԴԵԱԼԻՍՏ ⇐ Գաղափարապաշտ (իդեալիստական փիլիսոփայության հետևորդ):

ԻԴԵՆՏԻՖԻԿԱՑԻԱ ⇒Նույնականացում:

ԻԴԵՈԳՐԱՖԻԱ ⇒ Գաղափարագրություն:

ԻԴԵՈԼՈԳ ⇒ Գաղափարախոս, գաղափարաբան:

ԻԴԵՈԼՈԳԻԱ ⇒ Գաղափարախոսություն:

ԻԴԻԼԻԱ ⇒*1.* Հովվերգություն: *2.* Անդորր:

ԻԶՈԼՅԱՏՈՐ *1.* ⇒ *(տեխ.)* Մեկուսիչ: *2. (իրավ.)* Մեկուսարան:

ԻԶՈԼՅԱՑԻԱ ⇒Մեկուսացում:

ԻԶՈՄՈՐՖ ⇔ Նույնաձև, համաձև:

ԻԼՅՈՒԶԻԱ ⇒ Պատրանք, խաբկանք:

ԻԼՅՈՒԶԻՈՆԻԶՄ *1. (փիլ.)* ⇐ Իդեալիստական տեսություն, որի համաձայն՝ նյութական աշխարհը երևութական է: *2.* ⇒ Աճպարարություն:

ԻԼՅՈՒԶԻՈՆԻՍՏ *1.* ⇐Իլյուզիոնիզմի հետևորդ: *2.* ⇒ Աճպարար:

ԻԼՅՈՒՍՏՐԱՏԻՎ ⇒ *1.* Նկարազարդ, պատկերազարդ: *2.* Լուսաբանող:

ԻԼՅՈՒՍՏՐԱՑԻԱ ⇒ Նկարազարդում, պատկերազարդում:

ԻԿԵԲԱՆԱ ⇒ Ծաղկահարդարում:

ԻՄԵՅԼ *(e -mail)* ⇒ Էլփոստ:

ԻՄԻՋ ⇔ *1.* Կերպար: *2.* Ոճ: *3.* Հեղինակություն, վարկ:

ԻՄԻՋՄԵՅՔԵՐ ⇐ Որևէ մեկի կերպարը ստեղծող անձ (կերպարար):

ԻՄԻՏԱՑԻԱ ⇒ Նմանակում:

ԻՄՈՒՆԻՏԵՏ *1. (բժշկ.)* ⇐ Օրգանիզմի անընկալությունը վարակիչ հիվանդությունների նկատմամբ (վարակամերժություն): *2. (քղքգ., իրավ.)* ⇒ Անձեռնմխելիություն:

ԻՄՊԵՐԻԱԼԻԶՄ *(քղքգ.)* ⇔ Կայսերապաշտություն:

ԻՄՊԻՉՄԵՆՏ *(իրավ., քղքգ.)* ⇐ Ընթացակարգ, որով երկրի օրենսդիր մարմինը

պաշտոնապես մեղադրանք է առաջադրում կառավարության բարձրաստիճան պաշտոնյաներին (պաշտոնանկություն):

ԻՄՊԼԱՆՏ *(բժշկ.)* ⇐ Որևէ օրգանի արհեստական փոխարինիչ (փոխադիր):

ԻՄՊԼԱՆՏԱՑԻԱ *(բժշկ.)* ⇐ Վիրահատությամբ արհեստական փոխարինչի պատվաստում:

ԻՄՊԼԻՑԻՏ *(լզվբ.)* ⇒ Ներակա:

ԻՄՊՈՐՏ *(տնտսգ.)* ⇒ Ներմուծում:

ԻՄՊՈՐՏՅՈՐ *(տնտսգ.)* ⇒ Ներմուծող:

ԻՄՊՐԵՍԻՈՆԻԶՄ ⇔ Տպավորապաշտություն:

ԻՄՊՐՈՎԻԶԱՏՈՐ ⇐ Հանպատրաստից բանաստեղծություն, երգ ևն ստեղծող մարդ:

ԻՄՊՐՈՎԻԶԱՑԻԱ ⇐ Հանպատրաստից ստեղծված բանաստեղծություն, երգ ևն (հանկարծաստեղծություն, պահագյուտ):

ԻՄՊՈՒԼՍ ⇔ Ազդակ, խթան:

ԻՆԱՈԻԳՈՒՐԱՑԻԱ ⇒ Երդմնակալություն, ձեռնադրում, պաշտոնակալություն:

ԻՆԴԵՔՍ ⇔ ***1.*** Ցուցիչ, դասիչ: ***2.*** Ցուցանիշ:

ԻՆԴԻՎԻԴՈՒԱԼ ⇒ Անհատական:

ԻՆԴԻՎԻԴՈՒԱԼԻԶԱՑԻԱ ⇒ Անհատականացում:

ԻՆԴԻՎԻԴՈՒԱԼԻՍՏ ⇒ Անհատապաշտ:

ԻՆԴՈՒԿՏԻՎ ⇔ Մակածական

ԻՆԴՈՒԿՑԻԱ ⇔ Մակածություն:

ԻՆԴՈՒՍՏՐԻԱ ⇒ Արդյունաբերություն:

ԻՆԵՐՏ ***1.*** *(քիմ.)* ⇐ Չեզոք: ***2.*** ⇒ *փիլբ.* ՝ Անգործունյա, անտարբեր:

ԻՆԺԵԿՏՈՐ ⇔ Ներարկիչ, շիթային պոմպ:

ԻՆԻՑԻԱՏԻՎ(Ա) ⇒ Նախաձեռնություն:

ԻՆԿԱՍԱՏՈՐ ⇔ Գանձիչ:

ԻՆԿԱՍԱՑԻԱ ⇔ Դրամագանձում:

ԻՆԿՈՒԲԱՏՈՐ ⇔ Թխսամեքենա:

ԻՆԿՈՒԲԱՑԻԱ ⇐***1.*** *(բժշկ.)* Հիվանդության թաքուն

շրջան: ***2.*** Արհեստական եղանակով ճտերի բուծում:

ԻՆԿՎԻԶԻՏՈՐ ⇒ Հավատաքննիչ:

ԻՆԿՎԻԶԻՑԻԱ ⇒ Հավատաքննություն:

ԻՆՀԱԼՅԱՑԻԱ *(բժշկ.)* ⇐ Բուժական նպատակով գոլորշի շնչելը:

ԻՆՈՎԱՑԻԱ ⇒ Նորարարություն, նորամուծություն, նորաստեղծություն:

ԻՆՈՎԱՑԻՈՆ ⇒ Նորարարական, նորամուծական:

ԻՆՍԵՐԹ *(հմկրգչ.)* ⇒ Զետեղում:

ԻՆՍՊԵԿՑԻԱ ⇒ Տեսչություն:

ԻՆՍՏԱԼՅԱՑԻԱ *(հմկրգչ.)* ⇒ Տեղադրում:

ԻՆՍՏԱՆՑԻԱ ⇒ ***1.*** Աստիճանակարգ: ***2.*** Ատյան:

ԻՆՍՏՐՈՒԿՑԻԱ ⇒ ***1.*** Ցուցում: ***2.*** Հրահանգ: ***3.*** Ուղեցույց

ԻՆՎԱԼՅՈՒՏԱ *(ֆին.)* ⇒ Արտարժույթ:

ԻՆՎԵՍՏԻՑԻԱ *(տնտսգ.)* ⇒ Ներդրում:

ԻՆՎԵՍՏՈՐ ⇒ Ներդրող:

ԻՆՎԵՐՍԻԱ *(լզվբ.)* ⇒ Շրջադասություն:

ԻՆՏԵԳՐԱՑԻԱ ⇔ Համարկում, ներգրավում:

ԻՆՏԵԳՐԵԼ ⇔ Համարկել, ներգրավել:

ԻՆՏԵԼԵԿՏՈՒԱԼ ⇔ Բանական, խելացի:

ԻՆՏԵԼԻԳԵՆՏ ⇔ Մտավորական, բարեկիրթ:

ԻՆՏԵԼԻԳԵՆՑԻԱ ⇔ Մտավորականություն:

ԻՆՏԵՆՍԻՎ ⇔ Բուռն, լարված:

ԻՆՏԵՐԱԿՏԻՎ ⇔ Փոխգործուն:

ԻՆՏԵՐԻԵՐ *(ճարտգ.)* ⇐ Ճարտարապետական որևէ շինության ներքին տեսքը (ներսույթ):

ԻՆՏԵՐՆԱՏ ⇒ Գիշերօթիկ, կացարան:

ԻՆՏԵՐՆԵՏ ⇒ Համացանց:

ԻՆՏԵՐՎԱԼ ⇒ Բացատ, միջտարածություն:

ԻՆՏԵՐՎՅՈՒ ⇒ Հարցազրույց

ԻՆՏԵՐՖԵՅՍ *(հմկրգչ.)* ⇔ Միջերես:

ԻՆՏԻՄ ⇔ ***1.*** Խիստ անձնական, ներաձնային: ***2.*** Մտերմիկ:

ԻՆՏՈՆԱՑԻԱ ⇒ ***1.*** Հնչերանգ, առոգանություն: ***2.*** Ելևէջում:

ԻՆՏՈՒԻՏԻՎ ⇔ Ներըմբռնողական, ներհայեցողական:

ԻՆՏՈՒԻՑԻԱ ⇔ Ներըմբռնում, ներհայեցողություն:

ԻՆՏՐԻԳ *1.* ⇒ Խառնակություն, խարդավանք, չարակամություն, բանսարկություն: *2.* ⇐ Անցողիկ սիրային կապ:

ԻՆՏՐԻԳԱՆ ⇒ Բանսարկու, խառնակիչ:

ԻՆՖԱՆՏԻԼԻԶՄ *(բժշկ.)* ⇔ Մանկայնություն:

ԻՆՖԱՐԿՏ *(բժշկ.)* ⇐ Սրտի կաթված (սրտախտ, սրտակաթված):

ԻՆՖԵԿՑԻԱ ⇒ Վարակ:

ԻՆՖԵԿՑԻՈՆԻՍՏ ⇒ Վարակաբան:

ԻՆՖԼՅԱՑԻԱ *(տնտսգ.)* ⇒ Սղաճ, գնաճ:

ԻՆՖՈՐՄԱՏԻԿ ⇐ *1.* Տեղեկագետ: *2.* Տեղեկագիտական:

ԻՆՖՈՐՄԱՏԻԿԱ ⇐ Տեղեկագիտություն:

ԻՆՖՈՐՄԱՑԻԱ ⇒ Տեղեկույթ, տեղեկություն:

ԻՆՖՈՐՄԱՑԻՈՆ ⇒ Տեղեկատվական:

ԻՆՖՐԱՍՏՐՈՒԿՏՈՒՐԱ *(տնտսգ.)* ⇒ Ենթակառուցվածք, ենթակառույց:

ԻՇԵՄԻԱ ⇔ Տեղային սակավարյունություն:

ԻՇԻԱՍ *(բժշկ.)* ⇐ Նստանյարդի բորբոքում:

ԻՌԱՑԻՈՆԱԼ *1. (մաթ.)* ⇐ Անհաշվելի: *2. (փիլ.)* ⇔ Ոչ բանական, անտրամաբանական:

ԻՐԻՍ *1. (բոտ.)* ⇒ Հիրիկ: *2. (բժշկ.)* ⇐ Աչքի ծիածանագույն թաղանթ:

ԻՐՈՆԻԱ ⇒ Հեգնանք:

— Լ —

ԼԱԲՈՐԱՆՏ ⇐ *1.* Լաբորատորիայի աշխատող: *2.* Գիտաուսումնական հաստատության աշխատակից:

ԼԱԼՈՊԱԹԻԱ *(բժշկ.)* ⇔ Խոսելախտ:

ԼԱԿՈՆԻԿ ⇒ Սեղմ, կարճ, կարճառոտ, ամփոփ:

ԼԱՄԻՆԱՑԻԱ ⇔ Շերտապատում:

ԼԱՅՆԵՐ ⇒ Գծանավ, գծոդանավ:

ԼԱՅՔ *(հմկրգչ.)* ⇒ Հավանում:

ԼԱՅՔԵԼ *(հմկրգչ.)* ⇒ Հավանել:

ԼԱՆԳԵՏ ⇐ Թակածո:

ԼԱՆՉ (բիզնես-լանչ) ⇐ Ակրատ (երկրորդ նախաճաշ):

ԼԱՆՑԵՏ ⇒Նշտար:

ԼԱՊՇԱ ⇒ Արիշտա:

ԼԱՎԱՆԴԱ *(բսբ.)* ⇒Նարդոս:

ԼԱՏԻՆԻԶՄ ⇒ Լատինաբանություն:

ԼԱՐԻՆԳԻՏ *(բժշկ.)* ⇔ Կոկորդաբորբ:

ՕԲՅԵԿՏԻՎ ***1.*** ⇔ Անաչառ, անկողմնակալ: ***2.*** Առարկայական: ***3.*** *(տեխ.)* ⇐ Օպտիկական սարքի մաս:

ՕԲՍԿՈՒՐԱՆՏԻԶՄ ⇒ Խավարամտություն:

ՕԼԻԳԱՐԽ ***1.*** ⇐ Քաղաքական և տնտեսական անկախություն ու մեծ հարստություն ունեցող անձ (խմբիշխան): ***2.*** ⇔ Մեծահարուստ:

ՕԼԻԳԱՐԽԻԱ *(քղքգ.)* ⇐ Խոշոր կապիտալի ներկայացուցիչների ոչ մեծ խմբի տնտեսական և քաղաքական տիրապետություն (խմբիշխանություն):

ՕԼԻԳՈՊՈԼԻԱ *(տնտսգ.)* ⇔ Խմբաշնորհ՝ շուկայի մրցակցային կառուցվածք, որի դեպքում շուկայում կան մի քանի խոշոր արտադրողներ / վաճառողներ, որոնցից յուրաքանչյուրը տնօրինում է շուկայական մի մեծ մասնաբաժին:

ՕԼԻԳՈՖՐԵՆԻԱ *(բժշկ.)* ⇒ Թուլամտություն, թերզարգացում:

ՕԿՈՒՊԱՆՏ ⇒ Զավթիչ, նվաճող:

ՕԿՈՒՊԱՑԻԱ *(քղքգ.)* ⇒ Զավթում, նվաճում:

ՕՄԲՈՒԴՍՄԵՆ *(իրավբ.)* ⇐ Մարդու իրավունքների պաշտպան՝ իրավապաշտպան:

ՕՆԿՈԼՈԳ *(բժշկ.)* ⇔ Ուռուցքաբան:

ՕՆԿՈԼՈԳԻԱ *(բժշկ.)* ⇔ Ուռուցքաբանություն:

ՕՆՈՄԱՍՏԻԿԱ *(լզվբ.)* ⇒ Հատկանվանագիտություն:

ՕՊԵՐԱՏԻՎ ⇔ ***1.*** Շուտափույթ, գործուն: ***2.*** Ռազմական գործողություններին առնչվող:

ՕՊԵՐԱՏՈՐ ***1.*** ⇐ Որևէ բան նկարահանող մասնագետ: ***2.*** ⇒ Հեռախոսավար: ***3.*** Գործավար (գրասենյակում համակարգչային աշխատանք իրականացնող անձ):

ՕՊԵՐԱՑԻԱ ⇒ *1.* Վիրահատություն: *2.* Գործողություն: *3.* Գործարք:

ՕՊՈԶԻՑԻԱ *(քղքգ.)* ⇒ Ընդդիմություն:

ՕՊՈԶԻՑԻՈՆ ⇒ Ընդդիմադիր:

ՕՊՈՆԵՆՏ ⇒ Ընդդիմախոս:

ՕՊՏԱՑԻԱ *(իրավք.)* ⇒ Քաղընտրություն՝ քաղաքացիական ընտրություն:

ՕՊՏԻԿԱ ⇐ *1. (ֆիզ.)* Ֆիզիկայի բաժին: *2.* Օպտիկական սարքերի ամբողջություն:

ՕՊՏԻՄԱԼ ⇐ Լավագույն, ամենահարմար տարբերակ:

ՕՊՏԻՄԱԼԱՑՈՒՄ ⇔ Լավարկում՝ որևէ ոլորտում բարեփոխումների կենսագործում:

ՕՊՏԻՄԻԶՄ ⇒ Լավատեսություն:

ՕՊՏԻՄԻՍՏ ⇒ Լավատես:

ՕՍԹԵՈԼՈԳԻԱ *(բժշկ.)* ⇒ Ոսկրաբանություն:

ՕՍԹԵՈԽՈՆԴՐՈԶ *(բժշկ.)* ⇐ Ոսկրային բորբոքային հիվանդությունների խումբ:

ՕՍԹԵՈՊԱՏԻԱ *(բժշկ.)* ⇒ Ոսկրախտ:

ՕՏԻՄԿ ⇒ Առանձնատիպ:

ՕՏՈՖՈՆ ⇔ Լսասարք՝ լսողության ուժեղացուցիչ սարք:

ՕՐԱԿԱԼ ⇐ Թղթե կամ պլաստմասե կպչուն շերտ՝ գովազդային հայտարարությունների, ինչպես նաև տարբեր իրեր զարդարելու համար:

ՕՐԲԻՏԱ ⇔ Ուղեծիր:

ՕՐԳԱՆԱՅԶԵՐ *1.* ⇐ Փոքրիկ նոթատետր-գրքույկ՝ օրացույցով, հասցեներով: *2.* Բջջային հեռախոսի և համակարգչի մեջ մի բաժին, որում զետեղված են օրացույց՝ հիշեցման և զանազան գրառումների գործառույթներով, էլ. հաշվիչ, (կալկուլյատոր) ևն: *3.* ⇒ Կազմակերպիչ:

ՕՐԴԵՐ ⇐ Ընդունման կամ հանձնման գրավոր փաստաթուղթ (կարգադրագիր):

ՕՐԴԻՆԱՏՈՒՐԱ ⇐ Բժշկական պրակտիկ ասպիրանտուրա:

ՕՐԹՈԴՈՔՍ ⇐ *1.* Որևէ ուս-

մունքի, գաղափարախոսության անշեղորեն հետևող: ***2.*** Ուղղափառ:

ՕՐԹՈՊԵԴ ⇔ Բեկաբույժ:

ՕՐԹՈՊԵԴԻԱ ⇔ Բեկաբուժություն:

ՕՖԵՐԵՆՏ ⇒ Գործարկու:

ՕՖԵՐ(ՏԱ) *(տնտսգ.)* ⇔ Գրավոր առաջարկ (գործարկ):

ՕՖԻՍ ⇒ Գրասենյակ:

ՕՖՇՈՐ *(տնտսգ.)* ⇐ Արտոնյալ կամ չհարկվող կարգավիճակով գոտիներում ստեղծված ընկերություն:

— Ֆ —

ՖԱՅԼ ⇐ ***1.*** *(համակրգչ.)* Էլեկտրոնային թղթապանակ՝ որոշակի տվյալներով (գրատեղի, գրապանակ, նիշք): ***2.*** Թափանցիկ թղթապանակ:

ՖԱՆԱՏ ⇒ Մոլեռանդ երկրպագու:

ՖԱՆԱՏԻԶՄ ⇒ Մոլեռանդություն:

ՖԱՍԱԴ *(ճարտգ.)* ⇐ Շենքի կամ որևէ կառույցի ճակատ:

ՖԱՎՈՐԻՏ ⇐ ***1.*** *(մարզ.)* Մարզիկ, որին գերադասություն է տրվում մրցումների ժամանակ: ***2.*** Ղեկավարի կամ բարձրաստիճան մեկի բարեհաճությանն արժանացած անձ:

ՖԱՏԱԼԻԶՄ ⇔ Ճակատագրապաշտություն:

ՖԱՏԱԼԻՍՏ ⇔ Ճակատագրապաշտ:

ՖԱՐԻՆԳԻՏ *(բժշկ.)* ⇐ Ըմպանաբորբ:

ՖԱՐՄԱԿՈԼՈԳԻԱ *(բժշկ.)* ⇒ Դեղագիտություն:

ՖԱՐՇ ⇒ Խճողակ, լցոն:

ՖԱՐՍ ⇒ Զավեշտ, կեղծիք:

ՖԱՈՒՆԱ ⇔ Կենդանական աշխարհ:

ՖԱՔՍ ⇔ Հեռապատճեն:

ՖԵԴԵՐԱՑԻԱ ***1.*** *(քղքգ.)* ⇔ Դաշնություն: ***2.*** *(մարզ.)* ⇐ Որևէ մարզաձևի ներկա-

յացուցիչների և ակումբների միավորում:

ՖԵՄԻՆԻԶՄ *(քղթգ.)* ⇐ Կանանց իրավահավասարության ձգտող շարժումների անվանումը:

ՖԵՆ ⇔ Վարսահարդարիչ:

ՖԵՆՈՄԵՆ ⇐ *1.* Երևույթ: *2.* Բացառիկ օժտվածություն:

ՖԵՆՈՄԵՆԱԼ ⇒ Բացառիկ, արտասովոր, արտակարգ:

ՖԵՐՄԱ ⇒ Ագարակ:

ՖԵՐՄԵՆՏ ⇐ Օրգանական նյութ (խմորիչ):

ՖԵՐՄԵՐ ⇔ Ագարակատեր:

ՖԻԱՍԿՈ ⇒ Ձախողում:

ՖԻԳՈՒՐ(Ա) *1.* ⇒ Կերպար, կերպարանք: *2.* Կազմվածք: *3.* ⇐ Շախմատի քար:

ՖԻԳՈՒՐԻՍՏ ⇒ Գեղասահորդ:

ՖԻԶԻՈԼՈԳ ⇔ Բնախոս:

ՖԻԶԻՈԼՈԳԻԱ ⇔ Բնախոսություն:

ՖԻԹՆԵՍ ⇐ Մարզական վարժությունների համալիր:

ՖԻԼԱՏԵԼԻԱ ⇐ Նամականիշերի հավաքում:

ՖԻԼԱՏԵԼԻՍՏ ⇐ Նամականիշեր հավաքող (հավաքորդ):

ՖԻԼՄՄԵՅՔԵՐ ⇒ Կինոարտադրող:

ՖԻԼՏՐ ⇒ Զտիչ:

ՖԻԼՏՐԱՑԻԱ ⇒ Զտում, թորում:

ՖԻՆԱԼ ⇒ *1.* Ավարտ, վերջ: *2.* Եզրափակիչ:

ՖԻՆԱԼԻՍՏ ⇐ Եզրափակիչ փուլի մասնակից:

ՖԻՆԻՇ ⇒ Վերջնարկ:

ՖԻՍԿԱԼ *(տնտսգ.)* ⇔ Հարկաբյուջետային, հարկային:

ՖԻՐՄԱ ⇐ Արտադրատնտեսական միավորում (ձեռնարկություն):

ՖԻՔՍԱՑԻԱ ⇒ Ամրագրում, հաստատում:

ՖԻՔՍԻՆԳ *(տնտսգ.)* ⇒ Հաստատագրում:

ՖԼԵԲԻՏ ⇒ Երակաբորբ:

ՖԼԵՇ *(տեխ.)* ⇒ Կրիչ:

ՖԼԵՇՄՈԲ ⇐ Նախապես ծրագրված հանրային բազմամարդ միջոցառում (ակցիա):

ՖԼՅՈՒՈՐՈԳՐԱՖԻԱ *(բժշկ.)* ⇐ Ռենտգենյան հետազոտության մեթոդ:

ՖԼՈՄԱՍՏԵՐ ⇐ Ներկամատիտ, թաղքագրիչ:

ՖԼՈՐԱ ⇔ Բուսաշխարհ:

ՖՈԼԳԱ ⇒ Փայլաթիթեղ:

ՖՈԼԴԵՐ *(իմկրգչ.)* ⇒ Թղթապանակ:

ՖՈԿՈՒՍՆԻԿ ⇒ Աճպարար:

ՖՈՆ ⇔ *1.* Հետնագույն: *2.* Համապատկեր: *3.* Հետնանկար:

ՖՈՆԴ *1.* ⇒ Հիմնադրամ: *2.* ⇐ Վավերաթղթերի և աղբյուրների հավաքածու: *3.* Արվեստի, գիտության արժեքավոր գործերի ամբողջություն:

ՖՈՆԵՆԴՈՍԿՈՊ *(բժշկ.)* ⇒ Լսափող:

ՖՈՆՈԳՐԱՄԱ ⇔ Ձայնագիր, ձայնագրություն:

ՖՈՏՈ ⇔ *1.* Լուսանկար: *2.* Լուսանկարչատուն:

ՖՈՏՈԱՊԱՐԱՏ ⇔ Լուսախցիկ:

ՖՈՏՈՄՈՆՏԱԺ ⇐ Թեմատիկ լուսանկարների կամ դրանց մասերի մեկտեղում (լուսակցորդում):

ՖՈՐՄԱՏ ⇒ Չևաչափ:

ՖՈՐՄՈՒԼԱ ⇒ *1.* Բանաձև: *2.* *(քիմ.)* Քիմիական տարրի կառուցվածք:

ՖՈՐՈՒՄ ⇒ Համաժողով:

ՖՐԱԳՄԵՆՏԱՐ ⇒ Հատվածական, հատվածային:

ՖՐԱԿՑԻԱ *(քղքգ.)* ⇒ Կուսակցախումբ, խմբավորում:

ՖՐԱՆՉԱՅԶԻՆԳ *(տնտսգ.)* ⇐ Առանձնաշնորհ՝ համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվություն:

ՖՐԻՏՅՈՒՐՆԻՑԱ ⇒ Էլեկտրական տապակա:

ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ⇒ Հիմնարար, հիմնական:

ՖՈՒՆԿՑԻԱ *1.* *(մաթ.)* ⇐ Մաթեմատիկայի հիմնական հասկացություն, որը ցույց է տալիս մի փոփոխականի կախումը մյուսից: *2.* *(կենսբ., բժշկ.)* Մարմնի կենսագործունեության դրսևորում: *3.* ⇒ Գործառույթ:

ՖՈՒՆԿՑԻՈՆԱԼ ⇔ Գործառույթային:

ՖՈՒՏՈՒՐԻԶՄ ⇔ Ապագայապաշտություն:

ՖՈՒՏՈՒՐԻՍՏ ⇔ Ապագայապաշտ:

ՖՈՒՐՇԵՏ ⇐ Ընդունելություն/հյուրասիրություն, որի ժամանակ ներկաները սեղանից օգտվում են հոտնկայս:

3. ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

3.1. ՁԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

3.1.1. *ԳՈՅԱԿԱՆ ԱՆՈՒՆ. ԳՈՅԱԿԱՆԻ ԹԻՎԸ*

1. Գոյականի, ինչպես նաև գոյականաբար գործածված այլ բառերի հոգնակի թիվը կազմվում է՝ ուղիղ ձևին՝ եզակիին, ավելացնելով **-եր** կամ **-ներ** հոգնակերտ վերջավորությունը: Բացառություն են **մարդ** և **կին** բառերը, որոնց հոգնակին է՝ **մարդիկ, կանայք**:

2. Տիկին, պարոն, անձ բառերը, բացի կանոնավոր **տիկիններ, պարոններ** և **անձեր** ձևերից, կարող են հոգնակի դառնալ նաև **տիկնայք, պարոնայք, անձինք** անկանոն ձևերով:

3. Միավանկ բառերի (այդ թվում՝ փոխանուն ածականների) հոգնակին սովորաբար կազմվում է **-եր**, իսկ բազմավանկներինը՝ **-ներ** վերջավորությամբ՝ **տն-*եր*, պատ-*եր*, տարր-*եր*, նյարդ-*եր*, մեծ-*եր*, մարգարտաձաղիկ-*ներ*, դինոզավր-*ներ*, սիրամարգ-*ներ*, վարպետ-*ներ*, կարմիր-*ներ***:

4. Մի շարք միավանկ բառերի հոգնակին կազմվում է **-ներ** վերջավորությամբ (այս բառերը նախկինում վերջացել են **-ն** հնչյունով, որը պահպանվել է հոգնակիում՝ միանալով **-եր** վերջավորությանը)՝ **ակ-*ներ*, բեռ-*ներ*, գառ-*ներ***, ինչպես նաև խոսակցական **ձեռ-*ներ*, ոտ-*ներ***

*(***ձեռք***-****եր****,* **ոտք***-****եր*** գրական տարբերակներին զուգահեռ)։ Այս շարքի բառերը՝ որպես բաղադրյալ բառերի վերջնաբաղադրիչներ, նույնպես ստանում են **-ներ** վերջավորություն *(պարսպարոներ, սառցալեռներ, շնաձկներ, դաշտամկներ)։*

Բացառություն են **մատ** և **հարս** բառերը, որոնցով վերջացող բաղադրյալ բառերը կարող են ստանալ նաև **-եր** *(ցուցամատեր, բթամատեր, նորահարսեր, ջրահարսեր)։*

5. **Ռուս** բառի հոգնակին՝ **ռուս***-****ներ*** (նախկինում՝ **ուռուս***-****ներ****)։*

6. **Ող** և **ռունգ** բառերի՝ **ողներ, ռունգներ** ձևերն ակնհայտորեն հնացած են և անգործածական։ Դրանց փոխարեն այժմ ընդունել են **ողեր, ռունգեր** ձևերը։

7. «Խաղողի վազի ոստ» նշանակությամբ **մատ** բառի հոգնակին կազմվում է **-եր**-ով՝ *խաղողի* ***մատեր****։*

8. Գաղտնավանկով վերջացող մի շարք երկվանկ բառերի (այդ թվում՝ դերանունների, փոխանուն ածականների, ինչպես նաև **ը**-ով վերջացող թվականների) հոգնակին կազմվում է **-եր** վերջավորությամբ՝ **ազդր***-****եր****,* **աստղ***-****եր****,* **դուստր***-****եր****,* **եզր***-****եր****,* **զեբր***-****եր****,* **ժանր***-****եր****,* **մանր***-****եր****,* **ինքն***-****եր****,* **ինը(ն)***-****եր*** ևն։

9. Գամփռ, անգղ, արկղ բառերի հոգնակին կարող է կազմվել ոչ միայն **-եր**, այլև **-ներ** վերջավորությամբ՝ **գամփռ***-****(ն)եր****,* **անգղ***-****(ն)եր****,* **արկղ***-****(ն)եր****։***

10. Ստեղն, եղեգն, բևեկն պարզ բազմավանկ բառերը, ինչպես նաև **-ազն, -եղն, -ակն, -ոտն** երկվանկ վերջնաբաղադրիչով բարդ բառերը ստանում են **-եր** վեր-

ջավորությունը՝ **ստեղն**-***եր***, **եղեգն**-***եր***, **բևեկն**-***եր***, **արքայազն**-***եր***, **դյուցազն**-***եր***, **որմզդեղն**-***եր***, **շողակն**-***եր***, **հետիոտն**-***եր***, **այծոտն**-***եր*** են:

11. Միավանկ (ինչպես նաև գաղտնավանկով վերջացող երկվանկ) վերջնաբաղադրիչով բազմավանկ (բարդ, ածանցավոր կամ բարդածանցավոր) գոյականների մի մասի հոգնակին կազմվում է **-եր** վերջավորությամբ՝ **ձեռագր**-***եր***, **իրիկնապահ**-***եր***, **դեղատն**-***եր***, **դասագրք**-***եր***, **գաղթավայր**-***եր***, **գիսաստղ**-***եր***, **այտոսկր**-***եր***, **բուժքույր**-***եր***, **ծակուծուկ**-***եր***: Դրանք այն բառերն են, որոնցում այդ վերջնաբաղադրիչը՝ որպես գոյական, պահպանում է իր բուն իմաստը, իր նախորդ բաղադրիչին համադաս է *(սարուձորեր, հարցուփորձեր, չեմուչումեր, ապուպապեր, թերուդեմեր, նազուտուզեր)* կամ նրա լրացյալն է և նրա հետ միասին ցույց է տալիս այդ առարկայի կամ հասկացության տարատեսակը՝ ***գիր*** – *ձեռագիր, հեռագիր, լրագիր, ծրագիր, խորագիր, սնագիր, ճակատագիր,* ***պահ*** – *իրիկնապահ,* ***ցույց*** – *նստացույց, զորացույց* են: Սա նշանակում է, որ **ձեռագիրը, հեռագիրը, ծրագիրը** գրի տեսակներ են, **առանձնատունը, թոնրատունը, իջևանատունը** տան տեսակներ են, **միջակետը, ծայրակետը, ստորակետը** կետի տեսակներ են են: Այս բառերը մեծ մասամբ կարելի է արտահայտել բառակապակցությամբ, որի գերադաս անդամը (լրացյալը) հենց միավանկ վերջնաբաղադրիչն է, և բառակապակցությունը հոգնակի դարձնելիս **-եր** վերջավորությունն է ստանում հենց այդ բաղադրիչը՝ *խնդրագրքեր – խնդիրների գրքեր, ձեռագրեր – ձեռքի գրեր, նստացույցեր – նստած ցույցեր* են:

12. Այլ դեպքերում միավանկ վերջնաբաղադրիչով բառն ստանում է **-ներ** վերջավորությունը, ընդ որում՝ այդ վերջնաբաղադրիչը չի ենթարկվում հնչյունափոխության՝ **ակնարկագիր**-***ներ,*** **կենսագիր**-***ներ,*** **վիպագիր**-***ներ,*** **բառարանագիր**-***ներ*** են։ Պատճառն այն է, որ այս դեպքում բաղադրյալ բառը իր միավանկ վերջնաբաղադրիչի նշանակած երևույթի տարատեսակ ցույց չի տալիս, օր.՝ **հաշվապահ** նշանակում է ոչ թե «հաշվի պահ», այլ «հաշիվ պահող (անձ)», **կարմրախայտ** նշանակում է ոչ թե «կարմիր խայտ», այլ «կարմիր խայտեր ունեցող (ձուկ)», **քղանցք** այժմ նշանակում է ոչ թե «քուղի անցք», այլ «հագուստի փեշ», **լուսանցք** նշանակում է ոչ թե «լույսի անցք», այլ «էջեզրի ազատ տարածություն», **համերգ** նշանակում է ոչ թե «ընդհանուր երգ», այլ «երգի հանդես», **տեսակետ** այժմ նշանակում է ոչ թե «տեսնելու կետ, դիտակետ», այլ «կարծիք, հայացք, մոտեցում», **վերջալույս** նշանակում է «արևը մայր մտնելու ժամանակը», այլ ոչ թե «վերջին լույս» են։ Այսինքն՝ այս դեպքերում միավանկ բառը բաղադրյալ բառի կազմում իր գոյականական բուն իմաստով չէ, որ հանդես է գալիս, այլ մի նոր, մեծ մասամբ՝ բայական, երբեմն էլ՝ փոխաբերական իմաստով։

Հիմնականում այդպես է նաև գոյականական կամ բայական միավանկ վերջնաբաղադրիչով փոխանուն ածականների դեպքում։ Օր.՝ **լայնեզրներ** նշանակում է «լայնեզրով գլխարկներ» (այլ ոչ թե «լայն եզրեր»), **շատակերներ** նշանակում է «շատ ուտող մարդիկ» (այլ ոչ թե «շատ կերեր»), **շեղաչքներ**՝ «շեղ աչք ունեցողներ» (այլ ոչ թե «շեղ աչքեր»)։

13. Կան միավանկ վերջնաբաղադրիչով բառեր, որոնք շեղվում են կանոնից *(վերելքներ, մանրէներ, միրհավներ)* կամ ունեն երկձևություն՝ **երկրաշարժ**-*(ն)եր*, **կայազոր**-*(ն)եր*, **ջրանցք**-*(ն)եր* ևն, ինչպես նաև -**պետ** կամ -**նիշ** գոյական վերջնաբաղադրիչով բառերը՝ **խմբապետ**-*(ն)եր*, **մարզպետ**-*(ն)եր*, **քաղաքապետ**-*(ն)եր*, **չափանիշ**-*(ն)եր*, **դրամանիշ**-*(ն)եր*, **նամականիշ**-*(ն)եր* (տե՛ս նաև 4-րդ կետի վերապահումը -**հարս** և -**մատ** վերջնաբաղադրիչով բառերի համար)։

14. Երկձևություն չկա -**նիշ** վերջնաբաղադրիչով այն բառերի դեպքում, որոնք ածական են *(միանիշ, երկնիշ, բազմանիշ, տարանիշ)* կամ գոյական են դարձել փոխանվանական կիրառությունների հիման վրա *(հոմանիշ, համանիշ, նույնանիշ, հականիշ, ժխտանիշ)*, և դրանցում -**նիշ**-ը ունի բայական իմաստ։ Դրանք պարտադիր ստանում են -**ներ** հոգնակերտ՝ *հոմանիշներ, հականիշներ* ևն։ Մինչդեռ **նիշի** (նշանի) տարատեսակ ցույց տվող գոյականները *(աստղանիշ, ախտանիշ, գրանիշ, դրոշմանիշ, էջանիշ, խորհրդանիշ, համարանիշ, հայտանիշ, հատկանիշ, ձայնանիշ, մակնիշ, մրրցանիշ, նամականիշ, չափանիշ, պարբերանիշ, ջրանիշ, վարկանիշ, ցուցանիշ, ուղենիշ, փոստանիշ)*, կանոնի համաձայն, պետք է ստանան -**եր** հոգնակերտ *(հայտանիշեր, աստղանիշեր, համարանիշեր, մակնիշեր* ևն), սակայն սխալ ձևերի խիստ տարածվածության պատճառով թույլատրվում է զուգաձևություն։

15. Կան միավանկ վերջնաբաղադրիչով համանուններ, որոնցից մեկի հոգնակին կազմվում է -**եր**, մյուսինը՝ -**ներ** վերջավորությամբ՝ պայմանավորված իմաս-

տով: Օր.՝ **մատենագր**-*եր «ձեռագիր մատյաններ, գրքեր»* – **մատենագիր**-*ներ «մատյան գրող հեղինակներ»*, **հուշագր**-*եր «մեմորանդումներ»* – **հուշագիր**-*ներ* ևն:

16. Լինում են և հոգնակիի ձևերի՝ հիմքի տարբերության հետևանքով առաջացած հարաններ, օր.՝ **մանրամասն**-*եր* «մանրամասնություններ» և **մանրամաս**-*եր* «մանրակներ, դետալներ», **լեռնապար**-*եր* «լեռնաշղթա» և **լեռնապար**-*ներ* «լեռնային ապար»:

17. -**եր** վերջավորություն ստացող բառերը (ինչպես նաև հոգնակի թիվ չունեցող անորոշ դերբայը) -**ներ** կարող են ստանալ ստացական հոգնակի կազմելիս՝ *աչքներս, տուններդ, վիզները, սանրներդ, բանուգործներս, գնալներդ:* Այդպես լինում է, երբ հողը փոխարինում է ստացական դերանվան հոգնակիին *(մեր աչքը>աչքներս, ձեր տները>տուններդ, նրանց շուրջը>շուրջները, ձեր գնալը>գնալներդ)*՝ նշանակելով, որ տվյալ առարկան (կամ առարկաները), տվյալ տեղը վերաբերում են յուրաքանչյուրին:

18. Մի շարք օտար բառեր՝ **բրենդ, բլանկ, ֆրակ, ստենդ, սպոր, սլայդ** ևն, որոնք փոխատու լեզվում միավանկ են, արդի հայերենում ընկալվում են որպես երկվանկ բառեր (ունեն **ը** գաղտնավանկ՝ *բը-րենդ, բը-լանկ, ֆը-րակ ևն*): Հետևաբար սրանց հոգնակին կազմվում է -**ներ** վերջավորությամբ՝ **բրենդ**-***ներ,*** **բլանկ**-***ներ,*** **ֆրակ**-***ներ,*** **ստենդ**-***ներ,*** **սպոր**-***ներ,*** **սլայդ**-***ներ:***

Նույն սկզբունքով՝ փոխատու լեզվում բաղադրյալ կազմությամբ (նաև արմատական վերջնաբաղադրիչով) բառերը (**բլոգեր**, **դինոզավր, կոմինդր, կադաստր, սի-**

ռամարգ են) հայերենում գիտակցվում են կազմությամբ պարզ բառեր, ուստի դրանց հոգնակին, կանոնի համաձայն, ձևավորվում է հայերենի բազմավանկ գոյականների նման՝ **-ներ** մասնիկով, ինչպես՝ **բլոգեր-ներ, կոմինդր-ներ, կադաստր-ներ**, **սիրամարգ-ներ, դինոզավր-ներ** են: Ըստ որում, **-զավր** և **-մարգ** վերջնաբաղադրիչներով կազմություններում այդ արմատական բաղադրիչների իմաստները միայն ստուգաբանորեն են գիտակցվում (**զավր** – մողես, **մարգ** – թռչուն), և դրանց՝ **-եր**-ով կազմությունները, բնականաբար, կանոնական չեն: Սակայն, հաշվի առնելով **-եր**-ով ձևերի տարածվածությունը, ուղեցույցի հեղինակները հնարավոր են համարել նաև դրանց գործածությունը՝ իհարկե նախապատվությունը տալով կանոնական **-ներ**-ով ձևերին, այսպես՝ **դինոզավր+ներ//+եր, իխտիոզավր+ներ//+եր, լորամարգ+ներ//+եր, սիրամարգ+ներ//+եր** են:

19. Հրապարակի վրա եղած բառարանների տվյալներով արձանագրվում է հոգնակիի կազմության ամրագրման որոշակի միտում. գոյականական միևնույն միավանկ վերջնաբաղադրիչով կազմություններում **-ներ** մասնիկով (հազվադեպ նաև **-եր**) հոգնակի է հանձնարարվում այն բառերում, որոնցում մթագնած է կամ թույլ է գիտակցվում ոչ միայն վերջին, այլև առաջին/նախորդող բաղադրիչի սկզբնատիպ իմաստը: Օրինակ՝ **արշա+լույս** բառի համար հանձնարարվում է **-ներ**-ով (մեկ դեպքում՝ **-եր//-ներ**), իսկ **վերջա+լույս**-ի համար՝ **-եր**-ով (մեկ դեպքում՝ **-ներ**) կազմությունը: Նմանապես՝ **կայազոր-ներ,** բայց՝ **թիկնազոր-եր, միջնապատ-եր,** բայց՝ **ցանկապատ-ներ, վարդատոն-եր,**

բայց՝ **փառատոն-եր//-ներ, ցուցանիշ-ներ,** բայց՝ **համարանիշ-եր//-ներ, վերջակետ-եր,** բայց՝ **ստորակետ-եր//-ներ** ևն: Այսպիսի դեպքերում մենք առավելապես հակված ենք եղել հանձնարարելի համարելու առավել տարածված ձևը՝ հիմնականում չբացառելով մյուս տարբերակի կիրառությունը: Իսկ բառարանային տարբերությունները նպատակահարմար ենք գտել ներկայացնել աղյուսակով (տե՛ս էջ 162-164):

ԲԱՌԱՑԱՆԿ

Ցանկում տրված են այն գոյականների (նաև փոխանունների) հոգնակիի ձևերը, որոնք ունեն գործածության հաճախականություն և թվակազմության յուրահատկություններ. ունեն զուգաձևություններ կամ շեղվում են ընդհանուր օրինաչափություններից: Զուգաձևություններից առաջինները նախընտրելի կամ հանձնարարվող տարբերակներ են:

*Հասկանալի է, որ բառացանկը ամբողջական չէ, բայց դա գործնականում չի դժվարացնում անհրաժեշտ տարբերակի ընտրությունը, քանի որ հնարավոր բոլոր շեղումներից համապատասխան բառերով կամ բառախմբերով տրվում են տիպական օրինակներ: Օր.՝ **-անցք** վերջնաբաղադրիչով կազմություններից տրվում են և՛ միայն **-եր** մասնիկով (հորատանցք-եր, ծխանցք-եր, դիտանցք-եր), և՛ միայն **-ներ**-ով (առանցք-ներ, քղանցք-ներ, միջանցք-ներ), և՛ միաժամանակ **-եր** և **-ներ** մասնիկներով օրինակներ (ջրանցք-ներ//-եր, լեռնանցք-ներ//-եր, օդանցք-ներ//-եր): Կամ՝ «Հայոց*

լեզվի հանգաբառարան»-ում արձանագրված են ***-չափ*** *վերջնաբաղադրիչով կազմված հինգ տասնյակից ավելի բառեր. դրանք հոգնակին բաղադրում են երկու տարբերակով՝* ***-եր****-ով կամ* ***-ներ****-ով. եթե բաղադրիչն ունի գոյականական իմաստ (չափ), ապա ստանում է* ***-եր*** *(թզաչափ-եր, քայլաչափ-եր, մազաչափ-եր են), եթե ունի բայական իմաստ (չափող), ստանում է* ***-ներ*** *(հողաչափ-ներ, արագաչափ-ներ, ջերմաչափ-ներ, ծանրաչափ-ներ, վայրկենաչափ-ներ են): Այդ հինգ տասնյակից մեր բառացանկում զետեղված են մոտ մեկ տասնյակը՝ ամենից գործածականները՝ կազմության երկու տարբերակներով:*

*Բառացանկում ներառված առանձին բառերի հոգնակիի կազմության ձևը սկզբունքային տարաձայնություններ չի ենթադրում և, թվում է, տեղ չպետք է ունենար այս բառացանկում: Սակայն բառաձևը ուղեցույցում զետեղվել է որոշակի պատճառաբանվածությամբ: Անհրաժեշտություն կար խուսափելու նախ՝ գրավոր խոսքում այնուամենայնիվ հանդիպող առանձին սխալակազմություններից (****գաղթավայրներ, թաղամաս-ներ, շտաբ-եր*** *են), և երկրորդ՝ արևելահայ խոսակցական լեզվում և գրական արևմտահայերենում տարածված որոշ ձևերի անհարկի ազդեցություններից, ինչպես՝*

արևմտահայերենում՝ ***հացադուլ-եր, գործադուլ-եր, ձեռագործ-եր, ասեղնագործ-եր, կարգախոս-եր, հեռախոս-եր, մեներգ-ներ, քայլերգ-ներ, օրհներգ-ներ, զետափ-ներ, լճափներ, ծովափ-ներ,*** *բայց՝* ***հողագործ-ներ, բարեգործ-ներ, բարձրախոս-ներ, բանախոս-ներ*** *են,*

արևելահայերենում՝ ***հացադուլ-ներ, գործադուլ-ներ, ձեռագործ-ներ, ասեղնագործ-ներ, կարգախոս-ներ, հեռախոս-***

ներ, մեներգ-եր, քայլերգ-եր, օրհներգ-եր, գետափ-եր, ծովափ-եր, լճափ-եր, *ինչպես նաև՝* ***հողագործ-ներ, բարեգործ-ներ, բարձրախոս-ներ, բանախոս-ներ*** *են: Սրանք բառացանկում տրվում են՝ հնարավոր շփոթից խուսափելու համար:*

Օգտագործողը հավելյալ տեղեկություններ կարող է քաղել ներածական մասում տրված բացատրություններից (էջ 143-150):

Աստղանիշով տրվում են այն կազմությունները, որոնք գործածության մեջ եղած բառացանկերում կամ բառարաններում ներկայացված են որպես զուգաձևություններ, սակայն մեր ուսումնասիրություններով (ժամանակակից գրականության և լրատվության միջոցների լեզվական նյութի քննություն, վիճակագրական հարցումներ, «Արևակ»-ից քաղված տեղեկություններ են) գրական լեզվում հանձնարարելի տարբերակներ չեն:

Մխալակազմությունները չեն նշվում:

ազդ–եր
ազդազանգ–եր
ազդալույս–եր
ազդոսկր–եր
ազդր–եր
ախտանիշ–ներ
ականանետ–ներ
ականատես–ներ
ակնարկագիր–ներ
ակնթարթ–ներ//–եր
ահազանգ–եր
ամենամեծ–եր
ամենափոքր–եր
այծենակաճ–ներ//–եր
այտոսկր–եր
անգդ–եր//–ներ
անդրադարձ–ներ
անկյունադարձ–եր

անկյունաչափ–ներ (չափող գործիք)
անկյունաչափ–եր (անկյունի չափը)
անջրպետ–ներ
անցաբառ–եր
անցուդարձ–եր
աշխարհազոր–եր
ապուպապ–եր
առանձնատն–եր
առանցք–ներ
աստղակերպ–ներ
աստղանիշ–ներ//–եր
աստղ–եր
ավանդապահ–ներ
ատամնաշար–եր
ատենախոս–ներ
ատենապետ–ներ//–եր
արագաչափ–ներ
արկղ–եր//–ներ
արշալույս–ներ//–եր*
արոտավայր–եր
արտագաղթ–եր
արքայադուստր–եր
արքայազն–եր
արևամուտ–ներ
բազմակետ–եր
բազմանիշ–ներ
բաղաձայն–ներ
բառարանագիր–ներ
բարեգործ–ներ
բարձր–եր
բարձրախոս–ներ
բթամատ–եր//–ներ*
բժշկապետ–ներ
բլանկ–ներ
բնակավայր–եր
բրենդ–ներ
բու–եր//բվեր
բուժկետ–ներ//–եր
բուժքույր–եր
բուռ–եր//բռեր
բևեկն–եր
գազանորս–ներ
գաղթավայր–եր
գաղտնաբառ–եր
գամփռ–եր//–ներ
գանգոսկր–եր
գանձապետ–ներ
գարեհատ–եր
գարնանամուտ–ներ
գետափ–եր
գետեզր–եր
գիշանգղ–եր
գիշերապահ–եր (գիշերային պահ)
գիշերապահ–ներ (գիշերային պահակ)
գիսաստղ–եր
գլխաբառ–եր

գլխագին–գներ//–ներ*
գլխակապ–եր
գյուղապետ–ներ//–եր
գովազդ–ներ//–եր
գորգագործ–ներ
գործադուլ–ներ
գրագող–եր
գրախոս–ներ
գրանիշ–ներ
գրաշար–եր (գրի շար)
գրաշար–ներ (գիր շարող)
գրպանահատ–ներ
դաշտավայր–եր
դասագիրք–գրքեր
դասադուլ–ներ
դասանիշ–ներ
դասապահ–եր
դարավանդ–ներ
դարձակետ–եր
դեղատն–եր
դերբայ–ներ
դինոզավր-ներ//-եր*
դիպաշար–եր
դիտակետ–եր
դիտանցք–եր
դյուցազն–եր
դուստր–եր
դրամահատ–ներ
դրամանենգ–ներ
դրամանիշ–ներ//–եր
դրամատուն–տներ
դրոշմանիշ–ներ//–եր
եզր–եր
ելակետ–եր
ելումուտ–ներ
ելևէջ–ներ
եկամուտ–ներ
եղեգն–եր
եղերերգ–եր
ենթակետ–եր
ենթամաս–եր
ենթաշերտ–եր
երկնիշ–ներ
երկտող–եր (երկու տող)
երկտող–ներ (նամակ, գրություն)
երկրաշարժ–ներ//–եր
զեբր–եր
զինադուլ–ներ
զորամաս–եր
զորաշարժ–եր
զորապետ–ներ
զորացույց–եր
զուգերգ–եր
էջանիշ–ներ
էջաչափ–ներ (չափող սարք)
էջաչափ–եր (էջի չափս)
էջկապ–ներ//–եր
ընձուղտ–ներ
թաղամաս–եր

թերուդեմ–եր
թզաչափ–եր
թթվասեր–եր (թթվամշակ-
ված սերուցքներ)
թթվասեր–ներ (թթու սիրող-
ներ)
թիզ–եր
թիկնազոր–ներ//–եր
թիմ–եր
թոնրատուն–տներ
թվացույց–ներ
թրենդ–ներ
թուխպ–եր
թևկապ–ներ//–եր
ժամանակացույց–ներ
ժամանց–ներ
ժամատուն–տներ
ժամացույց–ներ
ժամկետ–ներ
ժանր–եր
ժխտանիշ–ներ
ինը/ինն–եր
ինքնագովազդ–ներ//–եր
ինքնաշարժ–ներ
իշխանադուստր–եր
իջևանատուն–տներ
իրիկնալույս–եր//–ներ
իրիկնապահ–եր
լեռնանցք–ներ//–եր
լիազոր–ներ
լինդ–եր//լնդեր
լիտր–եր
լճափ–եր
լողափ–եր//–ներ
լրագիր–գրեր
լրտես–ներ
լուսազդ–ներ//–եր
լուսանցք–ներ
խաչբառ–ներ//–եր
խիճ–եր
խլահավ–եր
խմբապետ–ներ//–եր
խմբերգ–եր
խնդրագիրք–գրքեր
խոտհարք–ներ
խորագիր–գրեր
խորհրդանիշ–ներ
խունկ–եր
ծակուծուկ–եր
ծաղկաքաղ–եր
ծայրակետ–եր
ծանր–եր
ծառ–եր
ծիլ–եր
ծխախոտ–եր//–ներ
ծխամորճ–ներ//–եր
ծխանցք–եր
ծնկակապ–եր
ծովահարս–եր
ծովափ–եր

ծովեզր–եր
ծունկ–ծնկներ
ծրագր–եր
կադաստր–ներ
կադր–եր
կաթնասունկ–սնկեր//–սունկեր
կայազոր–եր//–ներ
կայարանապետ–ներ//–եր
կայսր–եր
կարգախոս–ներ
կարծր–եր
կարմրախայտ–ներ
կարճատես–ներ
կենսագիր–ներ
կետորս–ներ//–եր*
կարգապահ–ներ
կենդանակերպ–ներ
կիզակետ–եր
կիսաքաղցր–եր
կղմինդր-ներ
կողմնացույց–ներ
կոճականցք–եր
կոճղ–եր
կրակակետ–եր
կրոնափոխ–ներ
հակագազ–եր
հականիշ–ներ
հակացույց–եր
հաղորդաշար–եր
համազոր–ներ
համայց–եր
համանիշ–ներ
համարանիշ–ներ//–եր
համերգ–ներ
համտես–ներ/
համր–եր
հայեցակետ–եր//–ներ
հայտանիշ–ներ//–եր
հայրապետ–ներ
հայրենադարձ–ներ
հանդիսատես–ներ
հանցանիշ–ներ
հանքաշերտ–եր
հանքափոր–ներ
հաշվապահ–ներ
հաշվենիշ–եր
հասկաքաղ–եր
հատկանիշ–ներ
հարացույց–ներ
հարթաչափ–ներ
հարկահան–ներ
հարցուփորձ–եր
հարս–ներ
հարցաշար–եր
հացադուլ–ներ
հացատուն–տներ
հեծելազոր–եր//–ներ
հեռագիր–գրեր
հեռախոս–ներ

հեռուստագովազդ–ներ//–եր
հեռուստացույց–ներ
հետիոտն–եր
հետևակազոր–եր//–ներ
հերթապահ–ներ
հերթափոխ–եր
հիվանդատես–ներ
հյուս–եր (մազ, գիսակ)
հյուսն–եր (ատաղձագործ)
հոդվածաշար–եր
հողագործ–ներ
հողամաս–եր
հողաչափ–եր (հողի չափ)
հողաչափ–ներ (հողը չափող)
հողմաչափ–ներ
հողմացույց–ներ
հոմանիշ–ներ
հորատանցք–եր
հորաքույր–եր
հուշագիր–ներ (հուշ գրող հեղինակներ)
հուշագիր–գրեր (մեմորանդումներ)
ձայնանիշ–ներ//–եր
ձայնաշար–եր
ձեռագիր–գրեր
ձեռնակապ–եր
ձկնորս–ներ
ձմեռնամուտ–ներ
ձևաչափ–եր
ճակատագիր–գրեր
ճամփեզր–եր
ճարտարապետ–ներ
ճյուղ–եր
ճութ–եր
մակակետ–եր
մակբայ–ներ
մակնիշ–ներ//–եր
մահազդ–ներ//–եր
մայրամուտ–ներ
մանրամաս–եր (մանրակներ, դետալներ)
մանրամասն–ներ (մանրամասնություններ)
մանր–եր
մանրէ–ներ
մավր–եր
մատ–եր (խաղողի վազի ոստ)
մատ–ներ (ձեռքի և ոտքի վերջույթ)
մատանեմատ–եր//–ներ*
մատենագիր–ներ (մատյան գրող հեղինակներ)
մատենագիր–գրեր (ձեռագիր մատյաններ, գրքեր)
մատենաշար–եր
մատնաչափ–եր
մարգարտահատ–եր

մարդպետ–ներ
մարզատոն–եր
մարզպետ–ներ//–եր
մեծամեծ–եր
մեծատուն–ներ
մեկնակետ–եր
մեղր–եր
մեներգ–եր
մետր–եր
միանիշ–ներ
միջակետ–եր
միջանցք–ներ
միջնակետ–եր
միջնամատ–եր//–ներ*
միջնորմ–ներ//–եր
միրհավ–ներ
մոլախոտ–եր
մոշահավ–եր
մորաքույր–եր
մրրկահավ–եր
մրցանիշ–եր//–ներ
մրցաշար–եր
մրցատոն–եր
նազուտուզ–եր
նահապետ–ներ
նամականիշ–ներ//–եր
նավախել–ներ//–եր
նավապետ–ներ//–եր*
նեգր–եր
ներգաղթ–եր
նշանակետ–եր
նշանացույց–ներ
նորահարս–եր//–ներ*
նորամուտ–ներ
նոութբուք–ներ
նպատակակետ–եր
նռնականետ–ներ
նռնահատ–եր
նստացույց–եր
նրբանցք–ներ
նույնանիշ–ներ
նուշ–եր
շաղկապ–ներ
շողակն–եր
շուրթ–եր
շրջադարձ–եր
շրջայց–եր
շքերթ–եր//–ներ*
ող–եր//–ներ*
ոսկր–եր
ոստիկանապետ–ներ//–եր*
ոտնաձայն–եր
ոտնաչափ–եր
որականիշ–ներ
որմ–եր
որոշ–ներ
չափանիշ–ներ//–եր
չիր–չրեր
չվերթ–ներ//–եր
պահակազոր–ներ//–եր*

պահեստամաս–եր
պատառաքաղ–ներ
պատժաչափ–եր
պատշար–ներ
պարագիծ–գծեր
պարբերանիշ–ներ//–եր
պարոն–ներ//–այք
ջերմաչափ–ներ
ջրահարս–ներ//–եր
ջրանիշ–ներ//–եր
ջրանցք–ներ//–եր
ջրաչափ–ներ
ջրհոր–եր
ռազմերթ–եր
ռումբ–եր
ռունգ–եր//–ներ*
ռուս–ներ
սակավապետ–ներ
սանր–եր
սառցահատ–եր (սառույցի հատիկներ)
սառցահատ–ներ (սառույց հատող նավեր)
սառցաշիթ–եր
սարդոստայն–ներ
սարուձոր–եր
սգերթ–եր
սեղանապետ–ներ
սիզախոտ–եր
սիմինդր–ներ
սիրամարգ–ներ//–եր*
սիրերգ–եր
սլայդ–ներ
սկեսրայր–ներ//–եր
սյունաշար–եր
սողանցք–ներ//–եր
սպարապետ–ներ
սպոր–ներ
ստեղնաշար–եր
ստենդ–ներ
ստեղն–եր
ստեղնաշար–եր
ստորակետ–եր//–ներ
ստուգայց–եր
ստուգատես–ներ
սրբավայր–եր
սրտաբաց–ներ
սրտագիր–գրեր (սրտագրության նշումներ)
սրտագիր–ներ (սրտագիր կատարող սարքեր)
սունկ–եր
սուտ–ստեր//–եր*
սուրճ–եր
սևագիր-գրեր
վագր–եր
վազանց–ներ
վաճառակետ–եր
վայրկենաչափ–ներ
վայրէջք–ներ

վաչկատուն–ներ
վարդապետ–ներ
վարդատոն–եր
վարժապետ–ներ
վարկանիշ–ներ
վարձերթ–եր
վարպետ–ներ
վեհապետ–ներ
վերադարձ–ներ
վերելք–ներ
վերնատուն–տներ
վերջալույս–ներ//–եր*
վերջակետ–եր
վիզ–վզեր
վիթ–եր
վիհ–եր
վիպագիր–ներ
վիպերգ–եր
վզկապ–ներ
վիրակապ–եր
վրաերթ–եր
տասնապետ–ներ
տարանիշ–ներ
տարեգիր–ներ
տարեդարձ–ներ//–եր*
տարելից–ներ
տարեմուտ–ներ
տեգր–եր
տեղաշարժ–եր
տեսակետ–ներ
տետր–եր
տիզ–եր
տիկ–եր
տիպ–եր
տիրանոզավր–ներ//–եր*
տոհմանիշ–ներ
տողադարձ–եր
տոնացույց–ներ
ցածր–եր
ցորենահաց–եր
ցանկապատ–ներ//–եր*
ցուլ–եր//ցլեր
ցուցամատ–եր//–ներ*
ցուցանիշ–ներ
ուժաչափ–ներ
ուլունքաշար–եր (ուլունքի շարաններ)
ուլունքաշար–ներ (ուլունք շարողներ)
ուղեծիր–ծրեր//–ներ
ուղենիշ–ներ//–եր
ուղերթ–եր//–ներ
ուղեցույց–ներ
ուսուցչապետ–ներ//–եր
ուստր–եր
փակագիծ–գծեր
փայտահատ–ներ
փառատոն–եր//–ներ
փլատակ–ներ
փղոսկր–եր

փոխգնդապետ–ներ
փողկապ–ներ
փոստանիշ–ներ
փոքր–եր
փրկագին–եր//–ներ*
քաղաքապետ–ներ//–եր
քաղմաս–ներ//–եր
քաղցր–եր
քայլաչափ–եր (քայլի չափը)
քայլաչափ–ներ (չափող գործիք)
քայլափոխ–եր
քայլերգ–եր
քառատող–եր (չորսական տողեր)
քառատող–ներ (չորս մասի բաժանողներ)
քարայծ–եր
քարայր–եր
քարափ–ներ
քարաքոս–եր//–ներ
քթանցք–եր
քղանցք–ներ
քուրմ–եր//–քրմեր
օդանցք–ներ//–եր
օրացույց–ներ
օրհներգ–եր
ֆիդայի–ներ
ֆրակ–ներ

Աղյուսակ

	Ս.	Գ.	Ա.	Մ.	Բ.
արշալույս	ներ	ներ	ներ	եր//ներ	—
ազդալույս	—	եր	եր	—	—
վերջալույս	եր	ներ	եր	եր	—
բթամատ	—	եր//ներ	եր	—	—
մատանեմատ	ներ	եր//ներ	ներ	ներ	—
միջնամատ	—	եր	—	—	—
ցուցամատ	եր	եր//ներ	եր	եր	եր
փրկագին	գներ	գներ//ներ	գներ	—	գներ
գլխագին	գներ	գներ//ներ	—	—	—

գով*ազդ*	եր	ներ	եր	ներ	—
դինո*զավր*	—	եր	—	եր	—
տիրանո*զավր*	—	եր	—	—	—
երկրա*շարժ*	եր	եր	եր	եր	եր
երկ*տող*	եր	եր//ներ	—	—	—
թիկնա*զոր*	եր	ներ	եր	եր	—
կայա*զոր*	ներ	ներ	—	ներ	—
պահակա*զոր*	եր	ներ	եր	ներ	—
համա*զոր*	—	—	—	—	—
կետ*որս*	եր, -ություն	ներ	—	ներ	—
միջն*որմ*	եր	ներ	եր	եր//ներ	եր
նորա*հարս*	—	եր	—	եր	—
ջրա*հարս*	եր (դից.) ներ (բսբ.)	եր	ներ//եր	եր	—
շք*երթ*	եր	ներ	եր	եր	—
ուղ*երթ*	եր	ներ	եր	եր	—
չվ*երթ*	եր	եր//ներ	եր	եր	—
վարձ*երթ*	—	—	—	—	—
ող	եր	եր	ներ	եր	—
ուտիկանա*պետ*	եր	ներ	եր	ներ	եր
պարբերա*նիշ*	—	—	—	—	—
ռունգ	եր	եր	—	եր	ներ
սիրա*մարգ*	եր	եր	եր	եր	եր
վերջա*կետ*	եր	եր	եր	—	եր
ստորա*կետ*	եր	եր//ներ	եր	եր	եր
միջա*կետ*	եր	եր	եր	եր	եր
բազմա*կետ*	եր	եր	եր	եր	—
դարձա*կետ*	եր	եր	եր	—	—

փառա*տոն*	եր	եր//ներ	եր	եր	եր
դիպա*շար*	—	եր	—	—	—
ներ*գաղթ*	եր	—	եր	—	—
ձևա*չափ*	եր	եր	—	—	—
հասկա*քաղ*	եր	—	—	—	—
ծաղկա*քաղ*	եր	—	եր	—	—
ինքնա*շարժ*	ներ	ներ	—	ներ	—
գետ*ափ*	եր	եր	եր	—	—
հերթա*փոխ*	—	եր	եր	եր	—
ծխա*խոտ*	եր	ներ	եր	ներ	—
տարե*դարձ*	եր	եր	եր	ներ//եր	—
հայրենա*դարձ*	—	ներ	—	ներ	—
անդրա*դարձ*	—	ներ	—	—	—
անցու*դարձ*	—	եր	եր	—	—
վերա*դարձ*	եր	ներ	—	—	—
տողա*դարձ*	եր	եր	եր	ներ//եր	եր
համ*տես*	ներ	ներ	—	—	—
հեռա*տես*	ներ	ներ	—	ներ	—
հիվանդա*տես*	եր	ներ	եր	ներ	—
կարճա*տես*	—	—	—	—	—
գործա*դուլ*	ներ	ներ	—	—	—
դասա*դուլ*	ներ	—	ներ	—	—
գլխա*կապ*	եր	եր	եր	—	—

3.1.2. *ԳՈՅԱԿԱՆԻ ՈՐՈՇՅԱԼ ԵՎ ԱՆՈՐՈՇ ԱՌՈՒՄՆԵՐ*

1. Գոյականի որոշյալ առումը կազմվում է՝ անորոշ (անհոդ) ձևին (եզակի կամ հոգնակի թվով, ուղղական կամ սեռական–տրական հոլովով) ավելացնելով **-ը** կամ **-ն** վերջամասնիկը: Բացառություն է **Աստված** (նաև **Քրիստոս**) բառը, որը եզակի ուղղականում առանց վերջամասնիկի էլ ունի որոշյալ առման նշանակություն՝ ***Աստված*** *ձեզ պահապան:*

2. Հոգնակիում որոշիչ հոդ չեն ստանում **մարդիկ, կանայք, տիկնայք, պարոնայք, անձինք** բառերի, **-անք, -ենք, -ոնք, -ունք** ածանցներով անձնանիշ բառերի (Վարդանանք, Սուրենենք, պապոնք, Թելունք) ուղղականն ու սեռական–տրականը:

3. Բաղաձայնով վերջացող բառերը **-ը** հոդ են ստանում բաղաձայնով (այդ թվում՝ **ե[յէ]**-ով և **ո[վօ]**-ով) սկսվող բառերից առաջ՝ *գործը կարձվեց, լուսինը երևաց, հրանոթները որոտացին:*

4. Ը հոդը ձայնավորով (ինչպես նաև **սկ, ստ, սպ, սթ, սք, սփ, զգ, զդ, զբ** տառակապակցություններով) սկսվող բառերից առաջ կարող է փոխարինվել **ն** հոդով՝ *նախագահը ընդունեց//նախագահ**ն** ընդունեց, Արամը ասաց//Արամ**ն** ասաց, գիրքը ընկավ//գիրք**ն** ընկավ, դասը սկսվեց//դաս**ն** սկսվեց:* Այս փոխարինումը սովորաբար չի կատարվում այն դեպքում, երբ բանավոր խոսքում հոդ ստացած բառից հետո դադար է լինում (հատկապես թվարկման ժամանակ), որը գրավոր խոսքում արտահայտվում է ստորակետով, բութով կամ

տրոհության այլ նշանով՝ *Կարենը, Արամը և ես կգանք քեզ հետ: Մեր գործընկերը՝ Վահանը, ավարտեց ելույթը:*

5. Բաղաձայնով վերջացող բառերը օժանդակ բայից և **էլ** (նաև **ու**) շաղկապից առաջ միայն **-ն** հոդ են ստանում՝ *Գործն է կարևորը: Այդ հարցն էլ լուծվեց: Խոսքն ու զրույցը անպակաս են:*

6. Կետադրական նշանը հաճախ առոգանական դադարի արտահայտություն է, հետևաբար **ն** հոդի առկայության դեպքում կետադրական նշան կարող է և չդրվել, ինչպես՝ *Խոսքն իհարկե դրա մասին է: Այդ հարցն անշուշտ մեզ հետաքրքրում է:*

7. Հ-ով սկսվող բառերից առաջ **-ն** հոդի գործածությունը գրական լեզվում չի հանձնարարվում. ոչ թե՝ *ինն հազար, հազար ինն հարյուր, լավ գործն հիշվում է,* այլ *ինը հազար, հազար ինը հարյուր, լավ գործը հիշվում է:*

3.1.3. *ԳՈՅԱԿԱՆԻ ՀՈԼՈՎ ԵՎ ՀՈԼՈՎՈՒՄ*

1. Արևելահայերենում գոյականն ունի հոլովական հինգ ձև, հետևաբար ունի հինգ հոլով՝ ուղղական–հայցական, սեռական–տրական, բացառական, գործիական, ներգոյական: (Այլ կարծիքով՝ արևելահայերենն ունի յոթ հոլով): Դրանցից ուղղականը կոչվում է նաև **ուղիղ հոլով**, մյուսները՝ **թեք հոլովներ**:

2. Կա վերջավորությունների (կամ ներքին թեքման) չորս խումբ. 1. սեռական–տրականի հոլովիչ՝ **-ի, -ու, -ան, -ոջ, -վա, -ց**, կամ ներքին թեքում՝ **ա** կամ **ո**, 2. Բացա-

ռականի վերջավորություն՝ **-ից** կամ **-ուց**, 3. գործիականի վերջավորություն՝ **-ով** կամ **-ք**, 4. ներգոյականի վերջավորություն՝ **-ում**:

3. Սեռական–տրականում որոշիչ հոդ չեն ստանում միայն **-ց** հոլովիչով բառաձևերը (**պապոնց, Արամենց**), որոնք միշտ որոշյալ առումով են, ինչպես նաև անկանոն՝ **մարդկանց, կանանց, տիկնանց, անձանց** ձևերը:

4. Ս և **դ** հոդ կարող են ստանալ գոյականի բոլոր ձևերը՝ *ընկերների**դ**, եղբոր**ս**, ձեռքերից**ս**, մտքով**դ**, աշխարհում**ս**, մարդկանց**դ***:

5. Սովորաբար ներգոյականի **-ում** վերջավորություն չեն ստանում, ներգոյական հոլով չունեն անձերի և կենդանիների հատուկ և հասարակ անունները (մարդ, սեր, դասախոս, ավանդատու, Հակոբ, արջ, Չալո), ինչպես նաև **-ություն**, **-ում** ածանցներով վերացական գոյականները (լռություն, նվիրում, զգուշացում): Այդ բառերի ներգոյական հոլովի իմաստն արտահայտվում է սեռական–տրական հոլովաձևի և **մեջ** կապի միջոցով՝ **մարդու մեջ, սիրո մեջ, լռության մեջ, նվիրումի մեջ, զգուշացման մեջ**: **Մեջ** կապով այսպիսի կազմությունները ներգոյական հոլովաձևեր չեն:

6. **-ու** հոլովման պատկանող բառերից զուգահեռաբար նաև **-ի** հոլովման են ենթարկվում՝ **-ելի, -ալի, -անի** ածանցով մի քանի գոյականներ՝ **հայելիի, բանալիի, խինկալիի, սպեղանիի** ևն, մի քանի հատուկ անուններ՝ **Էրեբունիի, Մուղնիի, Մեղրիի, Վեդիի, Աղասիի, Ռաֆֆիի, Քենեդիի** ևն, մի շարք հասարակ անուններ՝ **այրիի, այրուձիի, գերիի, նարդիի, օղիի** ևն: (**Ռաֆֆի**

գրողի անվան համար սովորական է **-ու**-ով ձևը՝ ***Հաֆֆու** «Սամվել» վեպը*):

7. Գյումրի և **Լոռի** բառերի վերաբերյալ կա տերմինաբանական կոմիտեի հատուկ որոշումը՝ դրանց համար հանձնարարելի համարել **ու**-ով կազմությունները՝ **Գյումրու**, **Լոռու**, հետևաբար՝ **Գյումրուց**, **Գյումրով**, **Գյումրում**, **Լոռով**, **Լոռուց** (փոխ.՝ **Գյումրի** ***-ի, -ից, -ով, -ում,*** **Լոռի** ***-ի, -ից, -ով, -ում):*** Այս ձևերում ակնհայտորեն աղավաղվում է բառի պատկերը, նաև անբարեհունչ ձևեր են: Երկրորդները՝ **Գյումրիից, Գյումրիով, Լոռիից, Լոռիով** են, և՛ բառապատկերը պահպանելու, և՛ արտասանական առումով նախընտրելի են: Որոշումը վերանայման կարիք ունի: **Գյումրի, Շուշի, Լոռի** բառերի **-վա**-ով կազմությունները (**Գյումրվա ուտեստներ, Շուշվա բնություն, Լոռվա բնաշխարհ**) այսօր հնացած են:

8. Բացի **Թբիլիսի** բառից, վրացական մյուս տեղանունների համար պահպանվում են առանց **-ի** վերջնահնչյունի ձևերը (**Բաթում, Բորժոմ, Ախալքալաք, Սուխում, Քութայիս** են). սրանց սեռական–տրականի ձևերը կկազմվեն **-ի** հոլովիչով՝ **Բաթում-ի (-ից, -ով, -ում), Սուխում-ի (-ից, -ով, -ում), Քութայիս-ի (-ից, -ով, -ում)** են: Ճիշտ է՝ **Թբիլիսի-ի, -ից, -ով, -ում:** Կանոնը չի տարածվում **ի**-ով վերջացող վրացական այլ տեղանունների վրա՝ **Կախի, Գորի, Փոթի** են:

9. -ելի, -ալի, -անի ածանցներով ածականների, մի շարք հատուկ անունների, **թի, դի, դար** բառերի՝ **ու** հոլովմամբ ձևերը, ինչպես՝ **Շուշու, Անու, Բջնու, Արենու, Արտենու, Փարպու, Բերկրու, Սոչու, Նոր Գեղու, Նելլու,**

Նազելու, թիու, դիու, դարու, պիտանու, խղճալու, պատվելու, ածելու, հնացած են կամ խոսակցական, ոչ գրական:

10. Անկողին, մարդ, ամուսին բառերի՝ **-ի** հոլովմամբ ձևերը՝ *անկող(ի)նի, մարդի, ամուս(ի)նի*, խոսակցական են, ոչ գրական: Կանոնական են՝ **անկողնու, մարդու, ամուսնու:**

11. Կաշի բառի՝ **կաշու, կաշուց** ձևերը արդեն հնացած են. **կաշի-**ն արդի գրական հայերենում ենթարկվում է **-ի** հոլովման՝ **կաշվի, կաշվից, կաշվով, կաշվում:** Գործածվում են նաև՝ **կաշիի**, **կաշիից**, **կաշիով**, **կաշիում**:

12. -վա հոլովման պատկանող մի շարք ժամանականիշ բառեր (**օր-վա, առաջ-վա, գիշեր-վա, տարի-վա, ցերեկ-վա, ժամ-վա** են) ոչ ժամանականիշ իմաստով գործածվելիս սովորաբար ենթարկվում են այլ հոլովման՝ **օրի, ժամի, ամսի, գիշերի, կեսօրի, կեսգիշերի, առավոտի, ժամանակի, տարու** են: Օր.՝ *Այս ի՜նչ **օրի** ես հասել: Հանգուցյալ պապիս **տարուն** հավաքվել էին մեր բոլոր հարազատները: «**Առավոտի**» վերջին էջում հետաքրքիր լուր կար: **Ժամանակի** մեծ մասը նա անցկացնում էր տանը: Վերադարձավ ճիշտ **ժամանակին**: Այս ուշ **ժամին** ի՞նչ եք անում այստեղ: **Ամսի** 5-ին կիրակի է: Գործարքը կնքվել է **կեսգիշերին**:*

13. -վա հոլովման պատկանող բառերի մեծ մասի բացառականը կարող է կազմվել ոչ միայն սեռական–տրականի (**ամսվան-ից, շաբաթվան-ից, գիշերվան-ից**), այլև ուղղականի ձևից (**ամս-ից, շաբաթ-ից, գիշեր-ից**):

14. Ժամանականիշ **վայրկյան, րոպե, դար**, **երեկո** բառերը ենթարկվում են **-ի** հոլովման՝ **վայրկյանի, րոպեի, դարի: Ռոպե, դար, երեկո**, ինչպես նաև **այժմ** բառերի **-վա**-ով ձևերը համարվում են ոչ գրական:

15. -վա հոլովման պատկանող բառերը կարող են ունենալ նաև սեռական–տրականի ձևից կազմված բացառականի, գործիականի և ներգոյականի ձևեր՝ **օրվանով, օրվանում, վաղվանից, վաղվանով, վաղվանում**, որոնք իրականում փոխանուն հատկացուցիչի հոլովաձևեր են՝ ***Վաղվա*** *ծրագիրն ավելի գրավիչ է, քան* ***այսօրվանը****.* ***վաղվանում*** *հետաքրքիր համերգներ կան, իսկ* ***այսօրվանում****՝ ոչ:*

16. -ան մասնիկ եզակի սեռականում սովորաբար ստանում են **-ում** վերջածանցով գոյականները՝ **շարժման, ուսման, լարման, հարցման,** գործիականում ունենում են **-ը՝ շարժմամբ, ուսմամբ, լարմամբ, հարցմամբ:** Գործածական են նաև դրանց **-ի** հոլովմամբ ձևերը՝ **շարժումի, ուսումի, լարումի, հարցումի,** և այդ դեպքում գործիականը կազմվում է ոչ թե **-ը**, այլ ընդհանրական **-ով** վերջավորությամբ՝ **շարժումով, ուսումով, լարումով, հարցումով**: **Դիմում** բառը հոլովվում է միայն **-ի**-ով: Առաջինները գրական-գրքային կազմություններ են, երկրորդները բնորոշ են խոսակցական լեզվին: **-ում** ածանցով վերջացող առանձին գոյականների համար սովորական է **-ի**-ով ձևը՝ **շահում-ի, տեղում-ի, վատնում-ի, ապրում-ի, պատում-ի, այցելում-ի**: Դրանցում առարկայական իմաստը առավել ընդգծված է:

17. Մահ բառը սեռական–տրականում ունենում է ոչ թե **-վա**, այլ **-վան** հոլովիչը՝ **մահվան, մահվանից, մահվանով//մահվամբ: Մահ** բառը ենթարկվում է նաև **-ի** հոլովման՝ **մահի, մահից, մահով**՝ *Մահը մերն է, մենք՝* ***մահինը****: Գլուխը* ***մահի*** *տալ:* Սրանք ունեն որոշ խոսակցական երանգ: Հանդիպում է նաև **մահու** ձևը՝ որպես հնաբանություն՝ *կենաց և* ***մահու*** *պայքար,* ***մահու*** *հրեշտակ*:

18. Բեռ, գառ, եզ, թոռ, ծոռ, լեռ, ծունկ, բուռ, մանուկ բառերը, **-ան** հոլովման ձևերից բացի (**բեռ-ան, գառ-ան, թոռ-ան**), ունեն նաև **-ի** հոլովիչով ձևեր՝ **բեռի, գառի, եզի, թոռի, ծոռի, լեռի, ծ(ու)նկի, բռի, մանուկի**, որոնք ունեն խոսակցական երանգ: **Մանուկ** հատուկ անունը ենթարկվում է միայն **-ի** հոլովման՝ **Մանուկի**:

19. Ամառ, ձմեռ բառերը ենթարկվում են նաև **-վա** հոլովման՝ **ամռան//ամառվա, ձմռան//ձմեռվա: Գարուն, աշուն** բառերի բացառականը և գործիականը, ինչպես նաև **ամառ, ձմեռ** բառերի միայն գործիականը հիմքային զուգաձևություն ունեն. դրանք կարող են կազմվել ոչ միայն ուղղականի՝ **գարուն-ից, աշուն-ից, գարուն-ով, աշուն-ով, ամառ-ով, ձմեռ-ով**, այլև սեռական–տրականի ձևից՝ **գարնան-ից, աշնան-ից, ամռան-ից, ձմռան-ից, գարնան-ով, աշնան-ով, ամռան-ով, ձըմռան-ով**: **Ամառ, ձմեռ** բառերի բացառականը կարող է կազմվել ոչ միայն **-ան՝ ամռանից, ձմռանից,** այլև **-վա** հոլովման ձևով՝ **ամառվան-ից, ձմեռվան-ից**:

20. -ի հոլովման ենթարկվող **հիմք** բառի սեռական–տրականը (հիմքի) ունի նաև **-ան** հոլովման պատկա-

նող զուգահեռ ձև՝ **հիման**. քարացած ձև է՝ **վրա** կապի հետ սահմանափակ կիրառությամբ՝ *նյութերի **հիման վրա**, փաստերի **հիման վրա*** են: Ուղղականի **հիմ, հիմեր//հիմներ** և գործիականի **հիմամբ** ձևերը ներկայումս գործածական չեն:

21. Ծունկի, ծնկի և **ծնկան** տարբերակներից գործածական են առաջին երկուսը. վերջինը աստիճանաբար դուրս է մղվում:

22. -ոջ հոլովման են պատկանում անձնանիշ **քույր, ընկեր, տեր, կին, աներ, սկեսուր, տալ, տեգր** բառերը և դրանցով կազմված այն բարդությունները, որոնցում դրանք վերջնաբաղադրիչ են՝ **քրոջ, ընկերոջ, տիրոջ, կնոջ, աներոջ, սկեսրոջ, տալոջ, գործընկերոջ: Քույր** բառը *«բուժքույր»* իմաստով կիրառվելիս կարող է ենթարկվել նաև **-ի** հոլովման՝ **քույրի, քույրից, քույրով, բուժքույրի, բուժքույրից, բուժքույրով**:

23. Տեր վերջնաբաղադրիչով **տերտեր** բառը ենթարկվում է **-ի** հոլովման (**տերտերի**), **տանուտեր** բառը՝ թե՛ **-ի**, թե՛ **-ոջ** հոլովման (**տանուտերի//տանուտիրոջ**), **տանտեր**-ը՝ միայն **-ոջ (տանտիրոջ)**:

24. Սկեսուր, տալ, տեգր բառերը ենթարկվում են նաև **-ի** հոլովման՝ **սկեսուրի, տալի, տեգրի**, որոնք գնալով ավելի գործածական են դառնում: Ավելին՝ **սկեսուր, տալ, տեգր** բառերի բացառական և գործիական հոլովների **-ոջ**-ով ձևերը՝ **սկեսրոջից, սկեսրոջով, տալոջից, տեգրոջով**, այժմ խոսակցական են: Խոսակցական է նաև **տեգոր** ձևը: Դրանց գրական համարժեքները կազմվում են **-ի** հոլովմամբ՝ **սկեսուրով, սկեսուրից,**

տալով, տալից, տեգրով, տեգրից:

25. Հույսով և **հուսով** տարբերակներից առաջինը գործածվում է առանձնաբար՝ ***Հույսով*** *սպասելու եմ ձեզ,* երկրորդը՝ սովորաբար **եմ**-ի հետ զուգակցված՝ **հուսով եմ:** Սխալ չէ՝ **հույսով եմ:**

26. Մի քանի գոյականներ (**անկյուն, հրապարակ, խաչմերուկ, փողոց** ևն) ներգոյականի իմաստով գործածվում են **վրա** կապով զուգորդված՝ **անկյունի վրա** (անկյունում), **փողոցի վրա** (փողոցում) ևն: Դա բնորոշ է խոսակցականին և գրական լեզվի կանոնով հանձնարարելի չէ:

27. -ց հոլովման պատկանող **-անք, -ենք, -ոնք, -ունք** ածանցներով կազմված անձնանիշ բառերն ունեն միայն հոգնակիի իմաստ՝ **Հայկենք, Հայկենց, Հայկենցից, Հայկենցով:**

28. ա ներքին հոլովման պատկանող **ձյուն, սյուն, անկյուն, արյուն, անուն** բառերը (**ձյան, սյան, անկյան, արյան, անվան**. **անուն** բառի դեպքում **ա** հոլովիչը ոչ թե փոխարինում է արմատի **ու** հնչյունին, այլ ավելանում է նրանից հետո, իսկ **ու**-ն դառնում է **վ**) կարող են ենթարկվել նաև **-ի** հոլովման՝ **ձյունի, սյունի, անկյունի, արյունի, անունի**, և այդ դեպքում **արյուն, անուն** բառերի գործիականը կազմվում է ոչ թե **-ը** (**միությամբ, արյամբ, անվամբ**), այլ ընդհանրական **-ով** վերջավորությամբ՝ **արյունով, անունով:** Ե՛վ սեռական–տրականի, և՛ գործիականի այս ձևերը (**անունի, անունով**) խոսակցական երանգ ունեն:

29. -ություն ածանցով բառերի՝ գործիականի կանոնա-

կան **-ք** վերջավորությամբ ձևերին զուգահեռ **-ով**-ով կազմությունները ունեն խոսակցական երանգ և գրական լեզվում հանձնարարելի չեն (**միությամբ – միությունով, ցնծությամբ – ցնծությունով, պետությամբ – պետությունով**):

30. Տուն, շուն բառերի բացառականը կազմվում է հնչյունափոխված ուղղականի ձևից՝ **տն-ից, շն-ից**: Սեռական–տրականից կազմված **տան-ից** ձևը նույնպես գործածական է: **Հարություն** անձնանունը ենթարկվում է միայն **ի** հոլովման՝ **Հարությունի:**

31. ո ներքին հոլովման պատկանող անձնանիշ **հայր, մայր, եղբայր** բառերը և դրանցով կազմված անձնանիշ բարդությունները (**նախահայր, տիրամայր, հորեղբայր** են) հոլովական զուգաձևություններ չունեն՝ **հոր, մոր, եղբոր, նախահոր, տիրամոր, հորեղբոր** (բայց՝ **տառամայրի, պտուտակամայրի**):

32. Այլաձև հոլովման պատկանող գոյականներից **սեր** բառը սեռական–տրականում ունի տարբերակային ձև՝ **սիրո/սիրուն** (Երգը նվիրված է քո **սիրուն**), **սիրուց, սիրով**: Վերջինիս հետ չպետք է շփոթել համանուն **սեր (սերուցք)** բառը, որը պատկանում է **-ի** հոլովման՝ **սերի, սերից, սերով, սերում:**

33. Կայսր, դուստր, հույս, լույս, սուգ, հուր, պատիվ, մամուլ, խնդիր, ծնունդ, գալուստ, հանգիստ, կորուստ բառերը, բացի ընդհանրական **-ի** հոլովման ձևերից (**կայսրի, դուստրի, հույսի, լույսի, ս(ու)գի, հրի, պատվի, խնդրի, մամուլի, ծն(ու)նդի, գալ(ու)ստի, հանգըստի, կոր(ու)ստի**), սեռական–տրականում ունեն նաև

մեծ մասամբ քարացած կամ հնաձև կազմություններում հանդիպող անկանոն ձևեր՝ **կայսեր, դստեր, հուսո, լուսո, սգո, հրո, պատվո, խնդրո, մամլո, ծննդյան, գալլոստյան, հանգստյան, կորստյան**:

34. Աստված բառը սեռական–տրականում, բացի սովորական **-ու** հոլովման ձևից (**աստծու**), ունի նաև գրաբարից փոխանցված **աստծո** զուգաձևը: **Գալուստ** անձնանունը ենթարկվում է միայն **-ի** հոլովման՝ **Գալուստի**:

35. -ու հոլովման պատկանող մի շարք բառեր գործիականում և ներգոյականում ունեն հիմքային տարբերակներ՝ **այգ(ի)ով, այգ(ի)ում, գին(ի)ով** (**գինով** ձևը ունի նաև **գինովցած** իմաստը), **Գյումր(ի)ով, Գյումր(ի)ում, գոլորշ(ի)ով, ընկուզեն(ի)ով, Լոռ(ի)ով, Լոռ(ի)ում, լուցկ(ի)ով, խճուղ(ի)ով, որդ(ի)ով, ոսկ(ի)ով, պատան(ի)ով, տար(ի)ով, տար(ի)ում, ուղ(ի)ով, ուղ(ի)ում** են:

Թեքված ձևերում հիմքային տարբերակներ ունեն նաև **-ի**-ով հոլովվող մի շարք գոյականներ՝ **խորհ(ու)րդի / խորհ(ու)րդից / խորհ(ու)րդով / խորհ(ու)րդում** են, կամ՝ **բազմարկ(ի)չի, բացահայտ(ի)չի, խեցգետ(ի)նի, ծաղ(ի)կի, կոշ(ի)կի, համակարգ(ի)չի, հրահանգ(ի)չի, նվագարկ(ի)չի, ոճ(ի)րի, ուսուց(ի)չի** են: Դրանց մի մասի համար անհնչյունափոխ հիմքով ձևերը ակնհայտ խոսակցական երանգ ունեն, ինչպես՝ **թարգմանիչի, խորհրդանիշի, խորհուրդի, գիտխորհուրդի, ուսուցիչի, ոսկերիչի, տափաշիշի** են: Մյուս մասի համար նախընտրելի են անհնչյունափոխ ձևերը՝ **ախտանիշի, բազմարկիչի, ըմբիշի, կոշիկի, մանդարինի, մարգարինի,**

նիկոտինի, ոճիրի, ուղենիշի, քննիչի են, քանի որ առավել ամբողջական են պահում բառի պատկերը, ընկալումը ավելի դյուրին է դառնում:

Մի շարք գոյականների դեպքում հանձնարարելի են անհնչյունափոխ հիմքով տարբերակները՝ **ասպիրինի, բաղադրիչի, բեմադրիչի, դարչինի, դելֆինի, ընդունիչի, կրակայրիչի, հոլովիչի, պարաֆինի, պինգվինի, վարիչի, տպագրիչի, տեսուչի, ցրիչի** են:

Վստահաբար դժվար է ասել, թե այս դեպքում ինչ կանոններ են գործում: Անհնչյունափոխ հիմքով գործածվելու միտում են դրսևորում հատկապես փոխառյալ բառերը, մասամբ նաև գրական–գրքային ծագում ունեցողները: Բայց վստահաբար կարելի է ասել, որ արդի գրական հայերենում ձևակազմության մեջ չհնչյունափոխվելու միտումը որոշակի է (տե՛ս նաև էջ 24-29):

36. Փողոցների և հրապարակների բաղադրյալ հատուկ անունների՝ գոյականով արտահայտված լրացումը լրացյալի հետ, որպես կանոն, գործածվում է սեռական–տրական հոլովաձևով, օր.՝ **Ծերեթելու փողոց, Տիգրան Մեծի պողոտա, Գարեգին Նժդեհի հրապարակ, Մայիսի 9-ի փողոց, Հանրապետության հրապարակ, Արցախի փողոց, Տպագրիչների փողոց, Այգեստանի փողոց** են: Սակայն եթե լրացումը **-յան** կամ **-յանց** ածանցով է կազմված, ապա լրացյալի հետ գործածվում է ուղղական հոլովաձևով, օր.՝ **Մոսկովյան փողոց, Աբովյան փողոց, Ալեք Մանուկյան փողոց, Մարշալ Բաղրամյան պողոտա** են:

ԲԱՌԱՑԱՆԿ

Բառացանկում ընդգրկված են հիմնականում կիրառության հաճախականություն ունեցող բառեր, որոնք հոլովական թեք ձևերում ունեն զուգաձևություններ:

Արդի հայերենի տարբեր բառարաններում արձանագրված որոշ բառաձևեր այստեղ ընդգրկված չեն այսօր գործածությունից գրեթե դուրս մղված կամ կիրառության խիստ նեղ շրջանակ ունենալու պատճառով: Օր.՝ ***ածելու*** *(ածելի–ածելիի),* ***անկողնի*** *(անկողին–անկողնու),* ***ամուսնի*** *(ամուսին–ամուսնու),* ***աշունի*** *(աշուն–աշնան),* ***գարունի*** *(գարուն–գարնան),* ***ժամանակվա*** *(ժամանակ–ժամանակի),* ***կաշու*** *(կաշի–կաշվի),* ***հորաքույրի*** *(հորաքույր–հորաքրոջ),* ***Բերկրու*** *(Բերկրի–Բերկրիի),* ***Նոր Գեղու*** *(Նոր Գեղի–Նոր Գեղիի),* ***պատվելու*** *(պատվելի–պատվելիի),* ***Շուշիի*** *(Շուշի–Շուշու),* ***Փարպու*** *(Փարպի–Փարպիի) են:*

Սխալակազմությունները չեն նշվում:

Զուգաձևություններից հանձնարարվում են առաջինները:

ածելի – ածելիի
Աղասի –Աղասիի//Աղասու
ամառ –ամռան//ամառվա, ամռանից//ամառվանից, ամռանով//ամառվանով
ամիս – ամսվա//ամսի, ամսից//ամսվանից, ամսով, ամսում
ամուսին – ամուսնու
այսօր – այսօրվա, այսօրվանից, այսօրվանով, *հզվ.՝* այսօրվանում
այրի – այրու//այրիի
այրուձի – այրուձիի//այրուձիու

այցելում – այցելման//այցելումի
աներ – աներոջ
Անի *(անձն.)* – Անիի
Անի *(ք.)* – Անիի
անկյուն – անկյան//անկյունի, անկյունից, անկյունով
անկողին – անկողնու
անձինք – անձանց
անուն – անվան (անունի-*խսկց.*), անունից, անունով
աշուն – աշնան, աշնանից, աշնանով (աշունից, աշունով–*խսկց.*)
ապրում – ապրումի
առավոտ – առավոտվա (առավոտի –*հզվ.*), առավոտից //առավոտվանից, առավոտով, առավոտում
Աստված – Աստծու//Աստծո (Աստվածի – *խսկց.*)
Արենի – Արենիի (Արենու – *խսկց.*)
արյուն – արյան (արյունի – *խսկց.*), արյունով
Արտենի – Արտենիի (Արտենու – *խսկց.*)
Բաթում – Բաթումի
բանալի – բանալու//բանալիի, բանալուց//բանալիից
բեռ – բեռի//բեռան
Բերկրի – Բերկրիի
Բորժոմ – Բորժոմի
բուժքույր – բուժքրոջ//բուժքույրի
բուռ – բռան//բռի (բուռի – *խսկց.*)
Բջնի – Բջնիի (Բջնու – *խսկց.*)
գալուստ – գալուստի//գալլստյան
գառ – գառան (գառի – *խսկց.*)
գարուն – գարնան (գարունի–*խսկց.*), գարնանից// գարունից, գարնանով // գարունով
գերի – գերու (գերիի–*խսկց.*), գերուց//գերիից, գերիով
գիշեր – գիշերվա (գիշերի–*հզվ.*), գիշերից//գիշերվանից, գիշերով, գիշերում
Գյումրի – Գյումրիի//Գյումրու (Գյումրվա – *բրբռ.*), Գյումրիից//Գյումրուց, Գյումրիով //Գյումրով,

Գյումրիում //Գյումրում

գնում – գնման (գնումի – *խսկց.*)

Գորի – Գորիի

գործադրում – գործադրման (գործադրումի – *խսկց.*), գործադրմամբ//գործադրումով

Գորկի *(անձն.)* – **Գորկու**

Գորկի *(ք.)* **– Գորկիի**

դար – դարի (դարու – *հնց.*)

դի→դիակ–ի, (դիի//դիու– *հնց.*)

դիմում – դիմումի

դուստր – դստեր//դուստրի

եզ – եզան (եզի **–** *խսկց.*)

երեկ – երեկվա, երեկվանից, երեկվանով, երեկվանում

երեկո – երեկոյի

Էրեբունի – Էրեբունու//Էրեբունիի, Էրեբունուց//Էրեբունիից

ընկեր – ընկերոջ

Թբիլիսի – Թբիլիսիի

թի→թիակ–ի (թիի//թիու– *հնց.)*

Թիֆլիս – Թիֆլիսի

թոռ – թոռան (թոռի **–** *խսկց.*)

ժամանակ – ժամանակի, ժամանակից, ժամանակով, ժամանակում

ժամ – ժամվա//ժամի, ժամից //ժամվանից, ժամով, ժամում

լարում – լարման (լարումի **–** *խսկց.*), լարումից, լարմամբ// լարումով

լեռ – լեռան

Լոռի – Լոռիի//Լոռու (Լոռվա **–** *բրբռ.*), Լոռիից//Լոռուց, Լոռիով

լույս – լույսի (լուսո – *հզվ.*)

խինկալի – խինկալու//խինկալիի

խնդիր – խնդրի (խնդրո **–** *հզվ.*)

ծնունդ –ծննդի//ծննդյան// ծնունդի

ծոռ – ծոռան (ծոռի **–** *խսկց.*)

ծունկ –ծնկի//ծունկի (ծնկան – *հնց.*)

Կախի – Կախիի

կայսր – կայսեր//կայսրի

կանաչի – կանաչիի (կանաչու–*խսկց.*)

կաշի – կաշվի (կաշիի–

խսկց.), կաշվից//կաշիից, կաշվով//կաշիով

կեսգիշեր – կեսգիշերվա//կեսգիշերի, կեսգիշերից//կեսգիշերվանից, կեսգի - շերով, կեսգիշերում

կեսօր – կեսօրվա (կեսօրի – *հզվ.*), կեսօրից//կեսօրվանից, կեսօրով, կեսօրում

կոշկաթի – կոշկաթիու//կոշկաթիի

կորուստ – կորստի//կորստյան (կորուստի – *խսկց.*)

հայելի – հայելու//հայելիի

հանգիստ –հանգստի//հանգըստյան

հանդիպում – հանդիպման (հանդիպումի – *խսկց.*), հանդիպումով//հանդիպմամբ

հարցում – հարցման//հար–ցումի, հարցմամբ//հարցումով

հետախուզում – հետախուզման//հետախուզումի, հետախուզմամբ//հետախուզումով

հորաքույր – հորաքրոջ

հույս – հույսի (հուսո – *հզվ.)*, հույսով (*Հույսով* սպասում եմ: Բայց՝ *հուսով* եմ, նաև՝ *հույսով* եմ)

հուր – հուրի (հրո – *հզվ.)*

ձեռնադրում – ձեռնադրման//ձեռնադրումի, ձեռնադրմամբ//ձեռնադրումով

ձի – ձիու

ձմեռ – ձմեռվա//ձմռան, ձմռանից//ձմեռվանից, ձմռանով//ձմեռվանով

ձյուն – ձյան (ձյունի – *խսկց.*), ձյունից, ձյունով

մահ – մահվան (մահու – *հնց.*, մահի – *հզվ.*)

մամուլ – մամուլի (մամլո *հզվ.)*

մանուկ – մանկան//մանուկի

մարդ – մարդու

մարդիկ – մարդկանց

Մեղրի – Մեղրու//Մեղրիի

մորաքույր – մորաքրոջ

Մուղնի – Մուղնու//Մուղնիի

Նաիրի – Նաիրիի

նավաստի – նավաստու

նարդի – նարդու//նարդիի

ներում – ներման//ներումի,

ներմամբ//ներումով

Նոր Գեղի – Նոր Գեղիի

շաբաթ – շաբաթվա, շաբաթից//շաբաթվանից, շաբաթով, շաբաթում

շահում – շահումի

շարժում – շարժման//շար - ժումի, շարժմամբ//շարժումով

շուն – շնից

Շուշի – Շուշիի

պատիվ – պատվի (պատվո – *հզվ.)*

պատում – պատումի

պատվելի – պատվելիի

պիտանի – պիտանիի

պտուտակամայր – պտու - տակամայրի

սեր *(զգաց.)* **–** սիրո, սիրուն, սիրուց, սիրով

սեր *(սերուցք)* **–** սերի, սերից, սերով

սկեսուր – սկեսրոջ//սկեսուրի, սկեսուրից, սկեսուրով (սկեսրոջից, սկեսրոջով –*հնց.)*

սկեսրայր – սկեսրայրի

սյուն – սյան (սյունի – *խսկց.*), սյունից, սյունով

Սոչի – Սոչիի

սուգ – սուգի (սգո – *հզվ.)*

սպեղանի – սպեղանու//սպեղանիի

սոնի – սոնիի//սոնու

վաղ – վաղվա, վաղվանից, վաղվանով (վաղվանում – *հզվ.)*

վայրկյան – վայրկյանի

վատնում – վատնումի

Վեդի – Վեդիի//Վեդու

վերահիրատարակում – վերահիրատարակման// վերահիրատարակումի, վերահիրատարակմամբ //վերահիրատարակումով

տալ – տալի, տալից, տալով (տալոջ, տալոջից, տալոջով – *հնց.*)

տանուտեր – տանուտիրոջ// տանուտերի

տանտեր – տանտիրոջ

տառամայր – տառամայրի

տարի – տարվա (տարու – *հզվ.*), **տարուց//տարվանից, տարով, տարում**

տեգր – տեգոր//տեգրի,

տեգրից, տեգրով (տեգրոջ, տեգրոջից, տեգրոջով– *խսկց.)*

տեղում – տեղումի

տեր – տիրոջ

տիկին – տիկնոջ

տիկնայք – տիկնանց

տուն – տնից//տանից

Ռաֆֆի – Ռաֆֆիի (բայց՝ *Ռաֆֆու «Սամվել» վեպը*)

ռոպե – ռոպեի

ուսում – ուսման//ուսումի, ուսմամբ//ուսումով

ուրախություն – ուրախությամբ//ուրախությունով

Փարպի – Փարպիի

Փոթի – Փոթիի

Քենեդի – Քենեդու//Քենեդիի

քեռի – քեռու (քեռիի–*խսկց.*)

Քութայիս – Քութայիսի

քույր – քրոջ (**բուժքույր** իմաստով նաև՝ քույրի, քույրից, քույրով)

օղի – օղու (օղիի – *խսկց.*)

օր – օրվա (օրի – *հզվ.*), օրից//օրվանից, օրով (օրվանով – *հզվ.)*, օրում

3.1.4. *ԱԾԱԿԱՆ: ԹՎԱԿԱՆ: ԴԵՐԱՆՈՒՆ*

1. Նույն ածականի վրա չի կարելի միաժամանակ ավելացնել **ամենա-** և **-գույն** ածանցները՝ **ամենաբարձրագույն**, **ամենաուժեղագույն**:

2. Ինքս (ինքդ, ինքը) դերանունը **ես** (դու, նա)-ի սաստկականն է, ավելի է շեշտում մասնակցի հատկապես դեմքը, այդ պատճառով էլ հաճախ կիրառվում է նրա հետ միասին՝ **ես ինքս** (դու ինքդ, նա ինքը) (առանց որևէ կետադրության), 3-րդ դեմքում՝ նաև գոյականի հետ միասին՝ *Գործատուն ինքը պիտի որոշի*: **Ինքս** սաստկականը հոլովվում է միայն 3-րդ դեմքում (ինքը), ինչպես նաև ունի հոգնակիի երեք դեմք՝ **ինքներս, ինքներդ, իրենք** կամ **ինքները** (հզվ.՝ **նրանք ինքները**):

3. Տարահիմք զուգաձևեր կան 1-ին և 2-րդ դեմքերի բացառական, գործիական, ներգոյական հոլովներում՝ **ինձնից – ինձանից, քեզնով – քեզանով, մեզնում – մեզանում** ևն: Կարծիք կա, որ գրական լեզվին առավել բնորոշ են երկրորդները: Ըստ որում՝ անձնական դերանունների ներգոյականի ձևերը՝ **մեզնում//մեզանում, ձեզնում//ձեզանում, քեզնում//քեզանում** ևն, գրական լեզվի նորմերի սահմաններում են, բայց գործածվում են հազվադեպ: Գործածական որոշ հաճախականություն ունի **մեզանում** ձևը (որոշ իմաստափոխություն է կրել. նշանակում է նաև *մեր միջավայրում, Հայաստանում* ևն), մյուսները աստիճանաբար դուրս են մղվում գրական լեզվից (դրանց փոխարինում են **մեջ** կապով կառույցները՝ **մեր մեջ, քո մեջ** ևն):

4. Ինքը դերանունը որպես հատկացուցիչ (***իր* խոսքը,**

իր* դեմքով**) կամ կապի խնդիր (իր* համար, *իր* մասին, *իր* մոտ, *իր* վրա, *իր* կողմից**) օգտագործվում է **իր** (սեռականի) ձևով և ոչ թե **իրեն** (տրականի):

5. Անձնական դերանվան 2-րդ դեմքի հոգնակիի ձևերը կարելի է կիրառել նաև եզակիի նշանակությամբ: Այդպիսի կիրառությունը կոչվում է **քաղաքավարական հոգնակի:** Քաղաքավարական հոգնակիի ձևերը գրվում են մեծատառով՝ **Դուք, Ձեր, Ձեզ, Ձեզնից, Ձեզնով, Ձեզանում, Ինքներդ** են:

6. Մենք-ը եզակի նշանակությամբ կարելի է գործածել գիտական գրականության մեջ, մասամբ պաշտոնական գրագրություններում՝ ***Մենք** այն կարծիքին ենք, որ.....: Հայտնում ենք Ձեզ, որ **մենք**.....:* Այս գործածությունը, սակայն, բնավ էլ պարտադիր պայման չէ:

7. Հանձնարարելի է **միևնույն** դերանվան գործածությունը որոշիչ հոդով՝ որպես փոխանունություն (ինչպես **նույն** դերանվան դեպքում է): Ճիշտ կիրառություններ են՝ *Ինձ համար **միևնույնն** է (**միևնույնը** չէ), թե դու ուր կգնաս: Ես, **միևնույնն** է, քեզ չեմ հավատում: Իմ ուզածը **նույնն** է:*

8. Նա ցուցական դերանունը համանուն է **նա** անձնական դերանվանը և, ի տարբերություն նրա, կարող է մատնացույց անել ոչ միայն անձ (ինչպես՝ ***Սա** ավագ եղբայրն է, **դա**՝ միջնեկը, իսկ **նա**՝ կրտսերը*), այլև ոչ անձ (***Սրանք** գեղարվեստական գրքերն են, **դրանք**՝ գիտականները, իսկ **նրանք**՝ գիտահանրամատչելիները*), և բնավ կարիք չկա **նա** ցուցական դերանունը անտեղի փոխարինելու **այն** դերանվամբ: Հանձնարարելի չէ **դա**

դերանվան փոխարեն **նա**-ի գործածությունը, եթե խոսքը ոչ անձի մասին է, ինչպես՝ *խաղողենին և **նրա** խնամքը*: Ճիշտ ձևեր են՝ *Հոմանիշները և **դրանց** ոճական կիրառությունը: Երիտասարդ թուրքերը և **նրանց** ոճրագործությունները*:

9. Ի՞նչ դերանունը իրանիշ է և ենթարկվում է **ի** հոլովման՝ **ի՞նչ(ը), ինչի՞(ն), ինչի՞ց, ինչո՞վ, ինչո՞ւմ, ինչե՞ր(ը), ինչերի՞(ն), ինչերի՞ց, ինչերո՞վ, ինչերո՞ւմ**: Հաճախ գործածվում է նաև որպես ածականական դերանուն՝ **«ինչպիսի՞», «ո՞ր»** իմաստով՝ ***Ի՞նչ** խոսքերով երգեմ քեզ: Սա **ի՞նչ** սարք է: **Ի՞նչ** նշումներ պիտի արվեն:* Այս դեպքում նրա լրացյալը սովորաբար լինում է անորոշ առումով *(**Ի՞նչ** մարդ ես դու)*, երբեմն՝ որոշյալ *(Իմ **ի՞նչ** գործն է):*

10. Մակբայական **ե՞րբ** դերանունը արտահայտում է հարցում գործողության կամ եղելության ժամանակի մասին և ենթարկվում է **-վա** հոլովման միայն եզակի թվով՝ **երբվա՞, երբվանի՞ց**: Գործիական և ներգոյական հոլովներ չունի:

11. Որտե՞ղ դերանունը արտահայտում է հարցում գործողության կատարման կամ եղելության տեղի մասին: Ներգոյական հոլովաձևը չի գործածվում: Իսկ **ո՞ւր** դերանունը արտահայտում է հարցում գործողության ուղղության մասին և չի հոլովվում: Հետևաբար՝ ***Որտե՞ղ** է գտնվում: **Ո՞ւր** է առաքվում: **Որտե՞ղ** հանդիպեցիք:*

12. Ինչո՞ւ դերանվանը հաճախ համարժեք է **ինչի՞ համար** կապակցությունը՝ ***Ինչո՞ւ (=ինչի՞ համար)** ես բերել*

այդ գործիքը: Ուստի սխալ է **ինչո՞ւ** դերանվան գործածությունը **համար** կապի հետ: Հանձնարարելի չեն նաև ռուսաբան **ինչո՞ւմն է բանը / հարցը (բանը / հարցն ինչո՞ւմն է)** կապակցությունը (որը նշանակում է «ի՞նչ է պատահել», «ի՞նչ խնդիր կա», «խնդիրը ո՞րն է») և հետևաբար **բանը / հարցը նրանում(ն) է** պատասխանը:

13. Ամեն, ամեն մի, յուրաքանչյուր, ամենայն ածականական դերանունները գործածվում են անորոշ առումով լրացյալի հետ՝ ***ամեն*** *մարդ,* ***ամեն մի*** *ուսանող,* ***յուրաքանչյուր*** *քաղաքացի,* ***ամենայն*** *ցանկություն,* իսկ **բոլոր** դերանունը՝ որոշյալ առումով՝ ***բոլոր*** *գրքերը*:

14. Ողջ, ամբողջ, համայն դերանունները սովորաբար պահանջում են որոշյալ առումով լրացյալ՝ **ողջ աշխարհը, ամբողջ օրը, համայն մարդկությունը,** սակայն **մի** անորոշ դերանվան հետ զուգակցվելով՝ պահանջում են անորոշ առումով լրացյալ՝ *մի* ***ամբողջ*** *տիեզերք,* ***մի ողջ*** *ժողովուրդ*:

15. Հաճախ հոգնակի լրացյալի հետ գործածվելիս շփոթվում են **բոլոր** և **ամբողջ** դերանունները: Ըստ կանոնների՝ պետք է ասել ***ամբողջ*** *օրը* (*գիրքը, սենյակը, երկիրը, տարածքը, աշխարհը* ևն), բայց՝ **բոլոր** *օրերը (գրքերը, սենյակները, երկրները, տարածքները, աշխարհները, գույները* ևն):

16. Յուրաքանչյուրը, ամեն մեկը դերանուններով արտահայտված ենթակայի հետ ստորոգյալը լինում է եզակի երրորդ դեմքով: Օր.՝ ***Յուրաքանչյուրն*** *իր գործն է անում:* ***Ամեն մեկը*** *մի բան է ասում:* Եթե այդ նույն դերանուններով արտահայտված ենթական ունենում

է դիմորոշ հոդ՝ **յուրաքանչյուրս, ամեն մեկս, յուրաքանչյուրդ, ամեն մեկդ,** ապա ստորոգյալը կարող է առաջին կամ երկրորդ դեմքով լինել, եթե հոգնակի թվով է՝ ***Յուրաքանչյուրս*** *մի առանձին գործ ենք անում:* ***Ամեն մեկդ*** *ձեր անելի՛քն իմացեք,* կամ էլ երրորդ դեմքով լինել, եթե եզակի թվով է՝ ***Յուրաքանչյուրս*** *մի առանձին գործ է անում:* ***Ամեն մեկդ*** *պիտի իմանա իր անելիքը:*

17. Ոմն դերանունը եզակի թվով գոյականաբար չի գործածվում և չի հոլովվում: Ունի միայն որոշչային կիրառություն՝ ***ոմն*** *Գրիգոր,* ***ոմն*** *քաղաքական գործիչ:*

18. Մի քանի դերանունը հոլովվում է **քանի՞** հարցական դերանվան նման՝ միայն եզակի թվով (**մի քանիսը, մի քանիսի(ն), մի քանիսից, մի քանիսով, մի քանիսում**), սակայն ենթակա լինելիս գործածվում է հոգնակի ստորոգյալի հետ՝ **մի քանիսը եկան, մի քանիսով ճանապարհ ընկան**:

19. Որոշ դերանվան գոյականաբար գործածությունը և հոգնակի թվով հոլովումը (**որոշները, որոշներից** ևն) թեև խոսակցական բնույթ ունեն, սակայն կարծես թե միտում ունեն գրականանալու:

20. Այլ դերանունը գոյականաբար երբեմն, իբրև հնաբանություն, գործածվում է միայն հոգնակի ուղղականում՝ **այլք** (**այլոք** ձևը սխալ կազմություն է), և սեռական–տրականում՝ **այլոց**:

21. Ածականական անորոշ դերանունները գործածվում են անորոշ առումով լրացյալի հետ (բացի **այսինչ, այնինչ** դերանուններից)՝ *ինչ-որ* **բան,** *ինչ-ինչ*

խնդիրներ, *ոմն* **Սարգսյան**, *մի* **քառյակ**, *ուրիշ* **հարցեր**, *այլ* **դեպքեր**, *որոշ* **պայմաններ**, *որևէ* **խոչընդոտ**, *որևիցե* **պատճառ**, բայց՝ *այսինչ* **մարդը**, *այսինչ-այնինչ* **նկատառումները**:

22. Ածականական **ոմն, մի, որևէ, որևիցե** դերանունները գործածվում են միայն եզակի թվով լրացյալի հետ՝ *ոմն* **արվեստագետ**, *մի* **մարդ**, *որևէ* **խնդիր**, *որևիցե* **խոչընդոտ**, իսկ **ինչ-ինչ, որոշ** դերանունները՝ միայն հոգնակի թվով լրացյալի հետ՝ *ինչ-ինչ* **հանգամանքներ**, *որոշ* **դեպքեր**:

23. Ոչ մի դերանունը եզակի թվով որոշյալ է պահանջում, և նույնիսկ որոշյալի բազմակի լինելու դեպքում ստորոգյալը լինում է եզակի՝ *Ոչ մի տերև, ոչ մի ծաղիկ **չէր շարժվում** քամուց:*

24. Հոգնակի **մեր, ձեր, իրենց** կամ **նրանց** ձևերի փոխարեն գործածված ստացական հոդից առաջ **-ներ** հոգնակերտ մասնիկը համապատասխան դերանունների գործածության դեպքում փոխարինվում է **-եր**-ով (***Ձեռքներդ** հեռո՛ւ: = **Ձեր ձեռքերը** հեռո՛ւ: **Աչքներս** լույս: = **Մեր աչքը** լույս: **Մտքները** փոխել են: = **Իրենց մտքերը** փոխել են),* կամ լրացվողը գործածվում է եզակի թվով *(**Հագներին** շոր չունեին: = **Իրենց հագին** շոր չունեին: **Մոտները** փող չկա: = **Նրանց մոտ** փող չկա):*

25. Անձնական դերանվան սեռական հոլովի և ստացական հոդի համատեղ (միաժամանակյա) գործածությունը (**իմ գիրքս, քո խոսքդ**) արևելահայերենում թույլատրելի չէ: Դա բնորոշ է արևմտահայ գրական լեզվին: Թույլատրելի է դիմորոշ հոդի և անձնական դեր-

անվան համատեղ (միաժամանակյա) գործածությունը՝ **մենք՝ աշակերտներս, դուք՝ մասնակիցներդ**:

26. Ցուցական մի քանի դերանունների հոգնակին կազմվում է և՛ **-ք**, և՛ **-ներ** մասնիկների միջոցով՝ **այդպիսիք – այդպիսիները, ինչպիսիք – ինչպիսիները, որպիսիք – որպիսիները** ևն: Առաջինները առավել հատուկ են գրական-գրքային խոսքին և համեմատաբար քիչ են գործածվում:

27. Անձնական դերանունների 1-ին և 2-րդ դեմքերի են հարաբերակցվում 3-րդ դեմքի **մերոնք, ձերոնք** բառերը, որոնք մատնանշում են խոսողի կամ խոսակցի կողմից հանդես եկող խումբ՝ *Ձերոնք եկել են: **Մերոնք** դեռ չկան:* Խոսակցական լեզվում կան նաև **իմոնք, քոնոնք** բառերը (իմինները, քոները): Անեզական այս բառերը ենթարկվում են **-ց** հոլովման՝ **մերոնց, ձերոնց:**

28. Նա...., ով (ում, ումից, ումով) բառերը հարաբերակից դերանուններ են (*Խոսեց **նա, ով** տեղյակ էր գործից*): **Նա**-ն այդտեղ անձնանիշ դերանուն է. նույն կառույցում կարող է գործածվել ցանկացած անձնանիշ գոյական՝ *Խոսեց Վահանը, **ով** տեղյակ էր գործից:* Այսպիսի կառույցներում **որ**-ին զուգահեռ կարելի է գործածել նաև **ով** դերանունը: (*Խոսեց Վահանը, **որ//ով** տեղյակ էր գործից:* Նմանապես՝ *Խոսեց մեր ներկայացուցիչը, **որ//ով** տեղյակ էր գործից*): Բայց **այն** հարաբերյալի առկայության դեպքում հանձնարարելի է **որ** դերանվան գործածությունը, ինչպես՝ *Խոսեց մեր **այն** ներկայացուցիչը, **որ** տեղյակ էր գործից*):

ԲԱՌԱՑԱՆԿ[*]

ԴԵՐԱՆՈՒՆ

ամեն մարդ
ամեն մեկը մի գործ է անում, ամեն մեկս մի գործ է անում, ամեն մեկս մի գործ ենք անում
ամեն մի մարդ
այդպիսիք//այդպիսիները
այլ պատասխան (այլ պատասխանը*)
այլք (այլոք*)
բոլոր մարդիկ
երբ-վա, երբվան-ից
ինձանից//ինձնից, ինձանով//ինձնով *(ինձանում//ինձնում՝ հզվ.)*
ինչ-ինչ պատասխաններ (ինչ-ինչ պատասխան*, ինչ-ինչ պատասխանները*)
ի՞նչ խնդիր կա//ի՞նչ հարց կա (ինչո՞ւմն է բանը*)
ինչո՞ւ//ինչի՞ համար (ինչո՞ւ համար*)
ինչպիսիք//ինչպիսիները
ինքդ–ինքներդ, դու ինքդ, դուք ինքներդ
ինքը–իրենք (*ինքները՝ հզվ.),* նա ինքը, նրանք իրենք *(նրանք ինքները՝ հզվ.)*
ինքս–ինքներս, ես ինքս, մենք ինքներս
հարցն այն է//բանն այն է (նրանումն է*)
ձեզանից//ձեզնից, ձեզանով//ձեզնով *(ձեզանում//ձեզնում՝ հզվ.)*

---

[*] Աստղանիշով տրվածները սխալ կամ անհանձնարարելի տարբերակներ են:

մեզանից//մեզնից, մեզանով//մեզնով *(մեզանում//մեզնում՝ հզվ.)*
միևնույնն է (միևնույն է*)
մի քանի զինվոր//զինվորներ
յուրաքանչյուրը մի գործ է անում
յուրաքանչյուր մարդ
յուրաքանչյուրդ մի գործ է անում, յուրաքանչյուրդ մի գործ եք անում
յուրաքանչյուրս մի գործ է անում, յուրաքանչյուրս մի գործ ենք անում
նա, ով աշխատում է….
նույնպիսիք//նույնպիսիները
ոմն Արշակ, ոմն գործիչ (ոմն գործիչը*)
ոչ մեկը (ոչ մեկ*)
որևէ խնդիր (որևէ խնդիրներ*)
որևիցե խնդիր (խնդիրներ*)
որոշ - որոշներ
որպիսիք//որպիսիները
ուրիշ պատասխան (ուրիշ պատասխանը*)
քեզանից//քեզնից, քեզանով//քեզնով *(քեզանում// քեզնում՝ հզվ.)*

3.1.5. *ԲԱՅ*

1. -չ- սոսկածանցով բայերը թվով քիչ են և անկայուն, թեև շատ գործածական են: Դրանցից **դիպչել, թռչել, կորչել, կպչել, փախչել, հանգչել** բայերը գրական լեզվում պահպանել են **-չ-** ներածանցով բայի հատկանիշները: Խոսակցական լեզվում հանդիպող **դիպչեցի, դիպչեց** և նման ձևերը գրական լեզվում գրեթե գործածություն չունեն և չեն հանձնարարվում: Երկու բայեր՝ **սառչել, ուռչել,** հանդիպում են զուգաձևություններով: **Ուռչել** բայի անցյալ կատարյալի արմատական ձևերը՝ **ուռա, ուռար** ևն, որոնք կանոնական են համարվում, գործածությունից դուրս են մղվում. ակնհայտորեն տարածում ունեն այդ բայի նաև ցոյական ձևերը՝ **ուռեցի, ուռեցիր** (սկզբնաձև՝ **ուռել**) ևն: Անկատար ներկայում և անցյալում զուգահեռ գործածություն ունեն **ուռում** և **ուռչում** տարբերակները: **Սառչել** բայի համար ևս գործածվող տարբերակային ձևեր են՝ **սառչում եմ, սառա** (սկզբնաձև՝ **սառչել**), **սառում եմ//սառեցի** (սկզբնաձև՝ **սառել**): Գրական լեզվում հանձնարարելի են առաջինները: **Հալչել**-ը, **փլչել**-ը ունեն նաև **-վ-** ածանցով տարբերակներ (**հալվել, փլվել**), որոնք կանոնական են և ավելի տարածված:

2. ● -եցն- ածանց ստանում են **ե** խոնարհման պարզ, ինչպես նաև **-են-** սոսկածանց ունեցող բայերը՝ *խմել – խմեցնել, հագենալ – հագեցնել,* **● —ացն-** ածանցը ստանում են **ա** խոնարհման պարզ և **-ան-** սոսկածանց ունեցող բայերը՝ *խաղալ – խաղացնել, հեռանալ – հեռացնել,* **● -ցն-** ածանցը ստանում են **-ն-** և **-չ-** սոսկ-

ածանց ունեցող բայերը՝ *հասնել – հասցնել, տեսնել – տեսցնել* (խսկց.), *թռչել – թռցնել, կորչել – կորցնել*՝ բացառությամբ մի քանի դեպքի՝ *պրծնել – պրծացնել* (խսկց.), *իջնել – իջեցնել, հալչել – հալեցնել, սառչել – սառեցնել, ուռչել – ուռեցնել*:

3. Սխալ են պատճառական ածանցով բայերի անցյալ կատարյալի ավելորդ **-եց**-ով կեղծ գրական ձևերը՝ **խաղացրեցի, թռցրեցի, մոտեցրեցի**: Ճիշտ ձևերն են՝ **խաղացրի, թռցրի, մոտեցրի**:

4. Խոսակցական լեզվում **ե** խոնարհման պարզ բայերից հաճախ պատճառական են կազմում ոչ թե **-եցն**-ածանցով՝ **խոսեցնել, քնեցնել, բռնեցնել, գժվեցնել, հաչեցնել, երգեցնել** ևն, այլ **-ացն-** ածանցով (**խոսացնել, քնացնել, հարմարացնել, հաջողացնել, ծաղկացնել, վազացնել, հիշացնել, խմացնել, երգացնել** ևն), որոնք սխալ, մերժելի ձևեր են: Դրան հակառակ՝ **-ան-** սոսկածանցով բայերից **-եցն-** ածանցով երբեմն կազմում են կեղծ գրական ձևեր՝ **մգանալ**→մգեցնել (←**մգացնել**), **հնանալ**→հնեցնել (←**հնացնել**), **խոնավանալ**→խոնավեցնել (←**խոնավացնել**), **ամայանալ**→ամայեցնել (←**ամայացնել**), **խլանալ**→խլեցնել (←**խլացնել**), **խստանալ** →խստեցնել (←**խստացնել**): Սխալ ձևեր են նաև՝ *մոտացնել* (←**մոտեցնել**←**մոտենալ**), *վախացնել* (←**վախեցնել**←**վախենալ**), *սառացնել* (←**սառեցնել**←**սառչել**), *հալացնել* (**հալեցնել**←**հալչել//հալվել**), *ուտացնել* (←**կերցնել//ուտեցնել**←**ուտել**), *հեռվանալ/հեռվացնել* (**հեռացնել**←**հեռանալ**):

5. Կան դեպքեր, երբ **-եցն-** և **-ացն-** ածանցներով հոմա-

նիշ բայահիմքերից կազմվում են զուգահեռ ձևեր՝ **սպիտակեցնել** (←սպիտակել) և **սպիտակացնել** (←սպիտականալ), **նիհարեցնել** (←նիհարել) և **նիհարացնել** (←նիհարանալ), **հարթեցնել** (←հարթել) և **հարթացնել** (←հարթանալ): Երկրորդ տարբերակները հնարավոր է դիտել նաև որպես սխալակազմություններ՝ **սպիտակել, նիհարել, հարթել** ձևերից:

6. Մի քանի բայեր չեզոք են թե՛ **-վ-** ածանցով, թե՛ առանց դրա՝ **բռնկ(վ)ել, խոպոտ(վ)ել, հակառակ(վ)ել, համաձայն(վ)ել, փար(վ)ել** են: Այդպես են նաև մի քանի այլ բայեր, որոնց **-վ-**ով ձևերը խոսակցական են և մերժելի՝ **դեղն(վ)ել, զուգադիպ(վ)ել, խաչակնք(վ)ել, հոժար(վ)ել, ճաքճք(վ)ել, պապակ(վ)ել, վիճ(վ)ել, տափակ(վ)ել, տուժ(վ)ել, ցամաք(վ)ել, քծն(վ)ել, բռնագաղթ(վ)ել** են:

7. Վիճակ, հետևանք ցույց տվող որոշ թվով կրավորական բայերի հարակատար դերբայը (**մաշված, կառուցված, ավարտված, հնձված** են) երբեմն գործածվում է որպես ձևաբայ՝ օժանդակ բայի հատկապես 3-րդ դեմքի հետ կազմելով, այսպես կոչված, հարակատար ժամանակ: Օր.՝ *Այդ մասին ոչինչ **չի գրված**:* Դրան համարժեք է բաղադրյալ ստորոգյալով կառույցը՝ *Այդ մասին ոչինչ **գրված չէ**,* որտեղ նույն հարակատար դերբայը ստորոգելի է:

8. Համակատար դերբայի փոխարեն խոսակցական լեզվում հաճախ գործածվում է անորոշի բացառական հոլովաձևը (*Տուն գնալուց (←**գնալիս**) հանդիպեցի նրան*): Գրական լեզվում սա մերժելի երևույթ է:

9. Հարկադրական եղանակի բայաձևերի ժխտականում **չ** մասնիկը սովորաբար դրվում է **պիտի (պետք է)** եղանակիչի վրա՝ **չպիտի երգեմ, չպետք է ասի**, բայց կարող է դրվել նաև բայաձևի հիմնական մասի վրա՝ **պիտի չերգեմ, պետք է չասի**:

Սխալ է **չ**-ի կամ **կ**-ի հավելումը հարադիր բայերի ոչ բայական բաղադրիչին՝ ***չդուրս գամ, չման գաս*** են:

10. Արգելական հրամայականի **մի՛** ժխտական մասնիկն ավելանում է բոլոր բայերի դրական հրամայականի ձևերի վրա՝ **գրի՛ր – մի՛ գրիր, կարդա՛ – մի՛ կարդա, հագի՛ր – մի՛ հագիր, կարդացե՛ք – մի՛ կարդացեք, մոտեցի՛ր – մի՛ մոտեցիր, խոսեցրո՛ւ – մի՛ խոսեցրու, խոսեցրե՛ք – մի՛ խոսեցրեք** են: Հաճախ արգելական հրամայականի համար նշվում են զուգաձևեր, որոնք հնացած են և գործածությունից աստիճանաբար դուրս են մղվում, ինչպես՝ **մի՛ կարդար, մի՛ կարդաք, մի՛ հագնիր, մի՛ հագնեք, մի՛ մոտենար, մի՛ մոտենաք, մի՛ հուսար, մի՛ հուսաք, մի՛ լվար, մի՛ լվաք** են:

11. Ե խոնարհման պարզ և կրավորական բայերի հրամայականի դրական խոնարհման հոգնակիում **-(եց)եք**-ով վերջացող ձևերը՝ **գրե՛ք** կամ **գրեցե՛ք,** արգելականում ունենում են **-եք** վերջավորությունը՝ **մի՛ գրեք, մի՛ խաբվեք**: Սխալ են ավելորդ **-եց**-ով ձևերը՝ **մի՛ գրեցեք, մի՛ խաբվեցեք**:

12. Բանալ, բառնալ բայերը ներկայումս հնացած են և անգործածական: Դրանց փոխարեն գործածվում են **բացել, բարձել** բայերը, որոնցից երկրորդը կանոնավոր է:

13. Գիտենալ և **կենալ** բայերի ուղիղ և թեք ձևերը

դուրս են մղվել գործածությունից և գրական լեզվում փոխարինվել են համապատասխանաբար **իմանալ** և **մնալ** բայերի ուղիղ և թեք ձևերով, ոչ թե՝ **գիտեցել, գիտեցած, գիտեցի՛ր//գիտցի՛ր, մի՛ գիտեցիր//մի՛ գիտցիր, մի՛ գիտենաք//մի՛ գիտեցեք** են, այլ՝ **իմանալ, իմացած, իմացի՛ր, մի՛ իմացիր, մի՛ իմացեք** են, ոչ թե՝ **կա՛ց, կեցի՛ր, կացե՛ք, մի՛ կաց**, այլ՝ **մնա՛, մնացե՛ք, մի՛ մնա**: Նմանապես **զարկել** բայը աստիճանաբար իր տեղը զիջում է **խփել** և **հարվածել** բայերին:

14. Մի շարք անկանոն և պակասավոր բայեր անցյալ կատարյալում ունեն զուգաձևեր՝ կազմված ներկայի կամ անցյալի հիմքից՝ **ասացի//ասի, արեցի//արի, բացեցի//բացի, բերեցի//բերի, դրեցի//դրի, թողեցի//թողի, լացեցի//լացի, տվեցի//տվի**: Դրանցից գրական լեզվում գործածական և հանձնարարելի են առաջինները՝ անցյալի ցոյական հիմքից կազմված ձևերը: Երկրորդները հնացած են և ունեն ընդգծված խոսակցական երանգ:

15. Անկանոն և **պակասավոր** բայերի խոնարհման ընդհանուր պատկերը անցյալ կատարյալում և հրամայականում այսպիսին է[9]:

[9] Խոսակցական երանգ ունեցող ձևերը նշված են մեկ աստղանիշով (*), հնացած, անգործածական կամ սխալ ձևերը՝ երկու (**):

						Ե խոնարհում			
						պարզ			
պարզ ժամանակաձևեր	սահմանական եղանակ	անցյալ կատարյալ	եզակի	I դ.	1	ասացի ասեցի* ասի*	կերա	զարկեցի զարկի*	բացեցի բացի*
				II դ..	2	ասացիր ասիր*	կերար	զարկեցիր զարկիր*	բացեցիր բացիր*
				III դ..	3	ասաց	կերավ	զարկեց	բացեց
			հոգնակի	I դ..	4	ասացինք ասինք*	կերանք	զարկեցինք զարկինք*	բացեցինք բացինք*
				II դ.	5	ասացինք ասիք*	կերաք	զարկեցիք զարկիք*	բացեցիք բացիք*
				III դ.	6	ասացին ասին*	կերան	զարկեցին զարկին*	բացեցին բացին*
	հրամայական եղանակ	դրական		եզ.	7	ասա՛	կե՛ր	զարկի՛ր զա՛ րկ*	բացի՛ր բա՛ց
				հոգ.	8	ասե՛ք ասացե՛ք	կերե՛ք	զարկե՛ք զարկեցե՛ք**	բացե՛ք
		արգելական		եզ.	9	մի՛ ասա	մի՛ կեր մի՛ ուտիր**	մի՛զարկիր մի՛ զարկ*	մի՛ բացիր մի՛ բաց
				հոգ.	10	մի՛ ասեք	մի՛ կերեք մի՛ ուտեք**	մի՛ զարկեք	մի՛ բացեք

	Ե խոն.	Ա խոնարհում			Ե խոնարհում	
		պարզ			-ն- սոսկածանցով	
1	բերեցի բերի*	եկա	լացեցի լացի*	տվեցի տվի*	արեցի արի*	դրեցի դրի*
2	բերեցիր բերիր*	եկար	լացեցիր լացիր*	տվեցիր տվիր*	արեցիր արիր*	դրեցիր դրիր*
3	բերեց	եկավ	լացեց	տվեց	արեց	դրեց
4	բերեցինք բերինք*	եկանք	լացեցինք լացինք*	տվեցինք տվինք*	արեցինք արինք*	դրեցինք դրինք*
5	բերեցիք բերիք*	եկաք	լացեցիք լացիք*	տվեցիք տվիք*	արեցիք արիք*	դրեցիք դրիք*
6	բերեցին բերին*	եկան	լացեցին լացին*	տվեցին տվին*	արեցին արին*	դրեցին դրին*
7	բե՛ր	արի՛ եկ*	լա՛ց	տո՛ւր	արա՛	դի՛ր
8	բերե՛ք	եկե՛ք	լացե՛ք	տվե՛ք	արե՛ք	դրե՛ք
9	մի՛ բեր	մի՛ արի մի՛ եկ* մի՛ գա*	մի՛ լաց մի՛ լա** մի՛ լար** մի՛ լացիր*	մի՛ տուր	մի՛ արա մի՛ անիր**	մի՛ դիր մի՛ դնիր**
10	մի՛ բերեք	մի՛ եկեք մի՛ գաք**	մի՛ լացեք մի՛ լաք **	մի՛ տվեք	մի՛ արեք մի՛ անեք**	մի՛ դրեք մի՛ դնեք **

	Ե խոնարհում					
	-ն- սոսկածանցով					
1	տարա	առա	ելա	տեսա	թողեցի թողի*	եղա
2	տարար	առար	ելար	տեսար	թողեցիր թողիր*	եղար
3	տարավ	առավ	ելավ	տեսավ	թողեց	եղավ
4	տարանք	առանք	ելանք	տեսանք	թողեցինք թողինք*	եղանք
5	տարաք	առաք	ելաք	տեսաք	թողեցիք թողիք*	եղաք
6	տարան	առան	ելան	տեսան	թողեցին թողին*	եղան
7	տա՛ր	ա՛ռ	ե՛լ ելի՛ր**	տե՛ս	թո՛ղ	եղի՛ր
8	տարե՛ք	առե՛ք	ելե՛ք	տեսե՛ք	թողե՛ք	եղե՛ք
9	մի՛ տար մի՛ տանիր**	մի՛ առ, մի՛ առնիր**	մի՛ ել մի՛ ելիր** մի՛ ելնիր**	մի՛ տես մի՛ տեսնիր **	մի՛ թող մի՛ թողնիր**	մի՛ եղիր մի՛ լինիր**
10	մի՛ տարեք մի՛ տանեք**	մի՛ առեք մի՛ առնեք**	մի՛ ելեք մի՛ ելնեք**	մի՛ տեսեք մի՛ տեսնեք **	մի՛ թողեք մի՛ թողնեք**	մի՛ եղեք, մի՛ լինիք**

3.1.6. *ՄԱԿԲԱՅ: ԿԱՊ: ՇԱՂԿԱՊ*

1. Ամենևին, բնավ, բոլորովին, դույզն-ինչ, երբեք, էլ մակբայները գործածվում են միայն ժխտական բայերի հետ՝ ***ամենևին*** *հարկ չկա,* ***բոլորովին*** *հարմար չէ,* ***դույզն-ինչ*** *պատկերացում չուներ,* ***էլ*** *չխոսենք* ևն:

2. Արևմտահայերենում **այլևս** մակբայը **արդեն** իմաստով գործածվում է նաև դրական խոնարհման բայերի հետ՝ *Ես եւ իմ քոյրս* ***այլեւս*** *Հայկազեան կը սորվինք:* Հավանաբար այդ ազդեցությամբ արևելահայերենում սկսել ենք գործածել նաև **այլևս + դրական խոնարհում** կառույցը՝ *Դա* ***այլևս*** *կատարված իրողություն է:* Գրական արևելահայերենում այս գործածությունը հանձնարարելի չէ:

3. Շնորհիվ, արդյունքում, պատճառով և **հետևանքով** կապերն ու կապական բառերը, նշելով հիմունքի, պատճառի, հետևանքի իմաստներ, միաժամանակ վերաբերմունք են արտահայտում. առաջին երկուսը՝ դրական, վերջին երկուսը՝ չեզոք կամ բացասական: Մեկը մյուսի փոխարեն գործածվելիս առաջանում է իմաստային անճշտություն: Անճիշտ հետևյալ նախադասությունը՝ *Երկու երկրների միջև քաղաքական առճակատումն ավելի խորացավ, որի* ***արդյունքում*** *լարված իրավիճակ ստեղծվեց սահմանամերձ շրջաններում:* Ընդգծված բառի փոխարեն պետք է գործածվեր **հետևանքով** հոմանիշը:

4. Հետ, մոտ, վրա, պես, նման կապերը **ես, դու, մենք, դուք** դերանունների հետ կապակցվում են ոչ թե սեռական, այլ տրական հոլովաձևերով՝ **ինձ նման, մեզ**

պես, քեզ հետ, ձեզ վրա են: **Մոտ, վրա** կապերի թեք ձևերի հետ նշված դերանունները լինում են սեռական հոլովով՝ **իմ մոտից, ձեր վրայով** են: Վերջին շրջանում, սակայն, **իմ մոտ, քո վրա, ձեր հետ, մեր նման** կապակցությունները գնալով լայն տարածում են ստանում ընդհանուր խոսակցական լեզվում և ընդունելի ձևեր կարող են համարվել նաև բանավոր գրական լեզվում:

5. Թեք հոլովներով կապվող բառ պահանջող մի շարք կապեր և կապական բառեր (**առանց, առթիվ, չափ, նախքան, որպես, չհաշված, մասին, բացի, ժամանակ** են) գործածվում են **այս, այդ, այն** ցուցական դերանունների նաև ուղիղ ձևերի հետ՝ **բացի այդ** *(այդ առթիվ)*, **այն մասին, առանց այդ էլ, այն ժամանակ:**

6. Հանձինս կապը պահանջում է հոգնակի թվով խնդիր կամ կապի բազմակի խնդիր՝ **հանձինս աշխատակիցների**, **հանձինս տնօրենի և փոխտնօրենի**, իսկ **հանձին** կապը՝ եզակի թվով կապի խնդիր՝ **հանձին տնօրենի**:

7. Ի թիվս կապը պահանջում է հոգնակի թվով կապի խնդիր՝ **ի թիվս սովորողների, ի թիվս այլոց**:

8. Ի դեմս կապը գործածվում է և՛ եզակի, և՛ հոգնակի թվով գոյականների հետ (բայց միայն անձնանիշ կամ անձի առումով վերցված)՝ **ի դեմս գործընկերների//ի դեմս գործընկերոջ,** բայց ոչ՝ **ի դեմս հրամանագրի**: **Ի թիվս, ի փառս, ի հեճուկս, ի դեմս** կապերը չունեն առանց **ս** վերջնամասնիկի ձևեր:

9. Հետ կապը **ծանոթանալ** բառի հետ գործածվելիս արտահայտում է փոխադարձության իմաստ: Եթե կապ-

վող բառը իրի անուն է, ապա, պարզ է, փոխադարձության մասին խոսք լինել չի կարող: Հետևաբար այդ դեպքում գոյականը պետք է գործածել միայն սեռական–տրական հոլովով՝ առանց **հետ** կապի՝ **ծանոթանալ** *փաստաթղթերի հետ* ⇐ **ծանոթանալ փաստաթղթերին**, *ծանոթանալ փաստերի հետ* ⇐ **ծանոթանալ փաստերին**:

10. Բացի կապը պահանջում է բացառականով կապվող բառ, դրվում է և՛ դրանից առաջ, և՛ հետո՝ **բացի նշվածից//նշվածից բացի:** Սխալ են՝ **բացի նշվածը, բացի ասվածը:**

11. Առանց կապը պահանջում է սեռական–տրական հոլովով կապվող բառ՝ **առանց պատասխանի, առանց զգուշացման** կամ **զգուշացնելու** (սխալ է՝ *առանց պատասխան, առանց զգուշացնել*)**:**

12. Մեջ կապը ցույց է տալիս առարկայի կամ երևույթի ներսը, իսկ **միջև** կապը երկու և ավելի առարկաների կամ երևույթների փոխհարաբերությունը: Սխալ է մեկը մյուսի փոխարեն գործածելը: Ճիշտ են՝ *Կուսակցությունների* ***միջև*** *կռիվ է ընկել: Կուսակցության* ***մեջ*** *տարաձայնություններ կան:*

13. Փոխանակ և **փոխարեն** կապերից առաջինը դրվում է կապվող բառից առաջ (նախադրություն է), իսկ երկրորդը՝ կապվող բառից հետո (հետադրություն է): Սխալ է դրանց՝ մեկը մյուսի դիրքում գործածելը. *ընկերոջ* ***փոխարեն*** (բայց ոչ՝ *փոխարեն ընկերոջ*), ***փոխանակ*** *խոսելու* (բայց ոչ՝ *խոսելու փոխանակ*):

14. Որ և **որպեսզի** շաղկապները իրար կարող են փո-

խարինել միայն այն դեպքում, երբ գլխավորին են կապում նպատակի պարագա երկրորդական նախադասություն՝ *Ներկայացուցիչներ են եկել,* ***որ (= որպեսզի)*** *հարցի քննարկումը նախապատրաստեն:* Այլ դեպքերում **որպեսզի**-ն չի կարող փոխարինել **որ**-ին, ինչպես՝ *Առաջարկություն է եղել (ինչի՞),* ***որպեսզի*** *(⇐* ***որ****) նախագծի քննարկումը տեղափոխվի հաջորդ եռօրյա: Անհրաժեշտ է (ի՞նչ),* ***որպեսզի*** *(⇐* ***որ****) ակտիվ մասնակցություն ապահովեք:*

15. Թե, որ հոմանիշ շաղկապներից **որ**-ը հաստատական նշանակություն ունի, օր.՝ *Պարզվեց,* ***որ*** *նա անմեղ է,* **թե**–ն՝ առավելապես կասկածական, ենթադրական՝ *Կարծում էի,* ***թե*** *դրանով գործը կավարտվի:* Հարցական դերանուն պարունակող երկրորդական նախադասությունը գլխավորին կապվում է **թե** շաղկապով՝ *Չեմ կարող ասել,* ***թե*** *նա ինչով է զբաղված:* Չի հանձնարարվում՝ *Ասաց,* ***թե*** *գալու է:*

16. Ոչ թե…., այլ, ոչ միայն…., այլև զուգադիր շաղկապներն ունեն իմաստային և կիրառական տարբերություններ: Դրանց երկրորդ բաղադրիչները (**այլ, այլև**) երբեք չեն կարող իրար փոխարինել: Հետևաբար պիտի գրել՝ ***Ոչ միայն*** *մասնակցել է գործողություններին,* ***այլև*** *ակտիվություն է դրսևորել:* Բայց ոչ երբեք՝ ***Ոչ միայն*** *մասնակցել է գործողություններին,* ***այլ*** *ակտիվություն է դրսևորել:* (Հիշենք նաև, որ ճիշտ չէ **ոչ թե…., այլ** շաղկապի **այլ** բաղադրիչի վրա **բուրթ** դնելը):

ԲԱՌԱՅԱՆԿ

ամեննին – ամեննին պարզ *չէ* (ամեննին պարզ է*)

այլևս – այլևս պարզ չէ//այլևս պարզ է

անհրաժեշտ – անհրաժեշտ է (ի՞նչ), որ…., (անհրաժեշտ է, որպեսզի….*)

առանց – առանց պատասխան*ի* (առանց պատասխան*)

արդյունքում – հաղթանակի արդյունքում (ջրհեղեղի արդյունքում….*)

բացի – այդ//դրանից, այս//սրանից, այն//նրանից, բացի մյուսներ*ից* (բացի մյուսները*), բացի ընկերներ*ից* (բացի ընկերները*)

բնավ – բնավ պարզ *չէ* (բնավ պարզ է*)

բոլորովին – բոլորովին պարզ *չէ* (բոլորովին պարզ է*)

դույզն-ինչ – դույզն-ինչ պարզ *չէ* (դույզն-ինչ պարզ է*)

էլ – էլ պարզ *չէ* (էլ պարզ է*)

ի դեմս – ի դեմս տնօրենի (անձ) (ի դեմս շինության* (ոչ անձ)

ծանոթանալ – ծանոթանալ հարցին (ոչ անձ), ծանոթանալ տնօրենի հետ (անձ)

կրակել – կրակել թիրախին (ոչ անձ), կրակել հանցագործի վրա (անձ)

համամիտ լինել – համամիտ լինել ընկերոջ հետ (անձ), համամիտ լինել տեսակետին (ոչ անձ) (տեսակետի հետ*)

հաղորդակցվել – մշակույթին (ոչ անձ), հաղորդակցվել գործընկերոջ հետ (անձ)

համար – ինձ համար, քեզ համար, մեզ համար, ձեզ համար (իմ համար, քո համար, մեր համար, ձեր համար)

---

* Աստղանիշով տրվածները սխալ կամ անհանձնարարելի տարբերակներ են:

հանդիպել – հանդիպել դժվարությունների (ոչ անձ), հանդիպել ուսանողի//հանդիպել ուսանողի հետ (անձ)

հանձին – հանձին տնօրենի, բայց՝ հանձինս տնօրեն***ներ***ի (հանձինս տնօրենի*)

հարմարվել – հարմարվել իրավիճակին (ոչ անձ), հարմարվել հարևանների հետ (անձ)

հետևանքով/պատճառով – ջրհեղեղի պատճառով//հետևանքով

հետ – ինձ հետ, քեզ հետ, մեզ հետ, ձեզ հետ (իմ հետ, քո հետ, մեր հետ, ձեր հետ)

մոտ – ինձ մոտ, քեզ մոտ, մեզ մոտ, ձեզ մոտ (իմ մոտ, քո մոտ, մեր մոտ, ձեր մոտ)

նման – ինձ նման, քեզ նման, մեզ նման, ձեզ նման (իմ նման, քո նման, մեր նման, ձեր նման)

ոչ թե…., այլ…. – ոչ թե նվագեց, այլ երգեց

ոչ միայն…., այլև…. – ոչ միայն նվագեց, այլև երգեց

պես – ինձ պես, քեզ պես, մեզ պես, ձեզ պես (իմ պես, քո պես, մեր պես, ձեր պես)

վրա – ինձ վրա, քեզ վրա, մեզ վրա, ձեզ վրա (իմ վրա, քո վրա, մեր վրա, ձեր վրա)

ցանկանում եմ (ինչ), որ…., (ցանկանում եմ, որպեսզի….*)

փոխանակ – փոխանակ գործ անելու

փոխարեն –գործ անելու փոխարեն

3. 2. ՇԱՐԱՀՅՈՒՍՈՒԹՅՈՒՆ

3.2.1. *ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ*

1. Ենթական և ստորոգյալը համաձայնում են թվով, նաև դեմքով: Ստորոգյալը եզակի թվով է դրվում, եթե ենթական եզակի է, այդ թվում՝ հավաքական կամ հոգնակերպ գոյական՝ *Ժողովուրդն է իրական ուժը: Միացյալ Նահանգները ներխուժել է Իրաք:*

2. Եթե եզակի թվով ենթական ունի **մեկից** մեծ թվականով կամ թվական դերանունով արտահայտված որոշիչ, ապա ստորոգյալը կարող է լինել և՛ **հոգնակի թվով՝** *Հանձնաժողովում քննարկման **են** դրվելու երկու հարց,* և՛ **եզակի՝** *Հանձնաժողովում քննարկման **է** դրվելու երկու հարց:*

3. Ստորոգյալը հոգնակի թվով է, եթե ենթական՝ • հոգնակի է՝ *Պետությունները «սառնասիրտ հրեշներ են»,* • *բազմակի է՝ Ո՛չ ԲՀԿ-ն և ո՛չ էլ ՀՅԴ-ն Ազգային ժողովի արտահերթ նիստին չեն մասնակցել:*

4. Բազմակի ենթակայի հետ ստորոգյալը լինում է եզակի թվով, եթե՝

• Ենթականերն իմաստով հարաբերակից են և միասին արտահայտում են մեկ հասկացություն՝ *Քննարկման ավարտից հետո **հարց ու պատասխան*** **չինչեց**:

• Ենթականերն ունեն **յուրաքանչյուր, ամեն (մի), ոչ մի** դերանուններով արտահայտված ընդհանուր որոշիչ՝ *Դատական քննության **յուրաքանչյուր մաս, հատված*** **ունի** *իր բովանդակությունը և նշանակությունը: **Ոչ մի արարք, հանցանք** այնքան քստմնելի* **չէ**, *որքան հո-*

գեկան հանցանքը:

• Նույն դեմքով ենթակաները կապված են **կամ**, **կա՛մ....**, **կա՛մ**, **ոչ թե**...., **այլ** շաղկապներից որևէ մեկով՝ *Կատարվածի համար պատժվելու է* ***կա՛մ*** *«BMW»-ի վարորդը,* ***կա՛մ*** *«Mercedes Benz»-ի:*

• Ենթականերից մեկը՝ նախորդում, մյուսը հաջորդում է ստորոգյալին՝ *Այդ ամենից ջինջ* ***հիշողություն*** *է մնացել և մի* ***կսկիծ****: Թե՛* ***զինվորն*** *է պատասխան տալու կատարվածի համար, թե՛* ***հրամանատարը****:*

5. Հոգնակի կամ բազմակի ենթակայի հետ գոյականով (կամ փոխանվանաբար գործածված բառով) արտահայտված ստորոգելին սովորաբար լինում է հոգնակի թվով *(****Դրանք*** *քննարկման ենթակա* ***ծրագրեր են****)*, բայց կարող է լինել նաև եզակի թվով, եթե՝

• Ենթական հարգական հոգնակի նշանակող անձնական դերանուն է՝ ***Դուք****, պարո՛ն դեսպան, մեր շահերի* ***պաշտպանն*** *եք այդ երկրում:*

• Ստորոգելին գնահատող իմաստ ունի և անհոգնական կամ անհաշվելի է՝ *Երիտասարդները մեր երկրի* ***ապագան*** *են:*

• Ստորոգելին շեշտում է իր արտահայտած առարկայի ոչ թե քանակը, այլ տեսակը՝ դրվելով անորոշ առումով՝ *Քո ցույց տված բոլոր ծառերը* ***կաղնի*** *էին:*

6. Դիմային համաձայնությունը արտահայտվում է բայի դիմային վերջավորություններով կամ հոդերով: 1-ին կամ 2-րդ դեմքի անձնական դերանունով արտահայտված կամ դիմորոշ հոդ (**ս** կամ **դ**) ունեցող

ենթակայի հետ ստորոգյալը լինում է համապատասխանաբար 1-ին կամ 2-րդ դեմքով՝ *(Ես)* ***Մտավորականս*** *չեմ կարող չմասնակցել այդ շարժմանը:* ***Ի՛նքդ*** *փորձիր կողմնորոշվել:* Մնացած դեպքերում ստորոգյալը լինում է 3-րդ դեմքով՝ *Մեկ* ***վկա*** *նշանակում է ոչ մի վկա:*

7. 1-ին և 2-րդ դեմքի անձնական դերանուն ստորոգելիի դեպքում հանգույցը դեմքով համաձայնում է դրան՝ *Այդ ամենի կազմակերպիչը* ***դու ես****:*

8. Տարբեր դեմքերով բազմակի ենթակաների դեպքում ստորոգյալը համաձայնում է առաջին դեմքի ենթակայի հետ (***Ես****, դու, նա* ***կմեկնենք***), դրա բացակայության դեպքում՝ երկրորդ դեմքի ենթակայի հետ (***Դու*** *և նա իրար նման* ***եք***), վերջինիս բացակայության դեպքում դրվում է երրորդ դեմքով (*Որոշ չգրված օրենքներ ու նորմեր ավելի զորեղ* ***են*** *գրվածներից*):

9. **Բուն բացահայտիչը** և **բացահայտյալը** համաձայնում են թվով, հոլովով, դեմքով, հաճախ նաև առումով՝ ***Մեզ՝ մասնակիցներիս****, պարգևատրելու են:* Դիմային համաձայնությունը կատարվում է անձնական դերանուններով և կամ դիմորոշ հոդերով: Օր.՝ ***Ձեզ՝ այլախոհներիդ****, շատերը հանդուրժել չեն կարողանում:* ***Ես****՝ երկրի անվտանգության* ***երաշխավորս****, իրավունք չունեմ չհարգելու այդ երկիրը, նրա արժեքները, նրա ժողովրդին: Մարզիկներիդ՝ մեր երկրի պատիվը* ***բարձրացնողներիդ****, ցավոք, պատշաճ ուշադրություն չի դարձվում:*

10. Բացահայտիչն ու բացահայտյալը երբեմն կարող են

չհամաձայնել՝

• թվով. *Ամենայն հոգատարությամբ պետք է վերաբերվենք **երեխաներին**՝ մեր երկրի **ապագային**: Զրկվեցինք մեր ամենամեծ **արժեքից**՝ մեր նախնիների **տարածքներից**:*

• հոլովով. *Ռընե Դեկարտը մեծ հաջողություններ է ունեցել գիտության ամենատարբեր **ոլորտներում**՝ **փիլիսոփայություն**, **բնագիտություն**, **մաթեմատիկա** են: Մեր **ընտանիքը** բաղկացած է չորս հոգուց՝ **ես, մայրս, հայրս ու եղբայրս**: Վարչության երեք **աշխատակիցներից**՝ **Վահանյան**, **Աբրահամյան**, **Նազարյան**, հաշվետվություն է ներկայացրել միայն մեկը:*

• դեմքով. *Արցախի ազատագրության համար **պայքարողներդ**՝ մեր նոր կյանքի **կերտողն** ու **ապավենը**, մշտապես և բոլոր ժամանակներում պիտի գնահատված լինեք:*

• առումով. *Հայաստանի բոլոր **քաղաքները**՝ **Վան**, **Բագավան**, **Կարին**, **Վաղարշապատ**, բռնված էին պարսից զորքերով: Ռազմաճակատ մեկնեցին **բոլորը**՝ **կին թե տղամարդ**:*

11. Մասնական բացահայտիչը (բացահայտյալին է միանում **որպես** կամ **իբրև** կապով և մասամբ է բացահայտում լրացյալի ով կամ ինչ լինելը՝ *Չարենցը՝ **որպես գրող**, հանրաճանաչ է*) բացահայտյալի հետ սովորաբար համաձայնում է թվով, հոլովով և որոշիչ հոդ չի ընդունում՝ *Վահանյանին՝ որպես հմուտ **դեկավարի**, պարգևատրեցին:* Մասնական բացահայտիչը բացահայտյալի նկատմամբ կարող է լինել նախադաս՝

Որպես ***կենսաթոշակառու՝ նա*** *օգտվում է մի շարք արտոնություններից:* Այս դեպքում բութը դրվում է բացահայտիչի վրա:

12. Մասնավորող պարագայական բացահայտիչը (ոչ թե գոյականական, այլ բայական անդամի լրացում է և մասնավորեցնում, ճշգրտում է լրացյալի ցույց տված որևէ պարագայական հատկանիշ՝ բայական որևէ անդամի ցույց տված գործողության կամ եղելության տեղը, ժամանակը, երբեմն՝ ձևը) և բացահայտյալը հոլովով և թվով կարող են համաձայնել, եթե երկուսն էլ արտահայտված են գոյականով կամ գոյականաբար գործածված որևէ այլ բառով՝ *Ընտրական տեղամասեր կլինեն բոլոր* ***բնակավայրերում՝ դպրոցական շենքերում****: Հյուրերը կժամանեն մոտ* ***մեկ շաբաթից՝ վեց օրից****: Բայց կարող են և չհամաձայնել՝ Հանդիպեցին* ***սահմանագծին՝ խրամատներում****: Հենց* ***այսպես՝ կանգնած****, զրուցում էինք:*

13. Մասնավորող պարագայական բացահայտիչը, ինչպես և բուն բացահայտիչը կարող են լինել ոչ միայն բազմակի, այլև կրկնակի, եռակի ևն, այսինքն՝ բացահայտիչն իր հերթին կարող է ունենալ բացահայտիչ՝ *Հերթական ժողովը կկայանա հաջորդ շաբաթ՝* ***հինգշաբթի օրը՝ աշխատանքից հետո՝ ժամը վեցին****:*

14. Հարաբերյալն ու հարաբերական բառը, որոնք կապակցում են գերադաս և ստորադաս նախադասություններ, սովորաբար համաձայնում են թվով՝ *Խոսեցի նրանց հետ, ովքեր ներկա էին:*

15. Որոշիչն ու որոշյալը թվով համաձայնում են հե-

տնյալ դեպքերում.

• գոյական որոշիչը բազմակի որոշյալի դեպքում լինում է հոգնակի, օր.՝ ***Պատգամավորներ*** *Եսայանն ու Պետրոսյանը հանդես եկան համատեղ հայտարարությամբ,*

• մի շարք դերանուն որոշիչներ որոշյալից պահանջում են միայն եզակի կամ միայն հոգնակի թիվ, օր.՝ ***Այս ու այն*** *կուսակցությունից…., **Բոլոր** մարդիկ…., **Որոշ** տվյալներ…., **Ինչ-ինչ** նկատառումներ….:*

3.2.2. *ԽՆԴՐԱՌՈՒԹՅՈՒՆ*

1. Կապակցվող անդամներից մեկը պայմանավորում է մյուսի քերականական ձևը: Այդպես են կապակցվում՝ • *խնդիրն ու լրացյալ բայը՝* ***Տեսա երազ*** *մի վառ,* • *անվանական պարագան ու ստորոգյալը՝* **Անցա փողոցով**, • *հատկացուցիչն ու հատկացյալը՝* ***Մեր պատասխանը*** *սա է,* • *կապն ու կապի խնդիրը՝* ***Քեզ նման*** *է մտածում:*

2. Առանձին բայերի (նաև որոշ ածականների) համար արդի հայերենում առաջ են եկել խնդրառական զուգաձևեր՝ **կարոտել** *հայրենիքին//հայրենիքը,* **դավանել** *սկզբունք//սկզբունքի,* **ձեռնարկել** *գործ//գործի,* **կրակել** *մեկի վրա//մեկին, մեկից//մեկին* հինգ **է պակաս, կառչել** *բազրիքից//բազրիքին,* **կառչել** *խոսքերից//խոսքերին,* **կախել** *պատին//պատից,* **խոչընդոտել** *զարգացումը//զարգացմանը,* **ուրախ եմ** քո *գալու համար//գալուն,*

բավարարել *պահանջները//պահանջներին,* **խթանել** *զարգացումը//զարգացմանը* են: Դրանցից մի քանիսը խոսակցական երանգ ունեն կամ հնացած են՝ **խոչընդոտել զարգացմանը, ձեռնարկել գործի, խթանել զարգացմանը, ուրախ եմ քո գալուն** են:

3. Մի շարք բայեր (**ծանոթանալ, մտերմանալ, բարեկամանալ, ընկերանալ, թշնամանալ, հաշտվել, գժտվել, վիճել, կռվել, խորհրդակցել**) կամ դրանց հիմքով կազմված բաղադրյալ ստորոգյալներ (**ծանոթ ենք, ընկեր են, համամիտ եմ** են) հանգման խնդիր են պահանջում **հետ** կապով կամ էլ միայն փոխադարձ դերանունով (իրար, միմյանց, մեկմեկու), եթե առկա է փոխադարձության հարաբերություն անձերի (կամ անձնավորված իրերի) միջև: Օր.՝ *Նոր տնօրենը սկսել է* ***ծանոթանալ աշխատակիցների հետ****: Անպայման* ***կխորհրդակցեք իրար հետ****: Մենք* ***իրար թշնամի չենք****:* Եթե հարաբերությունը փոխադարձ չէ (սովորաբար այդպես է, երբ խնդիրը անձ չէ), ապա հանգման խընդիրը լինում է առանց հետ կապի *(**Ծանոթ եմ քո կարծիքին**):*

4. Անորոշ դերբայով արտահայտված հետադաս հանգման և անջատման խնդիրները *(Տրամադրված եմ* ***աշխատելու****: Հրաժարվում է* ***ցուցմունք տալուց****)* կարող են դրվել նաև ուղղական–հայցական հոլովով *(Տրամադրված եմ* ***աշխատել****: Հրաժարվում է* ***ցուցմունք տալ****):* Հանձնարարելի են սեռական–տրականով ձևերը:

5. Սխալ է անորոշ դերբայի ուղիղ ձևի փոխարեն տրական հոլովի կիրառությունը, որը հակասում է գերա-

դաս բայի խնդրառությանը՝ *Թո՛ւյլ տվեք* ***բացակայելու*** *(⇐բացակայել): Շարունակե՛ք* ***պատասխանելու*** *(⇐ պատասխանել) հարցերին: Փորձում է* ***հակաճառելու*** *(⇐հակաճառել):*

6. Սխալ է **անորոշ դերբայի գործիական հոլովով** դերբայական դարձվածի և նախադասության ստորոգյալի **տարբեր ենթականերով** կառույցների կիրառությունը, ինչպես՝ ***Ապրելով Հայաստանում***՝ *կարևոր է հայոց լեզվի* ***իմացությունը:*** ***Լինելով մեծահարուստ***՝ *նրանից բարեգործություն են ակնկալում:*

7. Պետք է խուսափել **կերպավորիչ դիմավոր բայի** և նրա հետ **զուգադրվող անորոշ դերբայի** կրկնակի կրավորական կիրառություններից, ինչպես՝ ***Սկսվել է վերակառուցվել*** *ճանապարհը:* ***Շարունակվում է շարադրվել*** *պատմությունը:*

ԲԱՌԱՑԱՆԿ

Բառացանկում հիմնականում տրվում են հաճախ գործածվող այն բառերը, որոնք արդի գրական հայերենում կա՛մ ունեն խնդրառական տարբերակներ, կա՛մ ստեպ-ստեպ գործածվում են սխալ խնդրառությամբ: Աստղանիշով տրվում են խնդրառական անհանձնարարելի տարբերակները:

ամաչել – հանդիպելուց//հանդիպել
անհնար(ին) է – միանալ

անհրաժեշտ է – լսել (բայց՝ *անհրաժեշտություն կա լսելու*)
(ան)տեղյակ լինել – գործին//գործից
աշխատել – հասնել
առաջարկել – մասնակցել
առնչվել – հարցին
արգելել – անցնել
արտոնել – մտնել
ափսոսալ//ափսոսել – տարիները//տարիների համար
բաժանորդագրվել – ամսագրին//ամսագիր
բավարարել – պահանջները//պահանջներին
բողոքարկել – վճիռը
բողոքել – որոշման դեմ
գրոհել – դիրքերի վրա//դիրքերը
դադարել – խոսել//խոսելուց
դավաճանել – հայրենիքին//հայրենիքը
դավանել – սկզբունք//սկզբունքի
դասել – շարքը//շարքին//շարքում
դժվարանալ – մտածել
դիմավորել – արևածագը
երախտապարտ լինել – ընկերոջը
երդվել – պատժել
զգուշանալ – հանդիպելուց//հանդիպել
թողնել – արտահայտվել
թույլատրել /թույլ տալ – մեկնել
ի սպաս դնել – գործին
խաբել – եղբորը (սխալ է՝ *ստել եղբորը*)
խանգարել – աշխատանքը//աշխատանքին
խթանել – զարգացումը//զարգացմանը
խոչընդոտել – ընթացքը//ընթացքին
խոստանալ – փոխանցել

խոստովանել – հանցանքը (հանցանքի մասին*)
խուսափել – հանդիպելուց//հանդիպել
ծառայեցնել – աշխատանքին (աշխատանքում*/աշխատանքի մեջ*)
կախել – պատին//պատից
կապել – մտքին (մտքի հետ*)
կառչել – ժայռին//ժայռից
կարելի է – մտնել (բայց՝ *կարիք կա մտնելու*)
կարողանալ – հասնել
կարոտել – տունը//տանը
կպչել – պատին//պատից
կտակել – որդուն
կրակել – թշնամու վրա (սխալ է՝ *թշնամուն*)
հակադրվել – ընկերոջը
հաղթել – խաղում / պատերազմում (սխալ է՝ խաղը / պատերազմը)
համաձայնել – խոսել//խոսելու, կարծիքին (կարծիքի հետ*)
համընթաց/համաչափ է – զարգացմանը//զարգացման հետ
համապատասխանել – հագուստին (հագուստի հետ*)
համոզել – մնալ
հավասարվել – ընթացքին (ընթացքի հետ)
հարկ է – մոտենալ (բայց՝ *հարկ կա մոտենալու*)
հարկադրել – գործել
հարմարվել – տեղին (տեղի հետ*)
հարցնել – մեկին//մեկից
հնարավոր է – մոտենալ
հնարավորություն ունենալ – տեղեկանալու//տեղեկանալ
հոգ տանել – որևէ մեկի մասին (որևէ մեկին*)
հսկել – դիրքերը//դիրքերին
հրաժարվել – երգելուց //երգել

հրամայել – կատարել
մտադիր է – հեռանալ (բայց՝ *մտադրություն ունի հեռանալու*)
մտադրվել – գնալու//գնալ
ձգտել – հասնելու//հասնել
ձեռնարկել – գործ
ներողություն խնդրել – ուսուցչից
շարունակել – խոսել
շնորհակալ լինել – ծնողներին//ծնողներից
շնորհակալություն հայտնել – բարեկամին
ողջունել – ծրագիրը (ծրագրին*)
պայմանավորվել – գործոնով
պատրաստվել – գնալու//գնալ
պարտավորեցնել – վերադառնալ
պետք է – գնալ
սիրահարվել – աղջկան
սկսել – բացատրել
ստիպել – խոսել
վնասել – ձեռքը//հեղինակությանը
տենչալ – ազատություն//ազատության
ցանկանալ – տեսնել
ունկնդրել – երգը (բայց՝ *ունկնդիր լինել երգին*)
ուրախ է – տեսնել//տեսնելու համար//տեսնելու
փորձել – հրաժարվել

3.2.3. *ԱՌԴՐՈՒԹՅՈՒՆ*

1. Կա առդրության մի տարատեսակ, երբ լրացումն իր լրացյալին պարտադրում է որոշակի թիվ: Դա կոչվում է թվային կախում: Այսպես՝ **խումբ-խումբ, զույգ-զույգ, տեսակ-տեսակ, բազմաթիվ, տարբեր, զանազան, նորանոր, այլևայլ** և նման մի շարք ածականներ, **բոլոր, ինչ-ինչ** դերանունները պահանջում են հոգնակի թիվ ունեցող որոշյալ՝ *բոլոր* ***մարդիկ,*** *բազմաթիվ* ***գրքեր,*** *տեսակ-տեսակ* ***ծաղիկներ,*** *մի խումբ* ***մարդիկ,*** *նորանոր* ***ձեռքբերումներ,*** *տարբեր* ***կարծիքներ:***

2. Յուրաքանչյուր, ամբողջ, որևէ, որևիցե, ամեն, ամեն մի, մի դերանունները, **ցանկացած** ածականը պահանջում են եզակի թիվ ունեցող որոշյալ՝ *ամբողջ* **աշխարհը**, *որևէ* **մեկը**, *յուրաքանչյուր* **մասնակից**, *ցանկացած* **գործ**, *մի* **մարդ**:

3.2.4. *ՇԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ*

1. Նախադասության մեջ բառերի դասավորության կարգն է: Նախադասության որոշ անդամների դասավորությունը կայուն է, անշրջելի: Այդպես է բացահայտյալի և բուն բացահայտիչի շարադասությունը ***(Մենք՝ ներքոստորագրյալներս,*** *համաձայն չենք),* ինչպես նաև կապերի մեծ մասի և կապվող բառի շարադասությունը *(Խոսի՛ր* ***իմ փոխարեն: Փոխանակ գնայիր****....):* Որոշ անդամների շարադասությունը թեև որոշակի է, բայց

շրջելի է: Այդպես՝ որոշիչի և որոշյալի, հատկացուցիչի և հատկացյալի հակառակ շարադասությունը թույլատրելի է որոշ պայմաններում և կոչվում է շրջուն՝ ի տարբերություն սովորական շարադասության, օր.՝ *Արձանագրություն X վարչության հերթական նիստի:*

2. Որոշ անդամների շարադասությունը ազատ է, այսինքն՝ հավասարապես թույլատրելի է ցանկացած հերթականությամբ: Օր.՝ ստորոգյալի և ժամանակի պարագայի շարադասությունը՝ *Կմեկնենք երեկոյան://Երեկոյան կմեկնենք:*

3. Շրջուն կամ ազատ շարադասությունը հաճախ պայմանավորված է լինում տրամաբանական շեշտով:

4. Ուղիղ շարադասության դեպքում ենթական սովորաբար նախորդում է ստորոգյալին՝ ***Ընտրություններն սկսվել են:*** Այսպիսի կառույցներում ենթակայի և ստորոգյալի հակառակ շարադասությունը շրջուն է և կարող է հանդիպել միայն տրամաբանական շեշտի ազդեցությամբ կամ բանաստեղծական խոսքում՝ ***Սկսվել են ընտրությունները:*** Երբ հանգույցը մի դեպքում առկա է, մի այլ դեպքում՝ զեղչված, ապա ենթական կարող է լինել հետադաս՝ *Օդը այնքան ջինջ է, որ տեսանելի է դիմացի լեռան ծաղկած մասրենին, և լսելի՝ ծաղիկների մեջ մոլորված մեղվի հանդարտ բզզոցը*:

5. Կան կառույցներ, որոնցում ուղիղ շարադասությամբ ենթական հաջորդում է ստորոգյալին: Դա բնորոշ է հատկապես անորոշ առումով ենթակա պարունակող նախադասությանը. այսպիսի դեպքերում ենթակայի նախադաս դիրքն է շրջուն՝ *Քարոզարշավ է մեկ-*

նարկելու վաղ առավոտից: Ենթական պարտադիր հետադաս է լինում մեջբերվող խոսքի նկատմամբ միջադաս կամ վերջադաս հեղինակային խոսքում՝ *«Մի՛ դատիր, որ չդատվես», – ասում է Սուրբ գիրքը:*

6. Որոշիչը որոշյալի նկատմամբ սովորաբար լինում է նախադաս, բայց շրջուն շարադասությամբ կարող է լինել նաև հետադաս՝ *Ես չեմ շեղվել երբեք, երբեք ետ չեմ դարձել/Ակոսներից* ***երկար, և՛ քարքարոտ, և՛ դար:***

7. Եթե բազմակի որոշիչներից մեկը արտահայտված է որակական ածականով, իսկ մյուսը՝ հարաբերական, ապա վերջինս նախորդում է առաջինին՝ ***Փայտե դեղին քանոնս կոտրվել է:*** Այսպիսի տարաբնույթ բազմակի որոշիչները միմյանցից չեն տրոհվում և չեն կապակցվում **և, ու, կամ, թե** շաղկապներով:

8. Տարաբնույթ (տարադաս) բազմակի որոշիչների սովորական շարադասության նախընտրելի կարգը հետևյալն է. գոյական որոշիչ + դերբայ որոշիչ + ածականական դերանուն որոշիչ + հարաբերական ածական որոշիչ + թվական (կամ թվական դերանուն կամ թվանիշ ածական) որոշիչ + որակական ածական որոշիչ + որոշյալ: Օր.՝ *«****Կարմիր գրքում» տեղ գտած անտառային ո՞ր երեք գիշատիչ*** *գազանների մասին էր երեկվա դասը:* ***Իմ՝ ձեռքի փչացած ոսկյա*** *ժամացույցը վաճառել եմ:*

9. Շարադասության նշված կարգը կարող է խախտվել՝

• Հետադաս բազմակի որոշիչի դեպքում (*Դա մի փոքրամարմին կին էր՝* ***տարօրինակ, ծեր, առողջությունից զրկված, անհրապույր տեսքով և խորհրդավոր***): Այս-

պիսի հետադաս որոշիչները միմյանցից տրոհվում են ստորակետով կամ միանում են շաղկապով:

• Այն դեպքում, երբ առկա է որոշիչ–որոշյալի կայուն կապակցություն՝ տերմինի արժեքով (**ելից մատյան, խոսքի մաս, սեղանի թենիս, բացման խոսք, քրեական դատավարություն** ևն), որին նախորդում են մյուս բոլոր ազատ որոշիչներն ընդունված կարգով *(Մեզ ներկայացրե՛ք **նոր** ելից մատյանը: **Բոլոր** քրեական գործերը քննվում են նախ առաջին ատյանի դատարանում)*:

• Այն դեպքում, երբ բազմակի որոշյալներից ամեն մեկն ունի իր որոշիչը, իսկ բոլորը միասին ունեն ևս մի ընդհանուր որոշիչ, որը, անկախ իր արտահայտությունից, նախորդում է մյուս բոլորին *(Գրքում տեղ են գտել **բազմաթիվ** դաշնամուրային մանրանվագներ, մանկական երգեր, ժողովրդական խմբերգեր)*:

10. Հատկացուցիչը հատկացյալի նկատմամբ սովորաբար լինում է նախադաս, բայց շրջուն շարադասությամբ կարող է լինել նաև հետադաս. «**Գիրք ճանապարհի**»: Հատկացուցիչը կարող է պարտադրված շրջուն շարադասություն ունենալ, եթե ունի որոշիչ ստորադաս նախադասություն առանց հարաբերյալի: Օր.՝ *Դա **պարտականությունն** է յուրաքանչյուր **մարդու**, ով մտահոգ է երկրի ճակատագրով:*

11. Միտում է նկատվում անորոշ դերբայի սեռական–տրական հոլովաձևով արտահայտված հետադաս հատկացուցիչը **ուղղականով** գործածելու՝ *Ժամանակ չունեմ **մտածել** (←**մտածելու**): Կարիք չկա **հիշեցնել** (←**հիշեցնելու**):* Հանձնարարելի են սեռական–տրականով ձևերը:

12. Եթե հատկացուցիչի և հատկացյալի միջև լինում է գոյականով կամ գոյականաբար գործածված որևէ բառով արտահայտված (կամ էլ իր կազմում գոյական ունեցող) այլ անդամ, որը կարող է սխալմամբ ընկալվել իբրև հատկացյալ, ապա իմաստային հնարավոր շփոթը կանխելու համար հատկացուցիչի վրա բութ է դրվում՝ *Փավստոս մատենագիրը դժգոհ էր* ***Պապի՝ եկեղեցու դեմ գործած վարմունքներից:***

13. Հատկացուցիչի և հատկացյալի միջև եղած գոյականական դերանունը թեև իմաստային շփոթ չի առաջացնում, սակայն այդ դեպքում ևս թույլատրվում է հատկացուցիչի վրա բութ դնել՝ իբրև զուգաձևություն՝ *Տնօրենության() մեզ ուղարկած նամակի պատասխանը պատրաստ է:*

14. Երբ միևնույն լրացյալն ունենում է թե՛ որոշիչ(ներ), թե՛ հատկացուցիչ, ապա հատկացուցիչը նախորդում է որոշիչ(ներ)ին՝ ***Օրենքի բուն*** *բովանդակությունը այլ է:* Դերանունով արտահայտված հատկացուցիչը շրջուն շարադասությամբ երբեմն կարող է հաջորդել որոշիչին՝ *Սողում են դանդաղ օրերը անծիր, Կորած է մթնում* ***մոլոր իմ ուղին****...:*

15. Բացահայտիչը բացահայտյալի նկատմամբ սովորաբար լինում է հետադաս: Եթե դրանց տեղերը փոխենք, ապա կփոխվեն նաև պաշտոնները՝ *Երևանը՝ Հայաստանի մայրաքաղաքը:→Հայաստանի մայրաքաղաքը՝ Երևանը:*

16. Բացահայտյալը և բացահայտիչը երբեմն կապակցվում են **այսինքն**, **այն է** և այս կարգի՝ բացահայտ-

ման նշանակություն արտահայտող մեկնական բառերի միջոցով: Ավելի է ճշգրտվում ու որոշակի դառնում բացահայտիչը՝ *Սեպտեմբերի 21-ին,* ***այսինքն****՝ Անկախության օրը, կնքվելու է նոր պայմանագիր: Մեր բոլոր ջանքերը պիտի ծառայեն մեկ և նույն նպատակին,* ***այն է****՝ անաղարտ պահել մայրենին:*

17. Բացահայտիչը և բացահայտյալը կարող են ընդմիջված լինել ստորոգյալով և այլ անդամներով՝ «Դա միայն նա կարող էր արած լինել՝ մեր նախկին աշխատակիցը»:

18. Զուգադրական շաղկապի մասերը համադաս նախադասություններ կապակցելիս պետք է լինեն դրանց այն մասերի սկզբում, որոնք հակադրվում են միմյանց: Դրանց կարող են նախորդել նախադասությունների միայն ընդհանուր անդամները: Օր.՝ «Գործն ուղարկվելու է **ոչ թե** Վճռաբեկ դատարան, **այլ** քննվելու է վերաքննիչ դատարանում». այստեղ շաղկապի **ոչ թե** մասը պետք է լինի **ուղարկվելու է** ստորոգյալից առաջ, այսպես՝ «Գործը **ոչ թե** ուղարկվելու է Վճռաբեկ դատարան, այլ քննվելու է վերաքննիչ դատարանում»:

ՀԱՄԱՌՈՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

անձն. – անձնանուն
աշխգ. – աշխարհագրական
աստղգ. – աստղագիտություն
արհստ. – արհեստավորանիշ
արվ. – արվեստագիտական
բանկ. – բանկային
բժշկ. – բժշկագիտական
բսբ. – բուսաբանական
բրբռ. – բարբառային
գիտ. – գիտական
գրկգ. – գրականագիտական
դվնգ. – դիվանագիտական
երաժշտ. – երաժշտական
երկրբ. – երկրաբանական
ևն – և այլն
էլ. – էլեկտրոնային
թտրգ. – թատերագիտական
ինֆորմ. – ինֆորմատիկա
իրավբ. – իրավաբանական
լզվբ. – լեզվաբանական
խոհր. – խոհարարական
խսկց. – խոսակցական
կենսբ. – կենսաբանական
կրոն. – կրոնական
հզվ. – հազվադեպ
համկրգչ. – համակարգչային
համտ. – համեմատել
հնագ. – հնագիտություն
հնց. – հնացած
հոգբ*.* – հոգեբանական
ճարտգ. – ճարտարագիտական
մաթ. – մաթեմատիկական
մարզ. – մարզական
ռազմ. – ռազմական
տեխ. – տեխնիկական
տնտսգ. – տնտեսագիտական
տրամբ. – տրամաբանություն
փիլ. – փիլիսոփայական
փխբ. – փոխաբերական
ք. – քաղաք
քիմ. – քիմիական
քղքգ. – քաղաքագիտական
օդերևութ. – օդերևութաբանական
օպտ. – օպտիկական
ֆիզ. – ֆիզիկական
ֆին. – ֆինանսական

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Երկու խոսք 3

1. ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1.1. Ձայնավորների, ձայնավորական զուգորդումների և ձայնեղ բաղաձայնների արտասանությունը 8

Բառացանկ (ձայնեղ բաղաձայնների արտասանությունը) 14

1.2. Տառադարձություն 18

Բառացանկ 21

1.3. Հնչյունափոխություն 23

Բառացանկ 26

1.4. Շեշտ 36

2. ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

2.1. Հապավումներ և համառոտագրություններ 38

2.2. Օտար բառեր 44

Բառացանկ 46

3. ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

3.1. Ձևաբանություն 139

3.1.1. Գոյական անուն. գոյականի թիվը 139

Բառացանկ 146

3.1.2. Գոյականի որոշյալ և անորոշ առումներ 160

3.1.3. Գոյականի հոլով և հոլովում 161

Բառացանկ 172

3.1.4. Աճական: Թվական: Դերանուն..... 178
Բառացանկ 185

3.1.5. Բայ 187
3.1.6. Մակբայ: Կապ: Շաղկապ 195
Բառացանկ 199

3.2. Շարահյուսություն..... 201
3.2.1. Համաձայնություն..... 201
3.2.2. Խնդրառություն 206
Բառացանկ 208

3.2.3. Առդրություն 212
3.2.4. Շարադասություն 212
Համառոտագրություններ 218

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Ո Ւ Ղ Ե Ց Ո Ւ Յ Ց

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ

- *ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ*
- *ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ*
- *ՔԵՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ*

ԳԻՐՔ Ա

Համակարգչային ձևավորումը՝ Կ. Չալաբյանի
Կազմի ձևավորումը՝ Ա. Պատվականյանի
Հրատ. սրբագրումը՝ Մ. Հովհաննիսյանի

Տպագրված է «Հայկարլի» ՍՊԸ-ում:
ք. Երևան, Կիևյան 18/6:

Ստորագրված է տպագրություն՝ 06.10.2017:
Չափսը՝ 60x84 $^{1}/_{16}$: Տպ. մամուլը՝ 13,875:
Տպաքանակը՝ 300:

ԵՊՀ հրատարակչություն
ք. Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1
www.publishing.am